



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



LGN

✓ 1104

64.

1999



Գ Ի Ը Գ Յ Ո Ւ Ա Յ



00000 2749

Գ Ի Բ Ք Յ Ո Ւ Ա Յ

Տ Ա Ղ Ա Չ Ա Փ Ե Ա Լ Ե Ի Լ Ո Ւ Ս Ա Բ Ա Ն Ե Ա Լ

Ի Զ Ե Ռ Ն Տ . Ե Դ Ո Ւ Ա Ր Դ Ա Յ Վ . Հ Ի Ի Ր Մ Ի Ի Ձ

Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի Շ Ի Ր Ա Կ Ա Յ

Ի Մ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ո Ւ Ի Տ Է Ն



1104 - 101

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի Վ Ա Ն Ս Ս Ի Բ Ո Յ Ն Ղ Ա Չ Ա Ր Ո Ւ

1862—Ո Յ Ժ Ա

1461

1964-65

DEPARTMENT OF AGRICULTURE

STATE OF TEXAS

AGRICULTURAL MECHANICS

INSTITUTION



28 1105

91104-60



1105-60

AGRICULTURAL MECHANICS

1105-60

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Այրն Աստուծոյ Յոր յիշատակի յԵղեկիելէ (ԺԴ. 19) ընդ Նոյի և ընդ Գանիելի, երեքին ևս որպէս օրինակք արդարութեան կացեալ 'ի դարս իւրեանց, և արժանաւորք վասն անձնիւր առաքինութեան ընդունելոյ 'ի Տեառնէ զամենայն խնդրուածս իւրեանց: Եւ առաքեալն Յակովբոս յիշատակէ զնա (Ա. 11) որպէս համբերողաց նախատիպ: Տօնախմբեն զյիշատակ սորա արեւմտեան և արեւելեան եկեղեցիք, և անուն նորա յիշատակի 'ի հնագոյն իսկ Յայսմաւուրս Յունաց և Լատինաց և մեր ընդ սուրբս, ընդ մարգարէս և ընդ վկայս. և անդստին յեօթներորդ դարէ կանգնեալ կայր 'ի Առստանդնուպօլիս եկեղեցի 'ի պատիւ նորա, որպէս և ցարդ իսկ ուրեք ուրեք կան յԵւրոպա:

Յամենայնէ աստի 'ի միտ առնուլ է քանի յանդգնութեամբ համարին ոմանք կեղծիս զանուն, և զպատմութիւն նորա իբր առ 'ի խրատ այլաբանեալ: Չի եթէ այսպէս էր, չէր օրէն աստուածային գրոց տալ զնա յօրինակ առաքինութեան և 'ի նախատիպ համբերութեան: Ասան որոյ և 'ի հին և 'ի նոր օրէնս յամենայն ժամանակի ընդ ճշմարիտ պատմութիւնս ընդունելի եղեն զիրքս այս, և յամենայն Ժողովս ընդ աստուածաշունչ զիրս համարեցան:

Ըստ հասարակաց կարծեաց արեւելեան և արեւմտեան Հարց' էր Յոր յազգէ Եսաւայ, և 'ի նախադրութեան գրոցս համարի նոյն ընդ Յորաբայ' որ յիշատակի յԱ. Մնացորդս (Ա. 44) և 'ի Ծնունդս (ԼԶ. 53) որդի Չարեհի: Ըստ այսմ

դտանի Յոր ժամանակակից Մովսիսի , և իրք նորայեւս որ-
դւոցն Խորայելի յեզիպտոսէ երեւին անցեալ :

Եւ եկեաց Յոր և թաղաւորեաց յԱւսիդ յաշխարհին Եդով-
մայեցւոց յարեւելս , մերձ յԱրաբիա : Եւ էր նա աստուածա-
պաշտ , հաւատացեալ յարարիչն երկնի և երկրի . ըստ այնմ
ժամանակի սլարդ և անասակ կրօնից կենցաղաւարեալ
անմեղութեամբ , կատարելով զառաքինութիւն ըստ բնա-
կան օրինաց և ըստ աստուածայայտնութեան : Այլ Աս-
տուած , առ ՚ի կրթել զնա և ևս յառաքինութիւն և ՚ի սրբ-
ութիւն , թոյլ ետ դիւին ածել ՚ի վերայ նորա զամենայն
դժնդակ փորձանս . զկործանումն տանց և ապարանից ,
զսատակումն որդւոց և ծառայից և անդէոց , և զկորուստ
ընչից և մեծութեանց : Այսու ամենայնիւ ոչ կարացեալ
դիւին դրդուել զհաստատութիւն նորա , յաւել հարկանել
և զմարմին նորա ախտիւք և կեղովք յոտից մինչև ցզլուխ :
Եւ մինչդեռ յայսպիսի վիշտս տառապէր զտիւ և զզիշեր ,
տրտմութեամբ և զարհուրելի տեսլեամբք , լուռ և անմը-
ռունչ յաղբևս անկեալ զթարախս վիրացն կոշտիւք երկրի
քերելով , ՚ի լրումն վշտաց նորա թոյլ ետ Աստուած սինլը-
քոր և անարգ մարդկան նախատել զնա , և կնոջ նորա
ոտնհար լինել նմա , և բարեկամաց իսկ նորա իշխանաւո-
րաց իմաստնոց և երկիւղածաց՝ որք ՚ի սիոփումն նորա ե-
կեալ էին՝ մեղադրել զնա որպէս թէ վասն մեղաց իւրոց
սլատուհասեալ :

Խօսք երից ՚ի բարեկամաց նորա , և սլատասխանիք իւր ,
և սլատգամք Տեառն՝ որ զերկաքանչիւր կողմանս խրատէ ,
են սլատճառք գրոցս՝ որ կոչին Յորայ : Ըստ նախնեացն
կարծեաց , զոր և նախադրութիւն գրոցս ընդունելի համա-
րի , Մովսիսի է գրեալ զզիրս զայս ՚ի խրատ Խորայելի ՚ի
յանապատին : Այլ հայեցեալ յաննմանութիւն ոճոյ գրոցս
ընդ տիպս բանիցն Մովսիսի , և ՚ի ձևս և ՚ի նմանութիւնս՝
որ յԱրաբիոյ առեալ առ հասարակ օտարք յեզիպտական
մտածութեանց նորին , համարին այլք յեդովմայեցւոյ ու-
մեմնէ քերթողէ ՚ի համազգւոյ առնն Աստուծոյ Յորայ և
թերևս ՚ի միոջէ յերեցունց բարեկամաց նորա զզիրս զայս
արձանագրեալ ասորերէն . և ՚ի տիրել Գաւթի աշխարհին
Եդովմայեցւոց՝ ածեալ զսա ՚ի Հրէաստան և թարգմանեալ
ինքնին կամ ՚ի ձեռն այլոյ ուրուք , և ՚ի վերջին սաղմոսս

իւր 'ի նմանութիւն մեծավայելուչ կերպարանաց բանից սո-
րա նկրտեալ: Այսմ երաշխաւորեն և տիպք երբայական
բարբառոյն, որ զժամանակի թագաւորացն բերեն զնմանու-
թիւն ոճոյ ըստ հմուտ երբայագիտաց: Արդ 'ի սմա երեքին
բարեկամքն Յորայ վիճեալ պնդին աստուածախնամ տեսչու-
թեան ոչ միայն յանտի կեանս վարձատրել զարդարս, այլ
և աստ բարեկենդանութեամբ ըստ աղցաւոր կենացս պայ-
մանի: Իսկ Յոր հաստատէ 'ի հակառակէն զի վարձք ար-
դարոյ 'ի հանդերձեալսն պահին, և բազում այն է զի յերկ-
րի աստ յաջողէ ամպարչտաց, իսկ արդարք կրեն վիշտս,
ուստի տայ 'ի միտ առնուլ զի սխալեն բարեկամք իւր սլա-
տուհաս մեղաց իւրոց զվիշտսն դատելով:

Են որք գայթակղին իմն ընդ ձև տրտնջական բանից ինչ
գրոցս, անպատեհս զայնոսիկ համբերողի առն համարե-
լով: Այլ պարտ է զանազանել զզգացումն բնութեան 'ի
կամաց, որպէս զլալիս սգաւորի՝ որ կամակար 'ի ձեռանէ
Տեառն ընդունի զմահ սիրելոյ: Ար զնոյն վիշտս որ և զա-
ղէտս յանձին իւրում սարասիցէ, գիտէ կարեկից լինել և
խելամուտ ձեոյ բանիցն Յորայ. և այն զի ընդդէմ դառն
զրպարտութեան բարեկամացն և ընդդէմ դիւին փորձողի
պատշաճին տրտնջանացն նորա դէմք բանից. վասն որոյ ի-
մաստութեամբ յաւելու գրիչ նախադրութեան գրոցս թէ
«Պարտ է ամենայն զգուշութեամբ գիտել զխոշորութիւն
բանիցս՝ թէ առ ո՛վ ունի զգիտումնն, և մի ընկղմել յան-
հասութիւնն. զի գրողն կամելով ցուցանել զբաղմահնար
փորձանս Յորայ 'ի սատանայէ, առ Աստուած բանիւքն
տպաւորէր զտրտունջ դատախազութեանն »:

Յեօթանասներորդի երկրորդի ամի կենացն Յորայ եկին
'ի վերայ նորա հարուածքն. եօթն ամ հարուածքն, և յետ
հարուածոցն կեցեալ նորա այլ ևս հարիւր և եօթանասուն
ամ, ամենայն ամք կենաց նորա լինին երկերիւր քառասուն
և ութ. ընդ կրկնապատիկ կենաց կրկին ընկալեալ 'ի
Տեառնէ և զամենայն բարութիւնս երկրաւորս՝ զորս կո-
րոյս, առ 'ի խրախոյս համբերութեան վշտացելոց. որդիս
և եթ նոյնքանիս ընկալեալ, որ ընդ առաջինսն լինին և նո-
քա կրկնապատիկ՝ կելով և վախճանելոցն առ Աստուած
ըստ տէրունական բանին, զի ամենեքին նմա կենդա-
նիք են:

Ըստ քերթողական տեսութեան զգիրս զայս նկատեալ մարթ է համարել կրկին տեսարանս, մի յերկինս և մի յերկրի. անդ սահմանեալ ամենայն ինչ և վճռեալ, և աստ յարդիւնս եկեալ, ուր յանգէտս վճռոցն երկնայնոց առնին դատաստանք :

Գիւցազնն 'ի սմա է այր որ վշտակիր՝ որ կրէ իսկապէս, այլ անսարտակիր. ողբք և հեծութիւնք նորա, մարդկեղէն բնութեանս արդասիք և արիագունից իսկ զիւցազանց անհրաժեշտք, շարժեն զկարեկցութիւն : Նկատէ նա ակն յանդիման զմահ, և ստիպի ցանկալ այնմ. կրէ 'ի փառս Աստուծոյ զվիշտս սահմանեալս 'ի նմանէ վասն իւր, և Աստուած վասն հաւատարմութեան նորա գոգցես իմն գրաւ դնէ : Այս են զլիաւոր սրտճառք գրոցս. իսկ յարակից սրտճառք և իբր գրուագք 'ի ներքս ածեալ խօսք բարեկամացն երեցունց : Սորա ոչ միայն չկարացեալ սփոփել զնա, այլ և ևս զայրացուցանեն : Ընդունայն խնդրին յերկրի աստ սրտճառք արկածից, յերկինս խնդրելի է զայնս. այլ ո՞վ անդր ելանել կարիցէ : Աչ որ 'ի բարեկամացն Յորայ գուշակել կարէ զսրտճառս աղէտից նորա, զոր աստուածեղէն զիրք անդստին 'ի սկզբանէ յայտ առնեն : Քրիստոսի շնորհքն և եթ խելամուտ արարին զմարդիկ՝ զի յառաւելութիւն յաւիտենական փառաց ամենայն վիշտք ժամանակաւոր կենացս սակաւք են. և ոչ բաւականապէս 'ի հին օրէնս էր ծանուցեալ զի « Չեն արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն » : Աչ միայն ռամիկն յայնժամ, այլ և բազումք 'ի գիտնոց զտառապանս վշտակիր մարդկան 'ի սրտուհաս մեղաց նոցա համարէին, և սարսուտ աստուածային արդարութեան վարձատրել աստստին զարդարս : Վասն որոյ և իմաստնոցն Թեմանայ գծուարահաս թուեցեալ իմաստք բանիցն Յորայ՝ յերկարեն 'ի զուր զվէճն, ոչ կարացեալ հասու լինել աստուածային տնտեսութեանն 'ի յաճախութիւն փառաց տառապելոյն :

Քանի՛ փառաւորեալ մոխիրն՝ յորոյ վերայ այրն Աստուծոյ բազմէր. հրեշտակք շուրջանակի սար առեալ, ինքն հաւատարիմ կացեալ Արարչին, և սրակ փառաց 'ի Տեառնէ սրտրաստեալ նմա զգլխով : Այս կրկին տեսարանք, և հանդիսատեսք աներևոյթք վկայք առաքինութեան նորա յաղէտան, կացուցանեն զսրբազան ողբերգութիւն գրոցս :

Յոբ , որ նախատիպ համբերութեան կալոցն էր , հանդի-
սանայ 'ի փորձանս անդ ընդդէմ մարդկեղէն իմաստու-
թեան . և առաքինանայ , որչափ մարդոյ մահկանացուի է
առաքինել : Ըստ աշխոյժ և եռանդուն բնաւորութեանն յա-
ռաջնմէ իսկ վիճաբանութենէն Աղիփազայ զայրանայ . և
այն զայրոյթ յաւելու եռանդն յառաքինութիւն նորա , և 'ի
զրուցատրութիւնսն՝ որ ապաքէն տաղտկալի լինէին և ոչ
այնպէս օգտակարք , եթէ հեծէր և եթ և հառաչէր Յոբ , և
եթէ մխիթարէին և եթ զնա բարեկամք իւր :

Զրուցատրութեանցս այսոցիկ է բնական իմն կապա-
կցութիւն ընդ իրեարս : Բարեկամքն իմաստունք խօսին ըստ
իւրաքանչիւր բնաւորութեան և հանձարոյ . Յոբ զլէ զնոսս
և իմաստութեամբ և ըստ քերթողականին : Աղիփազ չա-
փաւորագոյն քան զայլս 'ի վիճաբանել , թէպէտ և յառա-
ջամատոյց 'ի խօսս՝ այլ ոչ իբրև յիւրմէ տայ նմա խրատս ,
այլ իբր 'ի տեսլենէ ազդեալ (ՊԼ. Գ.) : Բազդատ սաստկա-
գոյնս յարձակի 'ի նա , և Սովփար յաւելու և ևս 'ի բանս
Բազդատայ :

Յերիս ճակատս բաժանի բանակուութիւն նոցա . յա-
ռաջնունն Յոբ գրեթէ լի տարեալ 'ի գլուխ զյաղթութիւն , և
կակոչէ զոտխս իւր յատեան Բարձրելոյն (ՊԼ. ԺԳ) : Յերկ-
րորդունն մնայ երկուստեք մարտն ընդ երկար անպարտե-
լի . Աղիփազ հնարի շրջել ճարտարութեամբ զխօսս . զայրա-
նան ոգիք , և Յոբ վիճեալ պնդի 'ի բանս իւր : Բազդատ
տկարանայ , Սովփար ափ 'ի բերան լինի , և Յոբ տանի
զյաղթութիւն . տայ վճիռս՝ զորս մարթ է համարել սլասկ
գրոցս այսոցիկ (ՊԼ. ԻԷ . ԻԸ) :

Վիճաբանութիւնքս այսոքիկ յարաձայնք յերեմանն , բե-
րեն յար փոփոխմունս . կորանք և խռովութիւն յաջորդեն
միմեանց , Յոբայ զփաստս ոտխացն 'ի գլուխս նոցա շրջե-
լով , և հետզհետէ զէնընկէցս զնոսս առնելով , մինչև զի-
ջեալ ամօքի զայրոյթ նորա՝ յանգեալ գրեթէ միշտ 'ի սրտա-
ուռչ եղերերգութիւնս , որ հանգոյն սլարուց ողբերգու-
թեան զգիւցազինն համառօտեալ զխօսս՝ առնեն հանուրց
իմանալի :

Ի յաղթանակել Յոբայ 'ի վերայ երեցունցն՝ մտանէ ապա
յասպարէզ անդր կրտսերագոյն որ քան զնոսս , այլ յան-
զըզնագոյն և վստահացեալ յիմաստութիւն իւր (ՊԼ. ԼԲ) :

Նկարագրէ պատկերս մեծավայելուչս , այլ 'ի դուր . և ոչ
ընկալեալ յումեքէ պատասխանի , մնայ որպէս ընդ օդս
բանակուեալ : Աստուած 'ի վերայ հասանէ , և ապիկար
ջատագով նորին լինի որպէս ստուեր աներևոյթ . երևի
Տէր անակընկալ , ուր նայն անհնարին զայն ասացեալն էր .
և ոչ երեսս ինչ արարեալ իմաստնոցն՝ որ իբր թէ ջատա-
գովք նորա կային , առ Յօբ և եթ բարբառի , ոչ որպէս
Տէր , այլ որպէս մի յիմաստնոց . և այնմ , որ յաղթողն լեալ
էր ոսոխեալ ընդ իմաստունսն և սպառեալ զիմաստու-
թիւն մարդկեղէն , առաջարկէ խնդիրս զարարչութենէ և
զտեսչութենէ աշխարհի , և ափ 'ի բերան առնէ զնա : Ան-
ցուցանէ 'ի հանդիսի զազգի ազգի կենդանիս , և կատարէ
նկարագրութեամբ երկուց ահագին նհանգաց ծովու՝ զորս
ստեղծ և խնամէ . և հարցանէ ցՅօբ զպատճառս ստեղծա-
նելոյն զնոսա , որ անպիտանքն իսկ թուին մարդկան . և ի-
մաստութիւն մարդկեղէն խոնարհեալ ափ 'ի բերան լինի :
Զի այսպէս և եթ հնար է պատասխանել առ Ամենակալն՝
որոյ բանք մրրիկք են , և վկայք տիեզերք առ հասարակ ,
խոնարհել առաջի ամբաւ զօրութեան նորա և անքնին տես-
չութեան՝ որով վարէ զաշխարհ , և հայրենի գթոյն՝ որով
կերակրէ և զճագս ազուաւուց որ կարդան առ նա : Այսու
օրինակաւ լուէ Տէր Յօբայ զպատճառս ծանունց փորձա-
նացն , և հատուցանէ և եթ նմա ընդ ամենայնի որ ինչ կո-
րոյսն և որ ինչ կրեաց : Իսկ կարծեցեալքն ջատագովք աս-
տուածպետականին ոչ միայն փոխարէնս ինչ ընդ ճոռով
ճառիցն ոչ ընկալեալ , այլ և կարօտին աղօթից առնն Աս-
տուծոյ 'ի թողութիւն մեղաց իւրեանց՝ որովք զանպարտն
կշտամբեցին :

Այսու օրինակաւ աստուածեղէն գիրքս այս , որպէս
քերթուած իմն սրբազան , յանդիման առնելով զաղցաւոր
կենցաղ մահկանացուացս , և զաստուածապաշտութիւն ոչ
բանիւք՝ այլ արդեամբք ցուցանելով , զուարճախառն տրրտ-
մալեօք խրատեն և սփոփեն զողիս սքանչելապէս : Այսր
աղաղաւ խորհեցայ ամել զայն 'ի չափ տաղի բաց 'ի պատ-
մական մասանցն , որպէս և բնագիրն եբրայական է գրեալ ,
և 'ի տաղաչափել անդ՝ լուսաւորել ևս զայն 'ի մթութենէ՝
բաղդատութեամբ այլոց թարգմանութեանց՝ որք զանաղա-
նին յոյժ 'ի միմեանց : Նւ պատճառք այսբանեաց զանազան

ընթերցուածոց՝ որով հարկ է ինձ բազում ուրեք ՚ի տաղա-
չափութեանս հեռանալ ՚ի մերմէս՝ այն է, զի բնագիր գրոցս
ասորերէն չափաբերեալ ինքնին իսկ մթին քան դարձակ
բան, ևս քան զևս մթագնեալ է յերբայական թարգմանու-
թեանն վասն չափոյ ոտիցն և բաղմանչանակ բառիցն և
յոզնագիմի իմաստից: Ասան որոյ և թարգմանիչն մեր և
այլոց ազգաց տարածայնին յիմացուած նոցին, և հարկ լինի
զյարմարագոյնս յայնցանէ ընտրել, խոստորելով ոչ դուն
ուրեք ՚ի մերմէ թարգմանութենէս:

Գ Ի Ր Ք Յ Ո Ր Ա Յ

Գ Լ Ո Ի Խ Ա

Այլ ոմն էր յԱւսիգ աշխարհի, որում անուն էր Յոր. և էր այրն այն ճշմարիտ, անարատ, արդար, աստուածապաշտ, մեկնեալ յամենայն իրաց չարութենէ մեղաց: Եղեն նորա ուստերք եօթն և դասերք երեք. և էին խաշինք նորա եօթն հազար ոչխար, ուղտք երեք հազարք, լուծք եզանց հինգ հարիւր, և էչք մատակք արօտականք հինգ հարիւր, և սպառք բազում յոյժ, և գործք մեծամեծք էին նորա ՚ի վերաց երկրի. և էր այրն այն ազնուական (1) քան զամենայն արևելեայնս: Միաբանեալ գային որդիք նորա (2) առ միմեանս, առնէին խրախուժիւն զօրհանապաղ, առեալ ընդ իւրեանս և զերեսին քորսն իւրեանց՝ ուաել և ըմպել ընդ նոսա: Եւ իբրև յանդ երանէին աւուրք խրախուժեանն, առաքէր Յոր և սրբէր (3) զնոսա. յարուցեալ ընդ առաւօտս մատուցանէր վասն նոցա զոհս ըստ թուոյ նոցա, և զուարակ մի վասն մեղաց ընդ ողւոց նոցա. քանզի ասէր Յոր, թէ գուցէ որդիքն իմ ՚ի միտս իւրեանց խնացան չարութիւն զԱստուծոյ. այսպէս առնէր Յոր զամենայն աւուրս նոցա:

Եւ եղև իբրև օրս այս, և ահա եկին հրեշտակք Աստուծոյ կալ ա-

(1) Սուրբ Հարք գրեթէ առհասարակ թագաւոր զՅոր համարին, տիրեալ յերկրի իւրում: Այսմ երաշխաւորէ և ինքն յասելն ՚ի ԳԼ ԺԹ. 9. « Արացոյց զպլասակն ՚ի գլխոյ իմե՛ » . և ՚ի ԳԼ ԻԹ. 7. « Արկանէր ՚ի հրապարակս աթու իմ » . և այլ ուրեք ուրեք այսպիսի բանս: Եւ դարձեալ այցելութիւն երեցունց արքայից բարեկամաց նորա առ ՚ի սփոփել զնա:

(2) Եօթանեքին որդիք Յորայ, որոց էին և ընտանիք իւրաքանչիւր և բնակութիւն ուրոյն, առնէին երբէք երբէք խրախուժս ՚ի միասին հանդերձ երեքումբք քերքն իւրեանց: Եւ ուր մերս ասէ զօրհանապաղ, այլք ՚ի թարգմանութեանց ասեն « իւրաքանչիւր յաւուր իւրում » . այսինքն յաւուր տարեգարծի ճննդեան իւրեանց, զոր օրինակ ասի և ՚ի ԳԼ Գ. 1. « Անէ՛ զօրն իւր և ասէ »:

(3) Յոր որպէս թագաւոր և որպէս տանուտէր ունէր զքահանայութիւն ազգին իւրոյ և ընտանեաց, որպէս էինն և Մելքիսեղեկ և Աբրահամ և Յակոբ և այլք ՚ինահասակտաց:

առջի Տեառն. եկն և սատանայ ընդ նոսա յածեալ ընդ երկիր և շրջեալ ՚ի նմա : Եւ ասէ Տէր ցատանայ . Դու ուսախի գաս : Պատասխանի եա սատանայ Տեառն, և ասէ . Շրջեալ ընդ երկիր, և յածեալ ՚ի ներքոյ երկնից, եկեալ կամ : Եւ ասէ ցնա Տէր . Նայեցա՞ր մտօք քովք ընդ ծառայ իմ ընդ Յոբ, զի ոչ գոյ իբրև զնա ՚ի վերայ երկրի այր անարատ, ճշմարիտ, աստուածասլաշտ, մեկնեալ յամենայն իրաց չարաց : Եա սատասխանի սատանայ, և ասէ ընդդէմ Տեառն . Մի՞թէ ձրի սլաշտիցէ Յոբ զՏէր . ո՞չ դու ամբացուցեր զարտաքին նորա և զներքին տան նորա, և որ ինչ միանգամ արտաքոյ շուրջ զնովաւ է . զգործս ձեռաց նորա օրհնեցեր, և զանասուն նորա բազմացուցեր ՚ի վերայ երկրի : Բայց ոչ, աղէ առաքեա դու զձեռն քո և արկ յամենայն ինչս նորա, եթէ ոչ յերեսս իսկ օրհնեցէ (1) զքեզ : Յայնժամ ասէ Տէր ցատանայ . Ահա զամենայն ինչս նորա տամ ՚ի ձեռս քո, բայց ՚ի նա մի՛ մերձենայցես : Եւ ել սատանայ յերեսաց Տեառն . և էր իբրև զօրս զայս, ուստերքն Յոբայ և դատերք նորա ուտէին և ըմպէին գինի ՚ի տան երկցու եղբօրն իւրեանց : Եւ ասա հրեշտակ եկն առ Յոբ և ասէ ցնա . Հարկիք եզանցն վարէին, և էշքն մատակք արածէին առ նոքօք . և եկին գերեվարք և գերեցին զնոսա, և զմանկաին կոտորեցին սրով . ես միայն ապրեալ եկի սատմել քեզ : Եւ մինչդեռ նա խօսէր, այլ հրեշտակ եկն առ Յոբ, և ասէ ցՅոբ . Հուր անկաւ յերկնից և այրեաց զհօտան, և զհովիւան ըստ նմին օրինակի եկեր . ես միայն մնացեալ եկի սատմել քեզ : Եւ մինչդեռ նա խօսէր, այլ հրեշտակ եկն և ասէ ցՅոբ . Ասպատակաւորք ասպատակեցին ՚ի մեզ երեք առաջք, և սատեցան զուղաուքն և գերեցին զնոսա, և զմանկաին կոտորեցին սրով . ես միայն ապրեալ եկի սատմել քեզ : Եւ մինչդեռ նա խօսէր, այլ հրեշտակ գայր և ասէր ցՅոբ . Մինչդեռ ուստերքն քո և դատերք ուտէին և ըմպէին առ երկցու եղբօրն իւրեանց, յանկարծակի հողմ մեծ եկն յանասպատէ, և եհար զտրեսին անկիւնս տանն, և անկաւ առնն ՚ի վերայ որդւոցն քոց, և վախճանեցան . ես միայն ապրեալ եկի սատմել քեզ : Ապա յարուցեալ Յոբ սատառեաց զհանդերձս իւր, և կարեաց զվարսս գլխոյ իւրոյ . և անկեալ ՚ի գետին՝ երկիր եսլագ Տեառն, և ասէ . Մերկ իսկ եկի ես յորովայնէ մօր իմոյ, և մերկանգամ դարձայց անգրէն . Տէր եա և Տէր առ . որպէս Տեառն հաճոյ թուեցաւ, նոյնպէս և եղև . եղիցի անուն Տեառն օրհնեալ : Եւ յայսմ ամենայնի անցս որ անցին ընդ նա՝ ոչ մեղաւ Յոբ առաջի Տեառն, և ոչ եա անպամուծիւն Աստուծոյ :

Գ Լ Ո Ւ Խ Բ

Եւ եղև իբրև զօրս զայս, և եկին հրեշտակք Աստուծոյ կալ առաջի Աստուծոյ . եկն և սատանայ ՚ի մէջ նոցա ընդ նոսա կալ առաջի Տեառն : Եւ ասէ Տէր ցատանայ . Դու ուսախի գաս : Յայնժամ ասէ սատանայ առաջի Տեառն . Սահեալ ՚ի ներքոյ երկնից և շրջեալ ընդ ամենայն, եկեալ կամ : Եւ ասէ Տէր ցատանայ . Ապաքէն հայեցա՞ր ընդ ծառայ

(1) Օրհնել աստանօր նշանակէ անիծանել կամ հօյհոյել . զի առ Երբայեցիս չէր իսկ օրէն արտաբերել զբառքս, և հակադրական ձևով բացատրէին :

խմ Յօրք, զի ոչ գոյ իբրև զնա՝ ի վերայ երկրի այր ճշմարիտ, անարատ, աստուածապաշտ, մեկնեալ յամենայն չարութենէ, և տակաւին կայ յանմեղութեան. և գու տարապարտ խօսեցար կորուսանել զինչս նորա: Արկնեաց անդրէն աստանայ, և ասէ ցՏէր. Մորթ ընդ մորթոյ (1), և որ ինչ իցէ մարդոյ՝ ընդ անձին իւրոյ տուժեցի. ապա թէ ոչ, աղէ առաքեա զձեռն քո և արկ զոսկերօք և զմարմնովք նորա, եթէ ոչ յերեսս իսկ օրհնեցէ զքեզ: Եւ ասէ Տէր ցստանայ. Ահա մատնեմ զնա քեզ, բայց միայն զողի նորա պահեցես: Եւ եւ սատանայ յերեսաց Տեառն, և եհար զՅօրք չարաչար կեղով (2) յոտից մինչև ցզուխ. և առեալ խեցի՝ քերէր զթարախն, և նստէր յաղբևս արտաքոյ քաղաքին: Եւ իբրև բազում ժամանակ անցանէր ի վերայ, ասէ ցնա կինն իւր. Մինչև յերբ ժուժկալեալ ասիցես՝ թէ ահա համբերեցից տակաւին սակաւ ինչ ժամանակ՝ ակն կալեալ յուսոյ փրկութեան իմոյ. ահաւողիկ ասրականեալ է յիշատակ քո՝ ի վերայ երկրի, ուստերք քո և դասերք՝ իմոյ որովայնի երկք և երկունք, յորս տարապարտուց վաստակեցի տառապանօք: Դու ինքն ի զազրութիւն որդանց նատիս օթագացեալ բացական, և ես մոլորեալ և հարկահար տուն ի տանէ և տեղի ի տեղւոջէ, սպասեմ թէ էրբ մտանիցէ արեգակն, զի հանդեայց ի տառապանաց իմոց և ի ցաւոց իմոց՝ որ այժմ սպառեալ են զինն. աղէ ասա բան ինչ ի Տէր, և վախճանեաց (3): Եւ նորա հայեցեալ ընդ նա, ասէ. Իբրև զմի ի կանանց անզգամաց խօսեցար. եթէ զբարխան ընկալաք ի ձեռանէ Տեառն, չարեացս ոչ համբերիցեմք: Եւ յայտ ամենայնի՝ որ ինչ անցք անցին ընդ նա, ոչ մեղաւ Յօրք չբթամբք իւրովք առաջի Տեառն, և ոչ ետ անզգամութիւն Աստուծոյ: Եւ լուեալ երկից բարեկամացն զբարխան ամենայն՝ որ հասին ի վերայ նորա, եկին յիւրաքանչիւր աշխարհէ առ նա, Եղիփազ (4) արքայ Թեմ

(1) Մորթ ընդ մորթոյ. իմաստք առակիս են՝ զի վիշտք արտաքինք ոչ այնպէս զգալի են մարդոյ որպէս որ ինչ յանձին իւրում կրէ, և զի դիւրաւ յանձն առնու որ տալ զստացուածս և զխաշինս և զորդիս իւր սիրելիս ընդ անձին առ ի պահել զկեանս իւր. վասն որոյ հնարի դեն սովին բանիւ ընդ վայր հարկանել զառաքինութիւն Յօրայ:

(2) Սուրբ Ոսկերեբանն և այլք յողունք ի հին և ի նոր մեկնչաց համարին ըզկեզս Յօրայ ազգ ինչ դառնակսկիծ և նողկալի բորոտութեան, որովք նեղէր նա և տառապէր անհնարին: Նստել իսկ նորա արտաքոյ քաղաքին յաղբևս՝ յայտ առնէ զի էր ազգ ինչ բորոտութեան կեղ նորա. քանզի բորոտք արտաքսէին ի բնակակցութենէ, որպէս բազում ուրեք ի Սուրբ Գիրս է տեսանել:

(3) Կամէր կինն զի հայհոյեցէ Յօրք զԱստուած, և պատուհասեալ ի Տեառնէ՝ ստտակամահ լիցի, քան թէ կեալ յայնպիսի վիշտս:

(4) Եղիփազ էր յազգատոհմէ նախնոյն Եղիփազայ անդրանկին Եսաւայ, և որդւոյ նորա Թեմանայ՝ յորմէ կոչեցաւ քաղաքն Թեման յԱրարիա. որոյ բնակիչք ընդ իմաստունս համարին ի Սուրբ Գիրս և առ արտաքին մատենագիրս: Մննդ. 1, 9. 4. 11:

Բաղդատ Սաքեցի, այսինքն որդի Սաքայ՝ որ և Սովիւէ կոչի, որդի էր Աբրահամի ի Քերտուրայ: Մննդ. 16. 2:

Սովիար համարի սերեալ ի նախնոյն Սովիարայ յորդւոյ Եսաւայ. Մննդ. 1, 9. 16. Իսկ մականունն նորա Մինեցի՝ ի հօրէ իւրմէ թէ ի քաղաքէն իցէ առեալ ոչ է դիտելի:

Երեքին սոքա իշխանք, արք իմաստունք և աստուածապաշտք, էին յորդւոց Աբրահամի իրատեալք ի նմանէ յերկիւղ Տեառն:

նացւոց, Բաղդաստ բռնաւոր Սաւքեցւոց, Սովիար արքայ Մինեցւոց .
և եկին առ նա միաբան մխիթարել և տխուհել զնա : Եւ տեսեալ զնա
'ի բացուստ, ոչ ծանեան . և բարբառեալ մեծաձայն լացին . և սգա-
տառեցին իւրաքանչիւր զպատմութեան իւր, և ցանեցին հող 'ի վերայ
զլսոց իւրեանց՝ ընդ երկինս հայելով : Եւ նստան շուրջ զնովաւ յերկ-
րի զեօթն օր և զեօթն գիշեր . և ոչ որ 'ի նոցանէ խօսեցաւ ընդ նմա
բան . քանզի տեսանէին զանհնարին հարուածսն և զմեծամեծս յոյժ :

ԳԼՈՒԽ Գ.

Նգուի Զոր առ վշտին զօր ծննդեան իւրոյ, ցոռցանելոյ զա-
յկառ սողաւոր կենցաղոյս, և 'ի քանի չարեաց զերծ գտանին
վաղամեռիկը անդատին 'ի խանձարոց :

Եւ ապա ուր ուրեմն Զոր եբաց զբերան իւր, և անէծ զօրն իւր, և ասէ .


Կորիցէ օրն՝ յորում ծընայ, եւ կորիցէ գիշերն այն՝ (1)
Զոր ասացաւ ահա արու . օրն այն դարձցի ի խաւար,
Մի զայն արկցէ Տէր ի համար . մի ծագեացէ նրմա տիւ .
Մի այն ի թիւ անկցի ամաց, եւ մի թուեցի յաւուրս ամսոց .
Մի տօնք ի նմա, այլ ճիւղք ողբոց, մի ձայնք ի նմա լուիցին երգոց . (2)
Նըզովեացէ զօրն այն որեար դարանակալ մեծ վիշապին : (3)
Գիշերոյն այնորիկ շիջցին աստեղք աղօտաջահք,
Դէտակն ի զուր կալեալ եւ մի տեսցէ զծագումն արուսեկի,
Փոխանակ զի ոչ փակեաց զարգանդի մօրն խնոյ ըզդրունս,
Փոխանակ զի ոչ խնայեաց զիս յաղեալից աստի չարաց :
Իսկ ընդէր յորովայնի չեղեւ զրաւել ինձ ի կենաց .
Եւ ելեալ յարգանդէ ընդէր անդէն իսկ ոչ կորեայ .
Առ իմէ՞ ոչ գիպեցայ իբր ըզվիժածս ի յարգանդէ,
Իբր ըզտղայս որ կորեան՝ չեւ ակնարկեալ ի լոյս արմուտն .

(1) Զայն ձև բանի 'ի կիր առնու և Երեմիա . (ԳԼ. Ի. 14.) « Անիճեալ լիցի օրն
յորում ծնայ... անիճեալ լիցի մարդն՝ որ ետ աւետիս հօր խնոյ և ասէ՝ թէ ծնաւ
քեզ արու » : Որով յայտ առնեն աստուածարեալքս այսորիկ արք, առանց վեր-
ջանալոյ 'ի համակամութենէ ընդ կամս Աստուծոյ, զգժնդակութիւն վշտացն՝ որ
ընկճէին զզոյսութիւնս նոցա վրդովեալս, առանց դրդուելոյ զկամս նոցա յաս-
տուածայնոյն :

(2) Ակնարկէ 'ի տօնս և 'ի խնջոյս, որ 'ի տարեդարձս ծննդեան՝ մանաւանդ թա-
գաւորաց և իշխանաց կատարին :

(3) Էր ազգ յԵգիպտոս որսորդ տխուրանց, որ նըզովէր զարե վասն տոչորելոյ
նորա զանգաստանս . 'ի սա ոմանք տան ակնարկել տողիս : Այլք համարին ակնար-
կել 'ի մոգս, որոց կարծէին արեւելեայք ունել իշխանութիւն 'ի վերայ լուսաւո-
րաց, և նըզովէք նոցա կլանել վիշապ աստեղն զարե կամ զլուսին, ուստի և զխա-
ւարմունս նոցա համարէին :

Առ ինչ ի գիրկս ընկալեալ, դիեցի զկաթըն մայրենի,
 Զի լինէր ինձ այժմիկ խաղաղաւէտ հանգչել ի նինջ
 Ընդ թագաւորըս պոնծացեալս ի յաղթական սուսեր իւրեանց,
 Եւ ընդ ճոխ աւագանին՝ որոց ոսկւով լի էին տունք •
 Անդ ամառիշտըն խաղմարար՝ որ բորբոքէն աղմուկ եւ խուով,
 Անդ հանգեան եւ որք ի կեանս յայտոսիկ լեալ վաստակաբեկ •
 Եւ գերեկիցք, ոյց ըզըզթայս ի միասին ածեալ ի քարշ,
 Ոչ եւս անդ ի ձայնէ ոստիկանացն զարհուրին •
 Անդ փոքր եւ մեծ եւ աներկիւզ անդ ի տեառնէ իւրմէ ծառայ :
 Իսկ ընդէր իցէ անձին դառնացելոյ տեսանել լոյս,
 Կամ առ ինչ տըւեալ կենցաղ ցաւագնելումն դառնահեծ,
 Որ ցանկան մահու, կոչեն ըննա, եւ խուլ է նոցա մահ •
 Որպէս այն որ ըզգանձս հետազօտեալ եւ ոչ գտանեն :
 Մահ հանգիստ մահկանացուաց, այլ թաքթաքուր մահուն ուղի,
 Զի Տէր թագոյց զայն խաւարաւ աներեւոյթ շրջապատեալ :
 Դառնացաւ ինձ ճաշակ, խառնեալ ընդ հաց իմ հեծութիւն •
 Ուղիսօրէն յաչաց իմոց գետահետեալ գնան արտասուք •
 Զի երկիւզ՝ զոր խիթայի՝ եկն ի վերայ իմ ժամանեաց, (1)
 Կասկածանք իմ չարագոյժք սատահեցին ելին ի գլուխ :
 Այլ ես լուռ եւ անմըռունչ խաղաղեցայ հանդարտեցի,
 Զի ի Տեառնէ այս ամենայն եկն ի վերայ իմ բարկութիւն :



1961

ԳԼՈՒԽ Գ

Եղիփազ մեղադրե զՅոր 'ի կարճմտոռքիւն, և գուռ գործե յաղ-
 րահարեղ զնա և հաւնողն՝ զի 'ի Տեառնէ վասն մեղաց իւրոց կրէր
 պատուհաս, և զի ոչ պատուհասե Տէր զանմեղն :

Կրկնեալ անդրէն Եղիփազու թեմնացւոյ ասէ •

Դըժպըհի ապաքէն թուեսցին քեզ բանք, թէ խօսեցայց •
 Այլ ի լուր դըժոխըմբեր բանից քոց ո՞ հանդարտեսցէ :
 Խրատեցեր դու զյոգունս եւ տըկարաց ետուր խրախոյս,
 Ըզկարճամիտըս դիւրագայթըս կանգնեցեր յորդորանօք,
 Ծընդաց կըթուցելոց ըզգեցուցեր դու զօրութիւն •
 Արդ ի վերայ քո աւասիկ հասին չարիք, զն՝ վըհասիս •

(1) Իմաստնոյ է խիթալ միշտ 'ի յաջողութեան, և կասկածել զփոփոխումն
 բախտի. այլ մարթ է կարծել ևս՝ 'ի Տեառնէ ազդեալ 'ի Յոր կասկածանս, զի մի
 'ի յանկարծահաս չարեացն ընկճեսցի :

Ո՛ւր է երկիւղ քո ի Տեառնէ, անչարութիւն իսկ քոյին ո՛ւր .
Յուշ լիցի քեզ, աղէ Յոբ, ո՞ դք որ սուրբ էր եւ կորեալ, (1)
Կամ արդարք արմատաքի երբէք յերկրէ աստի խլեցա՞ն :
Նա աւանիկ տեսի երկունս ի նոցանէ դառինս հընձեալ,
Որք անպատէհս արօրադրեալ եւ ոյք անձահըս սերմանեն .
Տեսի զնոսս ի հրամանէ Տեառն ընդ երկիր կործան անկեալ,
Եւ ի սաստից սըրամըտութեան նորա եղեալ սատակամահ :
Մռնչիւն մատակ առիւծու լըռեալ յանտաւրս դադարեաց,
Լըռեաց առիւծ ահեղագոջ, շիջու հրաշունչ վիշապաց ոյժ .
Առ ի չգոյէ որսոց վագր անկաւ մեռեալ սովալըլուկ .
Կորիւնք առիւծուց լըքին զիրեարրս ցան եւ ցիր :
Եթէ էր տակաւին բան ճըշմարիտ ի խօսրս քո,
Ոչ արդեօք յայդպիսեաց ինչ ի չարեաց սլատահէր քեզ :
Բարբառ աղօտաձայն եղեւ զանխուլ ինձ լըսելի, (2)
Յարհաւիրրս գիշերոյ՝ մինչ մահացուաց տիրէ թըմբիր,
Անկաւ սոսկումըն զինեւ, ուժգին ոսկերք իմ սարսեցին,
Անց զառաջեալ իմով հողմ, քրսամնեցան հերք իմ եւ մարմինք :
Կանգնեցաւ ի հանդիպոյ եկաց տեսիլ ինձ անծանօթ,
Եւ լըսելի ընդ այերս հընչեալ թեթեւ ինչ սօսափիւն .
Իցէ՞ ինչ դք ի մարդկանէ սուրբ առաջի Աստուծոյ,
Կամ ի գործոց իւրոց ո՞ գըտցի երբէք դք անարաս .
Հաւատարիմք իսկ ծառայք նորին թէ կան դայթ ի գայթի,
Թէ զհրեշտակաց իսկ իւրոց խոտորնագոյնս ինչ իմացաւ,
Իսկ արդ զինչ որոց ի տունըս կաւեղէնս է բնակութիւն .
Մաշեցցին ցեցամէց, յայգուէ ցերեակ ոչ եւս իցեն .
Ապիկարք օգնել անձին՝ աստականեալ եւ կորիցեն .
Փըչեացէ ի նոսս հողմ, խորշակահար ցամաքեացցին,
Սատակամահ եղիցցին, զի չիք նոցա իմաստութիւն :

(1) Եղիփազ դնէ աստանօր իբր անսխալ օրէնս նախախնամութեան՝ յանցաւորաց և եթ կրել յաշխարհի վիշտս և պատուհաս, ուստի գլանցաւորութիւն Յոբայ տարապարտ զհետ բերեալ, ի սոյն միտս աստի յառաջ վիճեալ պնդի :

(2) Յողովք ՚ի մեկնչաց աստուածուստ զտեսիլս զայս համարին լեալ Եղիփազայ, թէպէտ և սխալէ նա ՚ի յանդիմանել այնուիկ զարդարն :

ԳԼՈՒԽ Ե

Դարձեալ մեղադրե Եղիսիազ զՅոր՝ հաստատելով զի ոչ գոր
պատուհասե Տէր առանց մեղաց . վասն որոյ յորդորե զեւս դիմեզ
առ Տէր զի ազատեացի 'ի վշտաց , և ցոռցանե առ այս զխնամե
Աստուծոյ 'ի վերայ արդարոց :

Արդ աղէ դու կարգա առ Տէր , Թերեւըս ձայն տացէ 'նա քեզ , (1)
Կամ Թէ զոք ի հրեշտակաց սրբոց տեսցես հասեալ առ քեզ ,
Զի սարանանէ բարկութիւն զայր դրժոխամբեր անկեալ ի վշտ ,
Եւ ընդ նրանէ այլոց բերեալ առ զայրացուկ սրբախն նախանձ :
Նա՛ ես տեսի արմատս ի խոր անըզգամաց ձրգեալ յերկիր ,
Այլ հարան վաղվաղակի կործանեցան խրլեալ յերկրէ .
Դատափետեալ վարեալ առ դրունս որդիք նոցա կողկողեսցին , (2)
Եւ մի գրացեն զոք ուրեք՝ որ աջ ի նախատ կարկառեսցէ :
Ըզկուժ եւ զհունձըս նոցա կերիցեն այլք , այլք ծըծեսցեն .
Ոչ վայրապար հասանեն ցաւք , ոչ ի լերանց բուսանին վիշտք .
Այլ մարդ յաղէտըս ծնանի , զերդ բարձր ի Թուխըս ձագք արծուեաց :
Հապա ըզՏէրն ամենեցուն անկեալ առ ոտըս կարգացից , (3)
Որ առնէ անբընինս եւ հրաշակերաս՝ ոյց ոչ գոյ Թիւ ,
Որ տայ անձրեւ ի յերկիր ըզբոյս եւ զտունկս արբուցանել .
Որ ի բարձունս առնէ զխոնարհս , եւ զկործանեալս ի վեր կանգնէ ,
Որ ըզխորհուրդ խորագիտաց ցըրէ , եւ մի յաջողեսցին .
Որ ըմբըռնէ զնոսս ի հաղբս ի յորողայթ լարեալ յինքեանց ,
Եւ զմէքենայս անօրինաց ըզբազմանիւթըս քայքայէ :
Ի տուէ սլատահեսցէ նոցա խաւար եւ մի տեսցեն ,
Խարխափեսցեն ըզմիջաւուրք որպէս որ գնան ի գիշերի .
Ապրեսցի ի սրոյ նոցա տըկարն ի մարտ սլատերազմի .
Յայնժամ խրախոյս բարձցէ տըկարն , անօրինին խըցցի բերան :
Երանի՛ զոր ի յերկրի աստ Տէր սաստեալ յանդիմանէ .
Մի ի խրատուէ նորա լըքեալ մի վըհատեալ հրաժարեսցիս .
Զի կործանէ նա , եւ անդրէն ձեռըն տըւեալ կանգնէ ի վեր ,
Հարկանէ , եւ ձեռք նորա սլատեն դարձեալ եւ բըժըշկեն .

(1) Այսինքն՝ եթէ չիցեն բաւական բանք իմ ածել զքեզ 'ի հաւան , հայցեա 'ի Տեառնէ լուսաւորել զմիտս քո 'ի ձեռն ուրուք 'ի հրեշտակաց :

(2) Զի առ դրունս քաղաքաց 'ի հնունձն զնէր ատեան , և անդ առնէին դատաստանք :

(3) Խրատե 'ի գէմս իւր զՅոր կարգալ առ Տէր , և առանց գանգատանայ խընդրեւ 'ի նմանէ սփոփունն վշտացն :

Վեցիցս ըզքեզ ի միջոյ տառապանաց քոց զերծուցէ, (1)
 Յեօթներորդումն ապա ոչ եւրս մերձեացին առ քեզ չարիք :
 Ի սովի փրկեացէ զքեզ ի մահուանէ, եւ ի մարտի
 Ապրեցուցէ ի ձեռաց բազմախողխող պողովատի .
 Ի նեախց շրթանց նա ինքրն քեզ լիցի պատրասարան,
 Եւ ի չարեաց մի ի վերայ քո եկելոց զանդիտիցես .
 Արհամարհեալ ծաղր առնիցես զբաւառնալիս անըզգամաց,
 Ի գազանաց վայրենեաց մի զարհուրեալ սասանիցիս,
 Եւ սպառնականք ի դաշտի մի ստնանեացեն քեզ շուրջ քարինք . (2)
 Գազանք ընդ քեզ վայրենիք խաղաղեացին հեզահամբոյրք .
 Անշարժ ի տան քում յայնժամ կայկայեացի խաղաղութիւն,
 Եւ ի յարկի քում ամենայն ինչ անվըրէս տնօրինեալ :
 Շուրջ պար առեալ յայնժամ ըզքեւ տեսցես մանկունքս խուռներում,
 Որպէս բանջար ի դաշտի աճեալ որդիք քո բազմացցին .
 Լիովք ամօք երթիցես ալեւորեալ ի գերեզման,
 Որպէս ցորեան հասկահասուն հրնձեալ յիւրում ժամանակի,
 Իբրեւ ըզէզ ի կալոյ յիւրում ժամանակի շտեմարանեալ :
 Մէք զայս այսպէս գիտացաք, զայս եւ ի հարց այսպէս լուեալ .
 Բայց դու խորհեա զինչ գործեցեր եւ խելամուտ լեր յանձրն քո :

ԳԼՈՒԽ Զ

Աստուծօր ցոռցանէ Յոք ընդդէմ յանդիմանութեանցն Եդիփազայ, ըստ սովորական օրինաց արդարութեան Աստուծոյ՝ առաւել քան զկշիռ յանցանաց իշրոց հասնալ՝ ի վերայ իշր փորձանս . զի քեպետ եւ մեղաւոր զանձն խոտորմանի, այլ զխիղձ մտաց իշրոց գտնալ անբռնէ ի ծանոռնց յանցանաց, եւ զամբաս ողորմութիւնն Աստուծոյ՝ ի ներքս ածնալ, տայ ի միտ առնուլ՝ զի փորձանքն այնոքիկ ոչ ի պատուհաս գայիս նմա ի Տեառնէ, եւ զի չէր արժան զարմանալ ընդ գանգատանս՝ որովք զդժնդակութիւնն աղետիցն բացայայտէր . եւ տրուցէ ընդ րողոշ յքանել զնա բարեկամացն :

Արկնեալ անդրէն Յոբայ ասէ .

Թէ կըշուելով որ կըշուէր բարձեալ ըզմեղս իմ ի նրժար,
 Եւ հանդէս նոցին ըզվիշտս իմ եւ զաղէտս համանգամայն,

(1) Ի թիւ սահմանաւոր զանսահմանելին յայտ առնէ :

(2) Անշարժէ ի խուժադուժ սովորութիւն Արարացւոց կանգնելոյ քարինս շուրջ ի դաշտի, սպառնալով այնուիկ չարիս ծանուան՝ որոց անդ իշխիցեն առնել մշակութիւն եւ արարս :

Ծանրագոյն յոյժ քան զաւաղ ծովու ի ստոր սայք միտէին :
Նա ուրեմն ի բողոքէլ առ Տէր իցեմ ես անըզգամ .
Զի նեաք Տեառն ի մարմնի խնամ մըխեալ կան սայրասուրք ,
Եւ զարիւն իմ զայրոյթ սըրամըտութեան նոցա ծըծէ .
Այն ինչ խօսել ըսկըսեալ , եւ կեղեքեն կըտտեն զողիս :
Դըժոխըմբէրք են կըշտամբանըդ ինձ անողոք եւ անիրաւ :
Թէ անալի ուալցի հաց , կամ է՞ ի զըոյց համ ի սնտի . (1)
Իսկ զհարդ , մի թէ զնէր տարասարտուց խանչիցէ ցիւ ,
Ո՞չ առ քաղցի խընդրէ ճարակ էրէվայրի սովալըլուկ ,
Կամ գոչիցէ եզն առ մըտուր եթէ գտանէ խար ի մըսրին .
Սա աւասիկ ոչ կարէ անձն իմ ժուժկալել բուժել ըզքաղց .
Շարաւալից ըզկերակուր իմ տեսանեմ իբր առիւծու :
Յոյս իմ իցիւ ճըշմարտեալ , եւ լիցին ուխտք իմ լըսելի . (2)
Զի խոցոտել զիս ըսկըսաւ Տէր , ո՞ գիտէ գուցէ սպանցէ .
Լիցի քաղաքն իմ ինձ շիրիմ , զոյր պարըսպօքըն ճեմէի .
Մեռայց յօժար , եւ մի պատգամք սըրբոյն ելցեն յիս ի դերեւ ,
Զի զօրութիւն իմ աղէ զինչ է թէ ի սպառ համբերեցից ,
Կամ երբ ցաւոց իմոց վախճան՝ թէ տոկալ անձն իմ կարասցէ .
Մի թէ վիմաց ինձ զօրութիւն , կամ թէ պղընձիք իցեն մարմինք .
Եթէ ոչ ինքն ինձ հըզօրն արասցէ այց , յոյժ եմ տըկար :
Չիք ուստէք ինձ օգնութիւն , փակեալ բնաւից գութ եւ գորով .
Մերձաւորք իմ գարձուցին զերեսս յինէն գնացին ի բաց .
Որպէս սըրնթաց սահեալ վըտակ , որպէս ալիք անցին զինեւ :
Որք յինէն ահիւ սարսեալք՝ այժմ աւասիկ յիս յարձակին .
Լըքայ յամենեցունց , լըքայ կորեայ եւ տնանկացայ .
Զինչ էի , զինչ եմ այժմիկ , աւա՛ղ , ի սպառ այլակերպեալ ,
Իբրեւ ըզձիւն կամ ըզսառն ի ճաճանչից արփիսահրատ
հալեալ՝ ի ջուր լուծեալ , որ ոչ ճանաչիցի որպիսի էր :
հայեցարուք ի Թեման , ահն ի շաւիղս արկէք Սաբայ , (3)
Որ ի գոյս են յուսացեալ , որ ի քաղաքս՝ յամօթ լիցին .
Դա եւ գուք անողորմ արդ ի վերայ իմ հասէք ,

(1) Գանգատի զանկարեկիր բանից Եղիփաղայ , և անտեղի ցուցեալ զայն՝ յաւելու զի և ոչ անալի ինչ և անհամ ախորժելի է ՚ի ճաշակ , թող թէ այնպիսի բանք ՚ի լուր . և զանտեղութիւն բանից նորա ՚ի բնութենէ իսկ անբանից ցուցանէ , որք բողոքեն առ քաղցի :

(2) Թողացուցեալ էր դիւին ՚ի Տեառնէ բռնանալ ամենայն շարեօք ՚ի վերայ Յորայ , այլ մի սպանանել զնա . իսկ Յոր ցանկայ մահու և խնդրէ զայն ՚ի Տեառնէ , զի մի գուցէ նուազեալ ՚ի համբերելոյ և մեղիցէ :

(3) Եղիփաղ ՚ի Թեմանայ էր , և Բաղդատ և Սովիար ՚ի Սաբայ , մին սաւրեցի և միւսն մինեցի : Սրդ և ՚ի սոցանէ վշտացեալ , յորոց յուսայրն միսիթարութեան , և որ ընչեղքն էին և իշխանք քաղաքաց , սուտ ցուցանէ գյուսալ յիշխանս և ՚ի մեծութիւնս :

Որ ի վերս իմ հայեցեալ եւ արհաւրօք ընկճէք զոգիս :
Ե՞ս ինչ ըզձեզ խընդրեցի եւ կամ կարօտ իցեմ ինչ ձեօք ,
Ընդդէմ հինից կամ յերեսաց հըզօրի գոչ ինձ ապաւէն .
Ուսուցէք զիս՝ եւ լուեցից , ցուցէք ինձ լոյս՝ թէ խարխափեմ :
Խոտանք ուրեմն այսօրիկ թըւին ձեզ բանք ճըշմարտութեան .
Այլ ոչ ի ձէնջ է զօրութիւն սայց , իւրովի են սայք հըզօր . (1)
Նա եւ ոչ կըշտամբանք ձեր ըզըրթունս իմ կարկեսցեն .
Հողմոց ի լուր բարբառիք , ոչ անսացից բանից ձերոց .
Իբր որբոյ ողորմելոյ եկեալ հասեալ էք յիմ վերայ ,
Եւ ընդդէմ բարեկամի անագորոյն դըրդէք սայքար .
Բայց լուարուք , եւ խելամուտ լիջիք զի չեն բանքս անիրաւ .
Դատաւորք բաղմեցարուք , այլ իրաւանց կացէք սպասկառ ,
Ձիք ի շըրթունս իմ սըտութիւն , երկնէ կոկորդ իմ ըզհանձար :

ԳԼՈՒԽ Է

Բացատրե Յոր ընդ աղետս մարդկային կենցաղոյս և գիշրան ,
և ոչ ևս յոչսարով յատի կեանս փայելոյ 'ի բարեկենդանութեան ,
խնդրե 'ի Տեսանէ զերծանել յաղետից աստի , և զարմանայ ընդ
խնանս Տեսան 'ի վերայ քոչսառ մարդկան :

Ո՛չ ապաքէն փորձութիւն են ի յերկրի ասա կեանք մարդոյ ,
Եւ կենցաղ իւր ընդ երկնաւ իբր առօրեայ վարձ վարձկանի .
Որպէս ծառայ յահէ տեառն իւրոյ զողեալ ընդ հովանեաւ ,
Իբր ըզվարձկան որ սպասիցէ առնուլ ըզվարձ իւր ընդ երեակ ,
Հանգոյն եւ ես ըսպասեցի դէտակն ամսոց կալեալ սնոտեայ ,
Եւ գիշերըս ցաւագինս հեծեծելով արկի ի թիւ :
Այն ինչ ի նինջ զաչըս փակեալ , եւ հառաչեմ էրբ իցէ տիւ .
Եւ իբրեւ այն ինչ յարուցեալ , դարձեալ թէ էրբ իցէ երեկ .
Կողկողիմ ի ցաւոց յերեկորեայ ցըդարձ այգուն .
Կեղովք եւ զազրութեամբ որդանց մարմին իմ թաթաւեալ ,
Եւ զկոշտ երկրի մաշեցի առ ի զթարախս իմ քերեղոյ :
Թեթեւագոյն քան խօսք ընդ օդս անցին աւուրք իմ եւ կորեան ,
Համօրէն ընդ նոսին եւ յոյս սնոտի ունայնացեալ .
Յիշեա Տէր , զի ոչ եւս աչք իմ դիտեսցեն ըզբարութիւն ,
Ձի փութք են կեանք իմ , եւ ոչ եւս հայեսցի ակն յիս տեսողի .
Աչք քո ի յիս , ակնարկեա եւեթ , եւ այլ ոչ եւս իցեմ ,

(1) Այսինքն զի 'ի չհաւանելոյ բարեկամացն ընդ բանս իւր՝ չտկարանայր ճըշմարտութիւն նոցա , յինքեանց ունելով նոցա զօրութիւն :

Իբրև ամս ջրնջեալ յերկնէ, ոչ խակ ըզհեա թողեալ շաւիղ .
 Զի իջանել թէ ի դրժոխս որ իջանէ, ոչ եւս ելցէ,
 Եւ ոչ ի տուն իւր դարձցի, ոչ ըզնա վայր իւր ծանկցէ :
 Հասցա ճն այսուհետեւ ոչ եւս ի շուրթն իմ խնայեցից,
 Բըղխեցից ըզգառնութիւն, հեղից ըզվիշտս անձին խնոյ .
 Մի թէ ծով իցեմ ես մըրըրկալից կամ թէ վիշապ, (1)
 Զի կարգեցեր զինեւ պահ ըզառաարանս եւ զհեծութիւն .
 Ասացի թէ անկողինք իմ ինձ լիցին ի քաջալեր,
 Եւ ափոփեցայց ի մահճի դոյզն ընդ անձին լեալ խօսակից .
 Այլ երազովք ինձ արհաւիրս անդ արկանես անդոհականս,
 Եւ տեսլեամբք ահաւորօք զիս ի յանուրջս իմ հարկանես .
 Թափես յանձնէ իմնէ զողի, բառնաս ըզուռնչ իմ ի մարմնոյ,
 Իսկ ընդէր ոչ եւ ըզկեանս իմ տաս կապտել մահու յինէն .
 Զի թէ կելով կեցից, եղէց ինչ ոչ գիտեմ երկայնամիտ : (2)
 Ամփոփեա զձեւըն քո յինէն, զի ընդունայն կեանք իմ են ինձ .
 Զինչ է մարդ զի խնամարկես դու զնա, հայիս ի նա մըտօք,
 Զի սահալանես դու զնա, զի այց ընդ առաւօտս անես նրմա :
 Մինչեւ յերբ ոչ թողուցուս անուլ վայրիկ մի ինձ հանգիստ,
 Զի կլանկցեմ ես ըզտողուկս իմ ի ցաւոց հեղձամըղձուկ :
 Զի թէ մեղայ, որ սըրտագէտդ ես որ քրննես զերիկամունս՝
 Դու գիտես զի զքեզ ինձ հաշտ ցանկամ ի կեանս եւ ի մահու .
 Իսկ ընդէր եզիր ստիս զիս քեզ եւ բեռն ինձ անըմբեր .
 Քաւեա ըզմեղս իմ, Տէր, սըրբեա ի մոռացօնս արկ զայն ի խոր .
 Զի յերկիր ահա դարձայց ընդ հուսպ, եւ այլ ոչ եւս իցեմ :

ԳՂՈՒԽ Ը

Մեղադրեւ և Բաղդաստ զՅոր իբր յամառնայ և մեծաբան, և յորդորեւ զնա դառնայ սա Տէր և վայելել անդրեւ ՚ի բարեկենդաւնորիւն, սևուտի ցոռցանկրով զյոյս արկարչուաց և զարդարոցն անիրիպելի :

Կրկնեալ անգրէն Բաղդաստայ սաւքեցւոյ ասէ .

Մինչեւ ցերբ խօսիցիս զայդ աստուածընդդէմ մեծաբանեալ .
 Մի թէ զուր տարասլարտուց եւ անիրան դատիցի Տէր,

(1) Ոչ միայն զնհանգս ծովու, այլ և զծով ինքնին նկարագրեն սուրբ Գիբր որ պէս գազան կատաղի սանձահարեալ ՚ի Տեառնէ ՚ի սահմանի՝ ընդ որ չկարէ անցանել մրմռեալ և զայրացեալ. վասն որոյ ասէ Յոր . Մի թէ հանգոյն ինչ նոցին իցեմ, այսպիսի և այսքան վշտօք կարօտ նուաճելոյ :
 (2) Երկնչի աստանօր թէ գուցէ չկարիցէ համբերել ՚ի սպառ, և խնդրէ ՚ի

Կամ որ արար զամենայն՝ պրղտորիցէ՝ ինչ զիրաւունս .
Եթէ որդիք քո մեղան , ետուն ըզվրէժ մեղաց իւրեանց . (1)
Բայց դու կանխեա աղօթիւք , կարդա առ Տէր ամենակալ .
Եթէ իցես սուրբ եւ արդար , լիցին աղօթք քո լըսելի .
Դարձցի անդրէն խաղաղութիւն եւ լիութիւն ի յարկըս քո ,
Եղիցին առ առաջնովքն քովք վերջինք քոյն անբաւք : (2)
Բայց աղէ հարց զազգս առաջինս եւ զյիշատակս հայրենաւանդ ,
(Զի երիկեանք եմք , ոչ գիտեմք , զի ստուերք են կեանք մեր ի յերկրի ,)
Եւ ուսուսցեն քեզ նոքին , տացեն պատգամս աստուածուսոյց .
Կանաչանայ երբէք պրրտու առանց ջրոյ բարգաւաճեալ , (3)
Եւ առանց ըմպելոյ բարձրանայցէ երբէք կրնին .
Այլ անդէն իսկ ի վերայ արմատոյն ո՛չ ցամաքեսցի ,
Թէպէտ եւ զերծ ի դերանդւոյ , անձեռնմերձ ի հրնձողէ :
Այս վախճան է այնոցիկ որ ոչ ի յուշ ածեն ըզՏէր .
Զի կորիցէ ամպարըշտի յոյս ի յերկրէ անյիշատակ ,
Աւերեսցի տուն նորա վաղ քան ըզգիւրեղծ սարգիստայն .
Թէպէտ եւ ձեռն արկցէ ընդդէմ առ ի նեցուկ , անկցի կործան .
Իսկ արդարն՝ յարեգակնէ եւ ի ցօղոյ աճեցեալ ծառ ,
Ի կարկառըս քարանց դաւարադեղ կանաչասցի ,
Եւ ի մէջ մանրախիճ քարանց կեցցէ արմատացեալ .
Թէ եւ հատցի , արմատաքի իսկ ի կայիցն եթէ իսլեսցի ,
Սակայն անդրէն կայկայեսցի նորաբողբոջ շառաւիղեալ :
Զի ոչ մերժէ Տէր զանմեղն , անարդէ զզոհ ամպարըշտի .
Յայնժամ երեսք քո ծաղկեսցին ծաղու , շքրթունք քո դոհութեամբ .
Ամաչեսցեն նեղիչք քո , յարկք անօրինաց ոչ եւս իցեն :

Տեառնէ մահ . և դարձեալ զմտաւ ածեալ զմարդասիրութիւն նորա , հայցէ վախճան աղետիցն . յանցաւոր զանձն խոստովանի , այլ ինդրէ 'ի Տեառնէ մի թշնամի իւր զինքն համարել , ներել մարդկօրէն թերութեանցն և տկարութեան յանցանաց :

(1) Եւ սա ինքն 'ի նոյն միտս Եղիվազայ՝ համարի զորդիս Յորայ 'ի պատուհաս մեղաց իւրեանց վախճանեալ . զհետ բերելով զի չէք ոչ ևս վասն նոցա յոյս . իսկ զՅօր քաջայոյս առնէ 'ի բարիս՝ եթէ դառնայցէ և եթ առ Տէր :

(2) Այսինքն զի առաջնոց բարեացն՝ յորս վայելէր՝ գեր 'ի վերոյ լիցին վերջինքն :

(3) Այսինքն զի անպարիշտք զրկեալ յօգնութենէ Տեառն՝ կորիցեն , որպէս բոյսք 'ի յանջրդւոջ :

ԳԼՈՒԽ Թ

Խոստովանի Յոք արդար յամենայնի գՄատուած, և զի չկարէ արդարանայ առայի նորա և ոչ որ. ցոռցանէ զամենակիս զօրոշ րիւն նորա և զիւնատոռքիւն ամբար, որոշմ ոչ որ կարիցէ կսո հակառակ. և զի նովիւն իմատոռքեամբ և զօրոշքեամբ հարկանէ և զանմեղն ընդ ամպարչտիւն. և դարձեալ դիմէ առ Տէր վասն զերծանկոյն ՚ի վշտակրոշքեանց, խրախոյս ՚ի վկայոշքեանէ խղճի մտացն առեալ:

Վրկնեալ անդրէն Յոբայ ասէ.

Այո ամենեւին, գիտեմ թէ այդ այդպէս իցէ.
Ձի զիւրդ արդարացի մարդ առաջի Աստուծոյ.
Ձի դասել ընդ նմա թէ իշխեսցէ, սրապանձեսցի.
Եւ ոչ մի հազարոյ կարասցէ տալ սլատասխանի:
Հըզօր մըտօք է եւ բազկաւ փառաւորեալ եւ մեծագործ.
Ո՞ր ի վրսեր գալ ընդ նրմա որ յանդրվնեալ եւ հանդարտեաց.
Որ փոփոխէ բառնայ զլէրինս՝ ոչ ինչ նոցա լեալ իրազգաց.
Տասալէ զնոսա ցամամբ, զառ ի ներքոյս երկնից շարժէ,
Եւ սիւնք նորա ի հիմանց ըզգողանի հարեալ սարսեն.
Որ հրաման արեգական տայ մի ծագել, եւ ոչ ծագէ.
Եւ ընդդէմ աստեղաց կընքէ, եւ ոչ դան յերեւան:
Որ ինքնին միայնակ ձրգեաց զերկին լայնածաւալ,
Եւ ի վերայ ալեաց ծովու շրջի ի արամ իբր ի գեանի.
Որ արար ըզբազմաստեղս եւ զուսարփին գիշերավար,
Ըզսայլ հիւսիսաձեմ եւ զհարաւոյ զըշտեմարանս.
Որ առնէ անքընինս եւ հրաշակերաս՝ ոյց ոչ գոյ թիւ.
Եթէ անցցէ առ ինեւ, զանխուլ յաչաց խնց սրանայ.
Թէ վերասցի նա զինեւ, բնաւին իսկ ոչ տեսից ըզնա.
Թէ հրամայէ սլատուհաս, ո՞ր դարձուցէ զայն ի բաց,
Կամ ո՞վ ասիցէ թէ զայդ ընդէր ետուր հրաման.
Ձի ինքն է տէր, եւ ի սասաից նորա սարսեն սլեաք ընդ երկնաւ:
Իսկ ո՞ր եմ ես, զի լուիցէ ինձ՝ երեսս խնց առնել բանից.
Ձի թէ իցեմ եւս արդար, կարող է զուձին յինէն փակել. (1)
Յաղերս ուրեմըն խոնարհեալ ըզգութ նորա ալաչեցից.
Եւ թէ իցէ թէ անսայցէ, իցեմ այնուիկ լեալ լըսելի.

(1) Թէպէտ և ամենայն ուրեք վկայէ չգիտել անձին ծանունս ինչ յանցուցեալ, սակայն չհամարի այնու արդարանալ. և յաւելու խոստովանել խոնարհութեամբ զիւր և զամենեցուն տգիտութիւն մինչև անգիտանալոյ թէ իցէ Աստուած ընդ իւր կամ թէ օտարացեալ ինքն ՚ի Տեառնէ:

Զի վայրապար խի կարէ մըրըրկահար զիս սատակել,
 Եւ զեղուլ զինեւ հարուածս անդուլ, լընուլ զիս դառնութեամբ .
 Քանզի հըզօր է՝ բըռնանայ, եւ ո՞նրմա կացցէ ընդդէմ :
 Թէ փորձեցայց տալ ընդ անձին պատասխանի, ամպարըշտեմ .
 Եւ կամակոր գտանիցիմ, եթէ իցեմ խի անարատ .
 Գուցէ երբէք յանցուցեալ, եւ զայն թերեւս անգիտանամ .
 Այլ զարդարն եւ զյանցաւոր գիտեմ զի Տէր կորուսանէ :
 Չարաչար մահու սպառեալ թէ կորընչել կորընչին չարք,
 Սակայն արդարք եւս այսպանին, մասնին ի ձեռս ամպարըշտաց
 Գատափեալք յատենի, եւ կուրացեալ անդ դատաւորք .
 Եւ այսոցիկ ո՞նր այլ որ, եթէ ոչ ինքն իցէ անօրէն :
 Այլ իմ կեանք արադաթեւ քան ըզթեթեւ են սուրհանդակ .
 Որպէս ըզնաւ ընդ ալիս սահեալ եւ ոչ եւս երեւին,
 Հանդոյն արծուոյ թռուցելոյ որ խընդրիցէ իւր կերակուր :
 Թէ չխօսիցիմ, զերեսս ի վայր յայնժամ արկեալ հեծեծեցից .
 Երկիւղ է ինձ թէ չիցեն ողբքս իմ առաջի Տեառն անարատ .
 Ընդէր ապա ոչ մեռայ, զի խնայէի զանձն յարատոյ .
 Եթէ ձեամբ խի լըւացեալ եւ սըրբափայլ ինձ թըւիցիմ,
 Այլ ազակդի յաչքս քո եւ թաթաւեալ թուեցայց ի տիղմ .
 Զազրասցին, յինէն ի բաց դարչեսցին ձորձք իմ նողկանօք .
 Զի չես դու իբրեւ ըզմարդ ընդ ում դատել թէ մարթացայց,
 Կամ կարացից ընդ նրմա գալ հասարակ ի դատաստան .
 Յանկարծ միջնորդ թէ ի միջի գոյր մեզ ի լուր . այլ չիք խի որ . (1)
 Հապա ի բաց ըզգաւաղան իւր արասցէ հըզօրն յինէն,
 Եւ մի այսուհեաւեւ ահ նորա զիս խռովեցուցէ .
 Մի եւս երկեայց, այլ խօսեցայց, զի ի յաղերս համբ է երկիւղ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ

Գիսկե առ Տէր՝ դարձեալ զպատճառ վշտակրոշրեանցն հետա-
 զօտելոյ . վիսայոշրիւն խղճի մտացն իւրոց և ողորմոշրիւն Աստու-
 ծոյ՝ ի ստեղծանել զնա և ի պահպանել՝ յաւելոշրն մրագնել զխոր-
 հոշրոս ևորս, և դարձեալ աշտոյէ զգալ իւր ի յոյս :

Հեծեծելով հասուցից ըզձայն ողբոց իմոց առ Տէր,
 հառաչանա աղիողորմ ի սըրտաւուս շըրթանց հեղեալ,

(1) Աստուած տէր է և իշխան ի դատելն, և չիք որ ի հրեշտակաց կամ ի
 մարդկանէ՝ որ ի մէջ կարացէ մտանել, և գնել պայման արդարութեան նորա
 առ մարդիկ, և հաշտարար կալ ի միջի . այլ տես ինձ աստանօր թէ որպէս ցան-
 կոյ Յօր բանիւս այսուիկ միայնումն միջնորդի՝ որ հանդերձեալն էր զալ և առ-
 նել խաղաղութիւն ընդ Աստուած և ընդ մարդիկ :

Եւ ասացից . Մի ինձ , Տէր , մի ուսուցաներ ամպարըշտել ,
Ընդէր այսպէս դատեցար եւ ներեցեր զըրպարտել զիս
Շըրթանց անիրաւաց , եւ զգործ ձեռին քոյ մերժեցեր :
Մի թէ հանգոյն ինչ մարդոյ տեսանիցեն , Տէր , աչք քոյին .
Կամ հայեցին որպէս զայր , կամ իբրեւ զառն ամբ քո սահեալ , (1)
Զի վերըստին այց եւ խընդիր առնես խնոցրս մեղանաց .
Գիտես զի ոչ հեստեցի ամպարըշտեալ յօրինաց քոց .
Այլ ո՞ երբէք յատենէ քումմէ ելցէ արդարացեալ .
Ձեռք քո արարին եւ ըստեղծին զիս ի հողոյ ,
Եւ արդ դառնան հարկանել զիս . յիշեա զի կաւ զիս ըստեղծեր ,
Եւ յերկիր միւսանգամ յեղաշըրջեալ դարձուցանես :
Ո՞չ իբր ըզկաթըն զիս կըթեալ եւ մածուցեր իբր ըզպանիր ,
Մորթ ինձ եւ միս ըզգեցուցեր , ոսկերբք հանար զիս եւ ջուօք .
Ետուր ինձ շունչ , ողորմեցար ինձ եւ զողի իմ սլահեցեր :
Զայս ամենայն լըռել լըռես , այլ մոռանաս դու ինչ ոչ . (2)
Որ զի թէպէտ եւ մեղիցեմ , այլ դու դարձեալ սլահպանես զիս .
Այլ ընդէր անարատ զիս ի մեղաց ոչ արարեր .
Թէ մեղաւոր եմ , վայ է ինձ . սակայն արդար խկ թէ իցեմ ,
Լի անարգանօք չկարեմ եւ ոչ ի վեր հայել ,
Եւ զյոխորտանս իմ ընկճես որպէս որսորդ զառիւծ նուաճեալ .
Նորոգես յիս ըզհարուածըս , չարաչար սատակես զիս .
Հէն ի վերայ իմ ածես՝ ծանրացասումն ինձ սլատահեալ .
Ընդէր հաներ զիս յարգանդէ , եւ ոչ անդէն եւ անդ մեռայ .
Յանկարծ ական չէր զիս տեսեալ եւ լինէի իբր ըզէղեալ .
Ընդէր խկ ոչ յորովայնէ ի գերեզման վըճարեցայ :
Իսկ քանի՞ն աւուրք են իմ , թոյլ արտ ինձ սուղ ինչ հանդէլ
Մինչեւ իցեմ երթեալ յերկիր՝ ուստի ոչ եւրս դառնայցեմ ,
Յերկիր խաւարին , յերկիր մըթին ուաղջամըջին ,
Յերկիր յաւերժական՝ ուր ոչ գոյ ըլլս , ոչ յոյս կենաց :

(1) Մարդիկ սակաւօրեայք չեն ինչ զարմանք զի սլարտին քննել և խուզարկել առ ՚ի գիտել ինչ և դատել , այլ դու Աստուած յախտնական՝ ամենագէտ ես , անցեալն՝ այժմուս և սուրբայն մերկասլարանոց կան առաջի ւշաց քոց :

(2) Այսինքն թէպէտ և մոռացօնք թուիցին լեալ քեզ ողորմութեանցդ առաջնոց և զի ստեղծուած ձեռին քո եմ և յանբաւ խնամս քո վայելեալ , այլ գիտեմ զի յիշես դու զամենայն , և առ սիրոյ յաճախես վիշտս ՚ի վերայ իմ :

ԳԼՈՒԽ ԺԱ.

Դատաւարաբան Սովիար տարաւարտոց զՅոր, և համարի պատուհասեալ զնա փասե մեղաց իւրոց և ապառամբերոյ 'ի Տեսակե, և ապա յորդորե զնա դառեալ առ Տէր 'ի յոյս ընդունելոյ ակորեկ գրարիս :

Կրկնեալ անգրէն Սովիարայ մինեցւոյ ասէ .

Որ շատ խօսի, ապաքէն հարկ լիցի նրմա եւ լրսել .
Կամ որ խօսողն իցէ, տայն նրմա բանիւք արդարանալ .
Լըռեսցեն այլք, կարկեալ կացցեն ի լուր բանից քոց անմրուռիւք :
Մի ասեր թէ անարատ առաջի Տեսան իցես գործովք . (1)
Յանկա՛րձ խօսէր ընդ քեզ Տէր, յանկա՛րձ չըրթունա առ քեզ բանայր,
Հանել ըզգաղանիս խնայուածեան իւրոյ ի վեր .
Յայնժամ ի միտ առնուիր զի ըստ մեղաց քոց անց ընդ քեզ :
Կարիցես հասու լինել հետոց նորա, եւ գիտիցես
Չաստուածախնամ տեսչուածեան զօրէնա ըզկարգ եւ ըզսահման .
Գեր ի վերոյ է քան զերկինս, աղէ դու զի գործիցես .
Խոր քան զանդունդըս գրժոխոց, եւ կարծիցես գոլ խելամուտ .
Լայնատարրը քան զերկիր, եւ ընդարձակ է քան ըզծով :
Ըզտիւզերս առ հասարակ թէ վեր ի վայր տապալեսցէ,
Ո՛վ ասացէ թէ զիարդ այգալէս դու զայդ գործեցեր . (2)
Չիք ինչ զանխուլ ի նմանէ, իցէ՞ թէ ակն ամենատես
Ի տեսանել զանարժանըս կարիցէ առնել անտես .
Այլ անկուշէ մարդ անաստէ, եւ խընդրէ այր կանանցածին
Խոյս ի սանձուց տալ ի բաց հանգոյն ջրուոյ անսպասի :
Արդ եթէ սուրբ իցէ քո սիրա, տարածեա զձեռըս քո առ նա .
Իսկ թէ իցէ ինչ ի ձեռին քում անհաճոյ յաչըս նորա,
Հեռի արա զայն ի քէն, եւ ի յարկի քում մի ազցի .
Յայնժամ երեսք քո փայլեսցեն իբրեւ ըզջուր ականակիտ,
Մերկասցիս ըզխոհերս եւ ի չարեաց ոչ երկիցես,
Եւ մոռացիս ըզվիշարս քո իբրեւ զալիս ուղիսից սահեալ :

(1) Անիրաւի աստ Սովիար, զի չիք ուրեք այսպիսի ինչ ասացեալ Յորայ . որ թէպէտ և բազում ուրեք յայտ առնէ զվկայութիւն խղճի մտաց իւրոց՝ գոլ զերձ 'ի մեղաց մեծաց, այլ լի երկիւզիւ վասն ներեւեաց և անյայտից՝ որ ճաճկագիտին և եթ Սատուծոյ են յայանի :

(2) Կամի տալ 'ի միտ առնուլ, զի առաւել ևս անիրաւեր Յոր 'ի տրանջել զարկածիցն 'ի վերայ տան իւրոյ հասեւոց :

Իբր ի արխուր գիշերի քեզ արուսեակըն ծագեսցէ ,
 Եւ ընդ երեկըս կենաց դարձցի քեզ լոյս միջօրէի :
 Մի վրիպեսցի յոյս քոյին վըստահացեալ աներկեւան ,
 Եւ ի հոգոց միջի յանկարծ երեւեսցի խաղաղութիւն .
 Հանդարտեսցես , եւ ոչ որ յարկցէ 'նդ քեզ ի պատերազմ .
 Դարձցին աղաչաւորք հեղուլ առ ոտըս քո աղերս :
 Այլ ամապրիշտք մի կեցցեն , զուր ակընկալեալ ի փրկութիւն ,
 Եւ յոյս 'նոցա լըցի անձանց իւրեանց ի մահ եւ ի կորուստ :

ԳԼՈՒԽ ԺԲ

Ան 'ի լուսնոցանեղ գրարեկամս իւր՝ որ զիմաստոքիւնն Աստուծոյ և զգօրոքիւն 'ի դեմս ածեիև ևսնա 'ի կշտամբանս , ցոցանեկ ոչ ուրոք անգիտանալ զայն , և համագոյից իսկ վկայեղ զայն անբարբառ :

Վրկնեալ անդրէն Յոբայ ասէ .

Իսկ արդ ուրեմըն դո՞ք եւեթ մարդիկ իցէք , ուրեմն ընդ ձեզ Վախճանեսցի խմաստութիւն . է եւ յիս սիրտ իբրեւ ըզձերդ ,
 Այլ այր արդար եւ անարատ եղեւ ի ծաղը ի կատականս . (1)
 Ի ժամանակ սահմանեալ դարձցի անդրէն պայծառացի ,
 Տեսցէ ըզտուն իւր կանգուն ըզկործանեալն յամապրըշտաց :
 Սակայն մի՛ որ , որ չար իցէ , անպատուհաս գոլ յուսացի .
 Որք միանգամ ի ցասումըն բարկութեան դըրդեն ըզՏէր ,
 Ո՞չ լինիցի 'նոցա այց , ո՞չ լինիցի 'նոցա խընդիր .
 Հա՛րց աղէ զչորքոտանիս , եւ լըւիցես պատասխանի .
 Ըզթրուչունըս թեւաւորս , եւ ասացեն թրուչոնք քեզ զայն .
 Ճառեա երկրի , հարց ըզնա , եւ խեղամուտ արացէ զքեզ .
 Պատմեսցեն ձրկունք ծովու թէ՛ ո՛ արար զայս ամենայն ,
 Եթէ ո՞չ ի ձեռին նորա իցէ շունչ կենդանեաց ,
 Եթէ ո՞չ ի նմանէ բնաւից մարդկան պահպանեալ կեանք .
 Զի միտք ըզբանըս քըննեն , քիմք ճաշակեն ըզկերակուր . (2)
 Թէ յամայր ամս խմաստութիւն թէ ի յոլով կեանս է հանձար .
 Ի նմանէ միտք եւ կորով , նորա է տալ ըզհանձար :
 Թէ ինչ յէից կործանեսցէ , ո՞ իսկ շինեւ զայն կարացէ .

(1) Ուր ուրեք պարծանաց են բանք , յերրորդ դէմս խօսի զանձնէ , որպէս և աստ :

(2) Այսինքն որպէս քիմք ընտրեն ճաշակաւ զկերակուրս , այսպէս և միտք յէից աստի խմաստասիրեն զիմաստութիւն և զգօրութիւն Աստուծոյ :

Թէ փակեացէ ընդդէմ մարդկան , ո՞ խակ բանալ զայն զօրեացէ .
 Ըզջուրս յերկնից թէ արգելցէ , պապքի երկիր առ հասարակ .
 Թոյլ հեղեղաց եթէ տացէ , կորուսանեն զայն ողողեալ .
 Ի նմանէ միտք եւ կորով , նորա է տալ ըզհանձար .
 Ինքըն խրատէ զխորհրդականս , ըզդաստաւորս յասուշ կրթութէ .
 Նըստուցանէ թագաւորս , ածէ ընդ մէջ նոցա կամար .
 Վարէ դերի զքահանայս , ըզզօրաւորս երկրի նուաճէ .
 Փոխէ զչըրթունս հաւատարմաց , ըզծերունեաց բառնայ զհանձար .
 Հեղու ամօթ զաւագանուով , փառաց ի փառս ածէ զխոնարհս .
 Յայանէ ըզխորրս խաւարի , զըստուերս ի լոյս հանէ զմահու .
 Կորուսանէ զազգս ի ստերիւր արեւալ նոցա գնալ ի շաւիղ ,
 Եւ սրբուէ զազգս առաջնորդեալ նոցա ի գնացս ընդ արահեա .
 Փոփոխէ զսիրտս իշխանաց , տայ նոցա գնալ ուր ոչ դիտեն .
 Գնայցեն ընդ մութ առ խարխափ , ոչ ծագեացէ նոցա լոյս ,
 Եօշափեացեն ըզխաւար , մոլորեացին իբրեւ զարբեալ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

Չյանդիմանորքիւն բարեկամացն շրջէ Յոր 'ի գրոյխ ևոցս , և
 դատապարտորքիւն 'ի Տեառնէ ապառնայ ևոցս փասն տարապարտ
 մեղադրանացն . իբրախոշտէ դարձեալ յանմեղորքիւն իւր , և հայ-
 ցուածոյ պայմանաւ գփասն երև խնորէ 'ի Տեառնէ գծանունց վրշ-
 տակրորքեանցն , և իբր ընդ ոտխի փարկոյ ևորս ընդ իւր՝ որ
 ոչ ինչ ընդհասն է 'ի հողմափար խոտոյ , և որ 'ի փոյխ ընդ հոռայ
 դառնայոցն է :

Չայս ամենայն ետես աին իմ , լըւաւ ունիլն իմ զայս ամենայն .
 Գիտեմ ասպքէն որչափ եւ դուք էք խեղամուտ .
 Չեմ խակ անմիտ , ոչ ի ստորեւ խակ քան ըզձեզ ի գիտութիւն .
 Սակայն ընդ Տեառնն խօսեցայց , սակայն նըմա հեղից աղերս .
 Ձի դուք բրժիշկք մեղանչականք էք ինձ և տուիչք խրատուց չարեաց :
 Իցիւ լինէր ձեզ համբանալ , խմասնադոյնք համարէիք .
 Արդ լըւարուք ինձ եւ խրատուց իմոց լերուք արդ ունիլնդիր ,
 Ձի զանիրաւըս բարբառիք . եւ կարծիցէք ինչ այդուիկ
 Ըզվրէժ Տեառնն խընդրել , սպասաւորել նըմա սըրտիւք ,
 Կամ թէ հաճոյ ինչ նըմա գործել զարդարնն զըրպարտեալ .
 Յաստուածակողմըն կոյս սըտեալ , ոչ ինչ ընդհատ տայցէք վըրէժ .
 Ձի աչառէք ի ծածուկ՝ ի միտրս ձեր կամակորեալ , (1)

(1) Յանդիմանէ զգաղտնի անձնասիրութիւն բարեկամացն , զի պատճառանօր
 խնդրելոյ զվրէժ արդարութեանն Աստուծոյ՝ յամառեալք և չկամին տեղի տալ
 անմեղութեան նորա , և 'ի վերայ տարապարտ մեղանչանանն իւրեանց վիճեալ
 պնդէին :

Աճ ի վերայ ձեր անկցի, հարցէ ըզձեզ Տէր արհաւիրօք,
 Եւ պերճութիւնք ձեր դիպեցցին ձեզ իբր ըզկաւ իբր ըզմոխիր •
 Կարկեցարութք զի խօսեցայց՝ դոյզն ինչ ըզսիրտ իմ ըսփոփեւ,
 Չեւ ըզմարմինս իմ յատամունս առեալ եւ չեւ զոգի ի բռին • (1)
 Եթէ արկցէ զձեռն իւր զինեւ, քանզի սկըսեալ իսկ է հըզօրն,
 Ո՞չ խօսեցայց, ո՞չ առաջի նորա ըզսիրտ իմ մերկացայց •
 Լիցի ինձ այս ի փըրկութիւն, չեն ինչ հաճոյ նրմա կեղծիք :
 Լուարութք լուարութք բանից իմոց, եւ սրատեցից ձեզ լու ի լու •
 Ձի հասանէ ինձ ահա մտանեւ ընդ հուպ ի դատաստան
 Եւ գիտեմ զի երեւել երեւելոց եմ անդ արդար • (2)
 Ո՞վ է ոտին իմ ճն տայցէ ինձ անդանօր սրատասխանի •
 Յառաջ մտաիցէ, ոչ կարկեցայց ես սրապանձեալ :
 Երկու ինչ, Տէր, սխտոյ են ինձ, եւ յերեսաց քոց ոչ թագեայց •
 Անփոփեա զձեռն քո յինէն, ահ քո զիս մի խռովեցուցէ •
 Եւ կոչեցես զիս ապա, եւ լուայց եւ տաց սրատասխանի •
 Քանի՞ ինչ մեղք իմ եւ ոճիրք իցեն, ուստ ինձ քանի՞ն •
 Ընդէր թագուցանես, համարիցիս զիս քեզ ոտիս,
 Ի հողմաշարժ տերեւոյ իցէ՞ թէ հզօրդ երկընչիցիս •
 Իբր հողմավար խտոյ իցէ՞ թէ դու կացցես ինձ հակառակ,
 Ձի գրեցեր ինձ ի չարիս յիշեալ ըզմեղքս մանկութեան •
 Ձի եզիր ինձ ոտնակապ, արկեր ըզքայլս իմ ի համար,
 Որ իբր ըզաիկ գըտայց հնացեալ, իբրեւ ըզճորձըս ցեցակեր :

ԳԼՈՒԽ ԺԴ

Նկատեալ գտկարոշրիւն մարդկան՝ զարմանայ սատանօր Յոթ
 ընդ մարդասիրոշրիւնն Աստուծոյ . յոյս ևորս առ հանդերձեալ
 կեանս, և ՚ի յարոշրիւն մարմնոց . և ահ դատաստանիս Աս-
 տուծոյ :

Ձի այր կանանցածին սակաւակեաց եւ լի ցաւովք
 Իբր ըզձաղիկ վաղանցիկ փըթթեալ ընդ այգն եւ թօթափի,
 Խուսափէ որպէս ըստուեր փախըստական, եւ մի կացցէ •
 Եւ դու համար ի նմանէ ի դատ մըտեալ պահանջիցես :

(1) Այսինքն չե՛ ՚ի յուսահատութիւն անկեալ, չե՛ զմարմին իմ խաճատեալ առ
 յուսահատութեան և զառածեալ ՚ի վտանգ մահու :

(2) Խրախոյս անմեղութեան և սիրալիր անկեղծութեան ընդ Աստուծոյ, որում
 հանդերձ պատկառանօք մերկանայ ընտանեւար զամենայն զգացմունս սրաի իւ-
 րոյ, և զփորձութեան իսկ գանգատանաց վասն նորօրինակ գնացից աստուածա-
 խնամ տեսչութեան ընդ իւր :

Իսկ արդ ո՞վ իցէ երբէք սուրբ ի յաղաոյ • այլ եւ ոչ դք ,
Թէպէտ եւ սուղ եւ առօրեայ իցեն նորա կեանք ի յերկրի ,
Թուեցեր զաւուրըս նորա , սահման եղիր , եւ ոչ անցցէ •
Ի բաց կաց ի նմանէ , եւ Թողացո ի յանդորրու
Անդբէլ նրմա ըզկեանս իբրեւ զաւուրըս վարձկանի :
Գոյ իսկ յոյս ծառոյ անդրէն • զի առ արմին Թէ կրարեացի ,
Ծաղկեացէ միւսանգամ , մի սպառեացի բողբոջ նորա •
Եթէ խոր ի յերկրի արմատ նորա ծերանայցէ ,
Թէ բուն նորա զառամեալ՝ կոճղ ի քարի վախճանեացի ,
Ի հոտոյ ջրոյ վերընձիւղեալ տերեւեացի զերդ նորատունկ •
Իսկ այր վախճանեալ՝ գընայ անգարձ ոչ եւս իցէ :
Զի որպէս ծով անօսրեալ կամ որպէս գետ զի ցամաքի ,
Այնպէս անկեալ մարդ ի նինջ՝ ոչ զարթնուցու , ոչ յարիցէ ,
Մինչեւ երկինք փեռեկեալ եւ նորահրաշ կարկատեացին :
Իցիւ յայնժամ ի դժոխքս Թողուիր զիս ի Թագուս , (1)
Մինչեւ ցասուին աստուածասաստ սրբամըտուԹեան քո անցանէր ,
Եւ սպա ինձ ձայն տայիր , սպա քեզ յուշ անկանէի :
Զի կեցցէ՞ երբէք գնացեալն՝ անդրէն Թէ ոչ ի քէն կոչեալ •
Կացից մնացից մինչեւ ի գործ ձեռին քո ինձ աջ կարկատեալ ,
Կոչեացես զիս միւսանգամ , եւ ես քեզ տաց պատասխանի : (2)
Թըւես դու զքայլս իմ եւ ոչ մի զքեւ ի մեղաց իմոց անցցէ •
Կընքեցեր զայնոսիկ ամրափակեալ իբր ի քսակի , (3)
Քաւել վըշտօք զակամայից իսկ նրկատեալ խոհերս ի յիս •
Սակայն եւ լեառն անկցի փլուզեալ , վէժ ի կայիցըն կորզեացի ,
Ողորկեացեն ջուրք ըզքարինս , եւ սպառեացին դաշտք ի ջրողոզ •
Հանգոյն եւ կեանք մահացուաց մաշեալ եւ ոյժ նոցա նուաղի •
Թէ անըսպա՞ռ ետուր կորով կաւոյն ուստի դու զնա ստեղծեր •
Ոչ իսկ գիտէ բարձունս արդեօք եթէ նրկուն Թողցէ որդիս • (4)
Այլ մարմին ախտակիր եւ անձամբ զանձն հոգին սըղայ :

(1) Հրաշալի ձև քերթողական , որով ցանկայ կալ և մնալ 'ի գերեզմանի Թա-
ղեալ և իբր Թէ մոռացեալ 'ի Տեառնէ 'ի յարուցանել նորա զննջեցեալս 'ի բար-
բառ փողոյն , մինչև անցցէ ժամ ահաւոր դատաստանին :

(2) Այսինքն լուայց հրամանի քում , յարեայց 'ի գերեզմանէ 'ի կոչելքո զիս •
այս է տալն պատասխանի :

(3) Մինչև հնարեալ փականաց երկաթեաց , ընդ կնքով պահէին աւանդք :

(4) Այսինքն չգիտէ և ոչ զօրհաս իւր , և ոչ Թէ յոր տիս Թողցէ զորդիս իւր ,
մանկունս Թէ 'ի չափ հասեալ :

ԳԼՈՒԽ ԺԵ

Եղիսիաց, որոյ յառաջ քան զայլս 'ի բարեկամաց յանդիմա-
 նեաց էր զՅոր, վեր 'ի վերոյ զպարտասխանիս ևորս յռեաց՝ դառ-
 նայ անբաստանե զեա չար ևս յինքնահարսնորքիս, 'ի կարճմը-
 տորքիս և յաստոռածամարտ յանդգնորքիս, ցոշանկոյ ևմա զի
 չիք որ սորք առաջի Աստուծոյ, և զանեծս անպարշտաց ևկարա-
 գրելոյ:

Կրկնեալ անգրէն Եղիսիազու Թեմապուոյ ասէ.

Ո՛չ ապաքէն հանճարեղն խմաստութեամբ պատասխանէ,
 Ոչ ի բոց սրբամբտութեան միտք իւր վառեալ եւ մըրըրկեալ.
 Իսկ դու առ Տէր զոր չէ արժան զոր չէ յօգուտ քեզ բարբառիս,
 Զերկիւղ նորա մերժեալ յանճնէ ի մարտ խօսիւք քովք գումարեալ:
 Ի բերանոյ քումմէ գտանիս դատասարտեալ աստուածամարտ.
 Յանդիմանէ աւասիկ ըզքեզ բերան քո եւ ոչ ես.
 Ահա բողոք բարձեալ շըրթունք քո հակառակ քեզ վըկայէն:
 Իսկ զիմորդ, մի թէ յառաջ քան զազգ մարդկան ծընեալ իցես, (1)
 Կամ յառաջ քան ըզերինս եւ քան ըզբլուրս հաստատեալ,
 Կամ ըզսրատգամ Տեառըն լըւեալ գոլ խորհըրդոց նորին տեղեակ:
 Զինչ է զոր դու գիտիցես, եւ մէք չիցեմք նոցին գիտակ.
 Կամ դու զինչ խմանայցես, որոց իցեմք մէք անխմաստք.
 Գոյ եւ ի մեզ ծեր հինաւուրց երիցագոյն քան զհայր քոյին.
 Սակաւս իսկ քան զոր մեղարըն տանջիս, զի մեծաբանես.
 Եւ ընդէր սիրտ քո յանդըգնեալ եւ լըկնեալ աչք քոյին հրաշէկ,
 Ըզգայրոյթ սրբամբտութեան քո առաջի Տեառըն Թափես,
 Զըրոյց այդպիսի ի բերանոյ քումմէ հանեալ.
 Իցէ իսկ ոք լեալ անարատ, լեալ ոք արգար կանանցածին.
 Զի թէ սըրբոց իսկ գոյ գայթեւ, զի թէ երկինք յաչըս նորա
 Զեն սուրբ, չեն անարատ, Թող թէ այր գարչ եւ այր անսուրբ,
 Որ ըմպէ անօրինեալ ըզմեղս հանգոյն իմն ըմպելոյ:
 Պատմեցից քեզ, Յոր, եւ լուր, զոր ինչ տեսի պատմեցից քեզ.
 Զի խմաստունք ոչ լըւեն որ ինչ ի հարց իւրեանց ուսեալ,
 Որոց երկիրս այս տըւաւ երկիր անկոխ յօտարածնաց: (2)

(1) Այսինքն՝ մի թէ երիցագոյն գոլով քան զազգս մարդկան՝ ուսեալ իցես զա-
 մենայն ինչ 'ի փորձոյ, և հմտացեալ երկայնաւորքք քան զմեզ. կամ թէ դու
 ինքն իցես խմաստութիւն, ծնեալ յառաջ քան զերկիր առնել և նախ քան զան-
 դունդս գործել, որպէս յԱռակսն Ը. 25:

(2) Ահնարկէ յիմաստունս աշխարհին իւրոյ, որ չէ ևս զառաձեալ էր 'ի մըր-
 բութիւն յաճախութեամբ ևկաց օտարածնաց:

Ամենայն կեանք ամսարըշտի հոգովք, եւ ամբ նորա թըւեալ. (1)
 Գուժէ հանապաղ եւ սպառնայ մահ յունկըն նորա.
 Ի կարծել զանձն յապահովի՝ դայ հասանէ նրմա վըտանդ.
 Ի խաւարի կայ շուրջ պատեալ ի սուսերաց անխուսելի,
 Գիտէ զի գէշ անգեղաց է սրատրաստեալ ի կերակուր.
 Անձկուժիւն եւ արհաւիրս աղղէ ի սիրտ իւր օր մըթին,
 Զարհուրի զերդ զօրավար յառաջակաց տապաստ անկեալ.
 Զի ձեռս ընդգէմ Բարձրելոյն ամբարձ, ի Տէր ընդվըղեցաւ,
 Ի թանձրուժիւն վահանի իւրոյ յանդուգն ասպաստանեալ,
 Ճարպոյ զակամբ նորին եկեալ, սուր երկասյրի յաղղեր իւրում:
 Ի տունս անչէնս եւ ի քաղաքս կործանեալս բնակեացէ,
 Ի շեղակոյարս քարանց տուն եւ տեղի իւր սրատրաստեալ.
 Մի մեծասցի եւ մի մնասցեն ինչք իւր ի բուռն անկեալ հինկց.
 Մի ծագեացէ նրմա արեւ, եւ մի արմատս արկցէ յերկիր.
 Խորշակահար լիցի բողբոջ իւր ծաղկընկէց տերեւաթափ.
 Մի յուսասցի կեալ, ի սնտախ յոյս իւր նրմա պատահեացէ.
 Հարեալ կըտրօն իւր գեռաբոյս անկցի ի սայր մայրեւորի,
 Եւ շառաւիղ նորա մի եւրս բըղխեացէ վերընձիւղեալ.
 Կըթեցի տարաժամ զերդ խակակուժըն ժանդահար,
 Իբր ըզժաղիկ ձիթենւոյ թօթափեացի մըրըրկատարափ:
 Զի բարձցէ մահ ի յերկրէ ըզյիշատակ ամսարըշտի,
 Եւ այրեացէ հուր ըզյարկ կաշառառուաց բոցակիղեալ,
 Զի ամսարիշտ երկնէ չարխս, եւ կրէ ի ծոց իւր նենգուժիւն:

ԳԼՈՒԽ ԺԶ

Զայրացեալ 'ի բանից բարեկամացն սիրտ Յորայ, ողբայ
 սրտատուչ զբշուատուչիւն իւր և զտարապարտ վշտակրուչիւն 'ի
 դիւեկն, զՄատուած 'ի վկայութիւն կուչկոյլ անբժուրեան իւրոյ 'ի
 մեղաց մեծաց, հանդերձ երկիւղիւ 'ի դատաւարանաց նորա:

Կրկնեալ անդրէն Յորայ ասէ.

Բազում ինչ այդպիսի բազում անգամ լըւեալ է իմ,
 Որպիսիս դուք ինձ բարբառիք մըթիթարիչքըդ դըժպըհիք:
 Այլ դուցէ՛ իսկ արդեօք ճամարտակեալ բանից վախճան.
 Կամ թէ որ թախանձիցէ՞ զքեզ ի խօսել ո՞ Նղիսիազ:
 Մարթէր եւ ինձ խօսել ընդ ձեզ թէ իբրեւ զիս էիք եւ դուք.

(1) Ճշմարտոս իմաստասիրէ զամսարըշտաց, այլ սխալէ 'ի Յոր զակնարկու-
 թիւնն առնելով:

Այլ կամեիք զի եւ ես կըծանէի ըզձեզ բանիւք,
Զի շարժէի եւ ես ըզգլուիս իմ ի վերայ ձեր իբր ըզձեզ •
Այլ որչափ գոյր յիս զօրութիւն՝ ոչ խնայէի շուրթն ի սփոփանս :
Իսկ ի պէտս ում արդ խօսեցայց, զի ցաւք իմ ոչ փարատեսցին •
Բայց մեղմասցին ինչ արդեօք, նըւազեսցեն եթէ լուիցեմ :
Հարայ կարեմէր, փրտեցան վէրք իմ խըղխայթեալ •
Հակառակ ինձ այնոքիկ կացեալ այժմիկ ի վկայութիւն,
Յարուցին ինձ ոսոխ ըզսըտութիւն կըշտամբել զիս :
Ոտն ի վերայ իմ արօփեալ, կըրծաէ ընդդէմ ինձ զատամունս •
Տեղան յիս նետք հինից նորա, տիգօք աչաց խաղայ զինեւ •
Հարեալ ի ծնօտս արագարագ, լինիմ կոխան ամենեցուն • (1)
Քանզի մատնեաց զիս Տէր ի ձեռս անիրաւին լքեալ ի սալառ, (2)
Ընկէց ի մէջ ամպարըշտաց, եւ շուրջ պատեալ սաշարեն զիս •
Մինչդեռ ի խոր խաղաղութեան կայի, նըստոյց զիս ի մոխիր •
Բուռն ըզվարսից իմոց հարեալ փետեաց, կացոյց զիս նըշառակ
Եւ խոցոտեն զերիկամունս իմ անխընայ նետք եւ նիզակք •
Ի խիտառխիտ հարուածոց յերկիր ընդերք իմ հեղանին •
Քուրձ իմ ընդ մորթ իմ մածաւ ի յարձակել յիս հըզօրաց •
Խարշեցան դէմք իմ ի լալոց, եւ լոյս աչաց իմոց շիջաւ,
Ի վերայ արտեւանաց իմոց ըստուերք մահու բազմեալ :
Սակայն չէր իսկ եւ չէր ինչ անիրաւ յիմում ձեռին,
Եւ աղօթք իմ առ Աստուած ելանէին ընդունելի :
Մի դու մի ծածկեր, երկիր, զարիւն մարմնոց իմոց հեղեալ,
Եւ մի տեղի տար ի քեզ աղաղակի իմոց թաքչել •
Ահա յերկինս է վըկայն իմ, եւ սըրտագէտն իմ ի բարձունս •
Հասցէ աղերս իմ առ նա, կաթեսցէ ակն իմ արտասուս •
Այլ իցէ թէ դատաստանք ի յատենի անդ առնիցին
Որպէս յերկրի աստ ոսոխ ընդ ընկերի դատախազեալ •
Ամբ ինձ թըլուվ սակայն հասին, եւ հուսընդհուպ՝ սահեալ անցցեն •
Եւ գնացից ընդ ճանապարհ անդարձ յահեղն անդր ի յատեան :

(1) Զդատնութիւն նախատանացն սցտուիկ պլարանէ :

(2) Ակնարկէ աստ յայանապէս ՚ի դէն փորձիչ ըստ մեկնչաց, որք և զառաջ-
նոց տողիցն ՚ի նա տան զհայեցումն. զի զոր ասէն Յոր յարուցեալ զստութիւն
՚ի վերայ ոսոխ, զնոյն ինքն զստութեանցն հայր իմանան զատանայ :

ԳԼՈՒԽ ԺԷ

Քողորքի սատանօր Յոսք գրչոռառոչքնէկ իշրակէ , և ցանկայ մա-
հոռ . գանգառի զնախառչաց իշրոց և զհարստահարոցաց , և
յանդիմանէ զանիրառոչիւն բարեկամացն՝ որ այսոռ կնկօքս հա-
մարէին սահմանեալ զվարձ արորարոյ :

Հողմավար կորընչիւմ , մըրըրկօրէն վարեն զիս վնշոք .
Կարօտիւմ գերեզմանի , կոչեմ զօրհաս եւ խուլ է ինձ .
Տառապիւմ կողկողիւմ , եւ ոչ գիտեմ զինչ գործեցից .
Օտարք ըզգոյս իմ գողացան , եւ ձեռք բնաւից ինձ ի հարուած .
Դարձ Տէր դարձ առ իս , փըրկեա զիս ի բանից տարապարտուց .
Ձի ի սըրաից իւրեանց ի բաց հալածեցին զխմաստութիւն , (1)
Կորակոր ի սաստէ քուսմէ յամօթ լեալ կարկեսցին ,
Եւ պատմեսցեն իրերաց՝ խարեալք խըղճիւ՝ զամօթ իւրեանց :
Նըւաղեցան անձկանօք աչք իմ ըզհեա որդւոց հալեալ ,
Ի բամբասանս եղէ ազգաց , եղէ նոցա ծաղը եւ ծանակ .
Աչք իմ շրացան ի ցասմանէ՝ թըշնամանեալ յամենեցունց .
Չարմանք կալցին ըզճըշմարիտս , արդարն ընդդէմ անօրինին (2)
Բողոք բարձեալ իրախուսեսցէ , գնասցէ ուղիւ զիւր ճանապարհ :
Բայց դուք փոխեալ աղէ զբարբառ , եկայք ի յիս յարեցարուք .
Ձի զանիրաւըս բարբառիք , եւ չիք ի ձեզ ճըշմարտութիւն :
Անցին աւուրք իմ շարաւով , պայթեան երակք սըրաի իմոյ .
Ըզգիչեր ինձ տիւ եզի , սպասեմ լուսոյ ի խաւարի .
Այլ ի զուր , զի լոյս մերժեալ յինէն , դըժոխք են ինձ տուն ,
Եւ ի դըժոխս անդ ի միգի ինձ տարածեալ կան անկողինք .
Ըզմահ ինձ հայր կոչեցի , զորդունս եւ զեզր ինձ մայր եւ քոյր .
Ո՛ւր է արդ յոյսն իմ , ո՛ւր տեսից այսուհետեւ ըզբարութիւն .
Ի դըժոխս ընդ իս թերեւս իջցեն ի խորս ի միասին ,
Կամ իցէ թէ անդ ընդ իս գայցէ բնակել խաղաղութիւն :

(1) Ահնարկէ յերեսին բարեկամս իւր , որք ոչ իմացեալ զխորհուրդս իմաստու-
թեանն Աստուծոյ՝ պարտաւոր պատժոցն այնոցիկ առնէին զնա , վասն որոյ սպա
յամօթ եղեն յանդիմանեալ ի Տեառնէ :

(2) Այսինքն զարմացին ճշմարտասէրք ընդ հալածել անօրինին զարդարն , և
սա ընդդէմ նորին բողոքեսցէ . և յանգետս իսկ խորհրդոցն Աստուծոյ՝ որ թողա-
ցուցանէ ի վերայ նորա զհալածանսն , արխանայ գնալ անստեղծիւր զճանապարհ
իւր :

ՊԼՈՒԽ ԺԸ

Դարձեալ վերադառնալ կշտամբէ Բաղդաատ գՅոք, համարելոյ զհա
պատուհասեալ իբրև զամպարիշտ՝ զորոյ նկարագրէ զանեծս :

Կրկնեալ անդրէն Բաղդաատայ սաւքեցւոյ ասէ .

Մինչեւ ցերբ ոչ հանդարտես, լռեա զի մէք բարբառեսցուք .
 Ընդէր հանգոյն չորքոտանեաց կամք առաջի քո համր եւ լուս,
 Եւ դու մըխեալ բարկութեամբ ոչ դադարես ի խօսելոյ :
 Մի թէ անչէն մնայցէ երկիր, եթէ հասցէ քեզ մեռանել .
 Կամ թէ լերինք սասանեալ ի հիմանէ՞ տապալեսցին :
 Շիջի ճրրագ ամպարըշտի, բոց նորա մի ճաճանչեսցէ .
 Ճօճեալ ընդ յարկ իւր ի յերեր դարձցի ջահից լոյս ի խաւար,
 Աղօտաջահ առկայծեալ մի եւս արկցէ նրմա նըշոյլ .
 Սըխալեսցէ խորհուրդ նորա, իւ խիղախերն ճոխաճեմ .
 Գըթեսցէ ոսն իւր յորոգայթ, անկեալ շողեալ ի թակարդի .
 Հէնք ի վերայ նորա հասցեն ծարաւայոյժք յառ եւ յապուս . (1)
 Զի թագուցեալ կան նրմա տուռնք յերկրի աներեւոյթք,
 Եւ ի վերայ շաւղաց նորա անկեալ կալանք շուրջանակի .
 Ընկիճեսցէ նրմա ահ, սարսափ զոտիւք իւրովք սրատեալ .
 Կըթուցեալ ծունկք իւր ի սովոյ, կործան ի վիհ անկցի ի խոր .
 Կերկցէ մահտարաժամ յափըշտակեալ ըզգեղ նորա,
 Արբեսցի ի յարկաց նորա ի բաց բըժըշկութիւն .
 Տիրեսցէ անդանօր մահ իբր ի յարկի իւրում բնակեալ .
 Եղծցին ի ծուխ ծըժըմոյ վայելչութիւնք տան նորա . (2)
 Արմատք նորա ի ներքուստ ցամաքեսցին շուրջ արձակեալք .
 Եւ ի վերուստ թօթափեսցին հունձք նորա չեւ հասկահասունք .
 Բարձցի յերկրէ յիշատակ իւր կորկցէ սպառըսպուս,
 Մի ի վերայ երեսաց երկրի անուն իւր յիշեսցի .
 Մերժեսցի ի լուսոյ խորասուղեալ ի խաւարի,
 Անճանօթ յազգի իւրում կեցցէ նըժդեհ իբր եկ օտար .
 Արտաքսեսցի ի տանէ, եւ բնակեսցեն այլք ի նորայն :
 Ողբս առեալ ի վերայ նորա յեաինք հեճեճեսցեն,
 Առաջնոց նորա ասլեալ թէ այս են տուռնք ամպարըշտաց,
 Եւ այս ակղի այնոցիկ՝ որք ըզՏէր ոչ ճանաչցին :

(1) Ահնարկէ 'ի յեւրոզակս աւարառուս յանջըզուջ Արարիոյ :
 (2) Եճմոյ և այլոց սասակահոտ դեղոց ծխունք առ 'ի սրահել յապականու
 թենէ ժանտախտի զբնակարանս :

ԳԼՈՒԽ ԺԹ

Բողոքե սատուսօր Յոբ զանողորմ դատողութիւնէ յարեկամացն,
և հաստատե՛ զի վիշտք իւր ոչ առ ՚ի պատիժ մեղաց տուեալ էին
ևս ա ՚ի Տեառնէ, այլ ըստ գաղտնի խորհրդոց ևսխախտումոքն
ևորա. ևկարագրե գղժեղակոչքիւն աղետիցն իւրոց, և զբողոչ
լքանել իւր յամենեցունց. և քաջաչերի ՚ի յոյս յարոչքնան:

Կրկնեալ անդրէն Յոբայ ասէ.

Մինչեւ յերբ աշխատ առնէք զիս, մինչեւ յերբ խախտէք բանիւք.
Մինչեւ յերբ նետիւք շրթանց մարտ ընդ հիքիս տայք անողորմ.
Թէ ոչ ի դէպ ինչ խօսեցայ, թէ մոլորել մոլորեցայ,
Զի՛ ձեզ ընդ այն, զի՛ ձեզ թէ զկայ մոլորութիւն իմ յիս առցէ.
Զիք լուտանաց ձերոց տեղի եւ յիմ վերայ մեծաբանէք.
Այո՛ եհար զիս Տէր եւ զձեռն իւր ի վերայ իմ ծանրացոյց,
Այլ ոչ ի վրէժ մեղանաց, ոչ ի պատիժ պատուհասի:
Ծաղր աւասիկ եղէ բնուից, սակայն առ ո՞ կալաց բողբ.
Աղաղակեմ, եւ չիք ուստէք ինձ դատաստան, չիք որ լըսէ.
Շրջապատեալ կամ իաւարաւ, չիք ինձ ուստէք ելք փախըստի.
Կասկեաց ըզփառս իմ վերացոյց Տէր ի գըլտոյ իմմէ զպրսակ,
Պարուրեաց շուրջանակի, եհատ ըզյոյս իմ զամենայն,
Եւ կորեայ իբրեւ ըզճառ խըլեալ յերկրէ արմատաքի:
Բոցով սրբամըտութեամբ վառեալ՝ վարկաւ զիս իւր ոստի.
Հէնք նորա ի վերայ իմ խաղացին համանգամայն.
Կալան ըզճանապարհս իմ պատեցին դարանակալք.
Եղբարք իմ խոյս ետուն յինէն, եղէ նոցա բնաւ անծանօթ.
Բարեկամք իմ անողորմք ըզգութ իւրեանց ինձ փակեցին,
Անգոսնեցին զիս մերձաւորք, ծանօթք զանուն իմ մոռացան.
Աղախնեայք իմ եւ դրացիք զիս ընդ օտարս համարեցան,
Այլազգի յաջրս նոցա թըլիմ, եւ ոչ ճանաչէն զիս.
Ըզճառայ իմ կոչեցի, եւ ոչ լըւաւ ձայնի իմում.
Աղաչէի ըզկին իմ, աղերս շրթունք իմ հեղուին.
Կոչէի ողբանօք ձայնեալ զորդիս հարձից իմոց,
Այլ եւ նոքա յուրաստ կացեալ զինէն՝ անէծս ինձ կարգային:
Գարշեցան եւ մըտերիմք իմ յետս ի բաց կացին յինէն.
Եւ զոյս եսըն սիրէի, նոքին իսկ ինձ եղէն ոստիք:
Փրտեալ մարմինքս ընդ մօրթով, ոսկերք ընդ մօրթ իմ կըցեցան.
Զատամանց իմոց ըզպար պատեն շրթունք երիթացեալք:
Գըթացարուք յիս բարեկամք յողորմ ի գութ շարժեցարուք,

Ձի ձեռքն Տեառն եհար զիս, զի ձեռքն Տեառն յիս մըխեցաւ. (1)

Ընդէր եւ դուք զիս հալածէք, չեցէք մարմնովք խնովք յագեալ:

Ո՛ տայր ըզբանս իմ ըզյսոսիկ արձանագրել ի մատենի, (2)

Գրչաւ երկաթեալ ի կապարի զնոսա գրոշմեալ,

Կամ քանդակել ի վիմի ի վիայութիւն յաւերժական.

Ձի կենդանի է եւ հըզօր, որ լուծանէն զիս յերկիր, (3)

Յարուցանել անդրէն ըզմորթ իմ որ կըրեաց զայս ամենայն.

Ձի զսոյն դարձեալ ըզգեցայց, եւ տեսցեն աչք իմ այսոքիկ (4)

Ձամենակալն որ եցոյց զայս ամենայն ինձ ըզգաղանիս:

Իսկ տակաւին թէ յամառեալ սընդիք լինել յիս դամադիս,

Երկերուք. զի վրէժ ընդդէմ անօրինաց հասեալ գայցէ,

Եւ ապա գիտասցեն թէ յոր դիմեալ գընան ի վիհ:

ԳԼՈՒԽ Ի

Սովիարս առ փոքր մի շարժեալ ՚ի բանից Յորայ, նկարագրե դարձեալ ՚ի կշտամբանս նորիև զկեանս սակարշտաց հանգոյն իսկ կենաց նորա:

Արկնեալ անդրէն Սովիարայ մինեցւոյ ասէ.

Ոչ այսպէս կարծէի բարբառել քեզ ընդդէմ մեր զայդ.
Իմաստնագոյն ես դու քան զիս, եւ լուայց խրատուցդ ակնածու.
Սակայն հոգի իմաստութեան տացէ ընդ իմ սպասասխանի: [Թեամբ,
Մի թէ այժմ գիտացեր, այլ անգրատին ի սկըզբանէ՝
Յորմէհեաէ եղեւ մարդ՝ չիք ուրուք զայդ անգիտացեալ,
Ձի սուղ են փառք ամադարըշտաց եւ վաղանցիկ վայելութիւն.
Եթէ խարոյկ զոհից նորա մինչեւ յերկինքս բարձրացի,

(1) Այսինքն զի եթէ ձեռն Տեառն հարկանէ զիս, սակայն առ ՚ի սիրոյ են հարուածք նորա և վասն բարերարելոյ ինձ. իսկ դուք անգթութեամբ յիս յարձակեալ, ոսնհար լինիք ՚ի վերայ թշուառութեան իմոյ և նախատէք զիս:

(2) Գրչաւ երկաթեալ գծելով ՚ի կապարի սովորութիւն էր գրել նախնեաց, և մի յայլ և այլ եղանակաց գրելոյ առ նոսա: Արդ ցանկայր Յոր այսու օրինակաւ կամ գրոշմելով ՚ի վիմի արձանագրել զկենդանի հաւատս իւր ՚ի փրկիչն ամենեցուն, ՚ի յոյսն յարութեան մարդկան, և ՚ի վարձատրիչն համբերութեան արդարոց:

(3) Հաստատէ բանիւս զճշմարիտ վարդապետութիւն յարութեան մարմնոց, զի նոյն այն մարմինք իւրաքանչիւրոց յարիցեն նորոգեալ որովք կեցինն:

(4) Ոչ որ, ևս և զկնի շնորհացն Քրիստոսի, յայանագոյն քան զայս խօսեցաւ զյարութենէ մարմնոց և զաստուածատեութենէ արդարոց: Յաւելու սուրբն Աւգոստինոս նկատել ՚ի բանս յայս և մարգարէութիւն իմն զմարմնաւորութենէ որդւոյն Աստուծոյ, զոր մարմնոյ իսկ աչօք տեսանելոց են արդարք:

Պատարագք իւր դիզադէզ թէ մինչեւ յամպրս մերձեացին,
 Յորժամ թուիցի նրմա անքոյթ անսլոտանդ բախտ իւր հաստատեալ,
 Յայնժամ ի սպառ կորիցէ, եւ ասացեն տեսողք ասլէալ՝
 Թէ ո՛ւր է նա. որպէս զերազ անիր ընդ այդն խուսափեաց,
 Թըռեալ արագաթեւ իբր ըզտեսիլ գիշերական.

Ահն որ ետես ըզնա ոչ եւս յաւելուցու հայել ի նա,
 Եւ ոչ տեղի նորին ուր կայրն ծանիցէ ըզնա տեսալ:
 Սատակեսցին որդիք նորա, ձեռք իւր չարեօք բորբոքեսցին. (1)

Յագեալ յախտից մանկութեան՝ իջցեն ոսկերք նորա ի հող:
 Թէ քաղցրասցի ի բերանի իւրում առ վայր մի չարութիւն,
 Թէ թաքուցէ ի ներքոյ վայրիկ մի զայն լեզուի իւրոյ,
 Եւ ի մէջ կոկորդի իւրոյ թէ զնա խնայէ ի կուլ,
 Այլ ի լեղի այն իժի յորովայնի իւրում դարձցի,

Եւ փրսխեսցէ նա զմեծութիւնն ժողովեալն զբրկանօք.
 Յերկիամանց նորա զայն հրեշտակ ի դուրս կորզեսցէ.
 Ծըծեսցէ նա զթոյն վիշապաց, հարցէ ըզնա լեզու օձի. (2)

Մի տեսցէ զկիթ արօտական, մի զբուղիս մեղու եւ ըզկողոյ:
 Զուր տարասպարտուց ի մթերս ընչից վաստակեսցի,
 Իբրեւ ըզխիստ ինչ անծամ չըկարասցէ ըմբոշննել զայն.
 Զի զտունն արկարաց բազմաց արար հիմնայատակ.

Յափրշտակեաց յարկս ի յաւար՝ որ ոչ էին իւր ձեռակերտք.
 Եկեր անյագ, այլ կերակուրն այն մի լիցի նրմա ի սնունդ.
 Զիք ինչ օգուտ ի ստացուածոց ազահութեամբ մըթերեոց:

Մի ծաղկեսցէ նրմա ուռ, եւ մի սլտուղ տացեն ուղէչք.
 Յորժամ ահա լի շտեմարանք իւր թըւիցին, հասանէ սով.
 Տագնասպեսցի թէ զխորդ բուժեւ ըզքաղց իւր կարիցէ:
 Յաւս ըզնովաւ արկցէ դառննրս Տէր ի սաստ սըրամըտութեան,
 Եւ մի յարիւնախանձ երկաթոյ խոյս կարասցէ տալ.
 Խոցոտեսցէ զնա ի տարափ նեաից աղեղն սըղընձի:
 Երկիւղ ի յարկրս նորա չըրջեսցի ճեմ առեալ ի տուէ,
 Եւ արհաւիրս ըզնովաւ արկցեն աստեղք ի գիշերի.

Խաւար ըզնա շուրջ սլատեսցէ, կերիցէ զնա հուր աննըշոյլ. (3)
 Ղօղեալ ի տան իսկ թէ կայցէ, երկինք զաղունս իւր յայանեսցեն,
 Եւ երկիր կացցէ չարեաց նորա վըկայ եւ գատախաղ. (4)

(1) Ախտք և յուռութիւնք ամպարշտաց ընդ նոսա ձերանան, և ընդ նոսա իջանեն ի գերեզման:

(2) Ամպարիշտ ի յափրշտակել զինչս աղքատաց՝ իբր թէ զարիւն նոցա որպէս զթոյն օձի և զվիշապաց ծծէ ի վնաս իւր:

(3) Մերս ունի հուր անշէջ, այլք ի թարգմանութեանց ունին աննըշոյլ անըյս, ընդ որով սուրբ Հարք իմանան զհուր դժոխոց:

(4) Հանգոյն ամին ի գիրս Խմաստութեան Ե. 21. Պատերազմեսցի խառն ընդ նմա և աշխարհս առ անգգամս:

Հասցէ օրհաս, եւ զտուն նորա կորուստ ի սպառ աւերեսցէ:
Այս է բաժին ամպարըշտի, եւ այս նրմա վարձ յայցելուէն:

ԳԼՈՒԽ ԻԱ

Անբասիր իմն առնէ Յոբ գրատաւտան բարեկամացն, մեղա-
պարտ 'ի վերին երեսս փասն ետրանշան արկածիցն երևելոյ, և ա-
պա հետագօտէ գրատաւտս անպարշտաց ոմանց 'ի վերայ երկրի
յաջողելոյ, և պատասխանէ պատրաստեալ ետցա զկորուստն յա-
շիտենից, և 'ի յաջողութենէ անտի ետցա զհետ բերեալ զի վիշտք
և արկածք ոչ միշտ պատուհասք են մեղաց:

Արկնեալ անդրէն Յոբայ ասէ.

Երանի՛ թէ մի լինէր ինձ ի ձէնջ այդ ըստիտիութիւնս.
Լուարուք լուարուք բանից խնոց, ներեցէք ինձ զի խօսեցայց,
Եւ ապա թէ ծաղր ըզբանս իմ արարեալ այսպանիցէք:
Ոչ վայրասպար ինչ կըշտամբանքս ինձ պատահեն ի մարդկանէ.
Եւ զհարդ ի լուր խօսիցըդ կարիցեմ կալ անարբատմ:
Յիրաւի կայք զարմացեալ գէտակն ի յիս ձեռն ի ծնօտի.
Իմ իսկ յածել ըզմտաւ սասանի սիրտ, եւ տաղնապիմ
Ձի բնաւ ընդէր ամպարիշտք ի մեծութեան կեան յօրացեալք, (1)
Ի բազմերամ բերկրեալ յորդիս, շուրջ սպր առեալ ի սերընդոց.
Տունք նոցա յաջողեալ, ոչ երկեղուկ նոցա ուստէք.
Չեն ի վերայ նոցա հարուածք, ոչ պատուհաս ինչ ի Տեառնէ.
Արջառ նոցա ի մըսրի ոչ սըխալէ ի ծնընդէնէ,
Ապրեալ յըզի նոցա եւ ոչ վըխպեալ զերկուճարն սալ ի լոյս.
Գընայ նախիր ի դաշտի իբր ըզխաշինարն բազմահոյլ.
Մանկուճք նոցա՝ առեալ թըմբուկ եւ քնար՝ պարեն ի ձայն երգոց.
Եւ կատարեալ աւասիկ ի բարութեան ըզկեանս իւրեանց,
Ի շիրխմըս հոյակապս այժմիկ նընջեն խաղաղութեամբ,
Ոյք ասէին ցըՏէր՝ ի բաց կաց ծառայել քեզ ոչ կամիմք.
Եւ ոչ փոյթ ինչ է մեզ ըզճանապարհըս քո գիտել.
Ձինչ օգուտ թէ ծառայեմք քեզ, զինչ իսկ շահ թէ զքեզ պաշտեմք:
Սակայն քան լիցի ինձ գնալ ի ճանապարհս ամպարըշտաց,
Որոց չեն անկապուտ եւ ոչ ի ձեռս իւրեանց բարիք.
Ձի ահա ճրագ ամպարըշտաց շիջի, հասցէ նոցա կորուստ.

(1) Եթէ ամպարշտաց սրահին պատուհասք յերկրի, որպէս Սովիար համա-
րեալ և դատապարտէր զՅոբ, ընդէր ապա գոն ասէ և ամպարիշտք յաջողեալք և
բարեբաստիկք:

Կալցին երկուք ըզնոսա յաստուածասաստ բարկութենէ .
 Եղիցին որպէս փոշի յափրչտակեալ ի մըրըրկէ ,
 Իբրև ըզյարդ առաջի հողմոյ վարեալ հալածական :
 Տացեն որդիք նոցա ըզվըէժ հայրենի , Տէր խընդրեսցէ զայն .
 Աչք նոցա զըստառումըն զաւակի իւրեանց տեսցեն ,
 Եւ զբաժակ սրբամըտութեան նորա արբցեն ի յապայս .
 Զի զտանէ իւրեանց փայթ իցէ նոցա թէ ստառիցի , (1)
 Թէ ժամանէ օրհաս եւ զթիւ ամաց նոցա թէ կարճատէ :
 Կարիցէ որ սահմանել նրմա օրէնքս տեսչութեան ,
 Այնմ որ դատի ըզաիւզերս , որ խնասանոց բաշխէ հանձար .
 Սա ի կենաց թէ ասա զրաւի բարեկեցիկ եւ յաջողեալ ,
 Որովայն իւր լի ճարտով եւ ուղղալից ոսկերք նորա ,
 Նա թէ փակէ զաչս առ վըշտին սովալըլուկ անդ եւ թըշուսա ,
 Իջցեն ի հող առ հասարակ եւ ծածկեսցէ երբ ըզնոսա :
 Արդ ասացէք որք անիրաւ դատաստանաւ յիսդ յարձակիք .
 Ո՞ւր սպարանք արքունիք , ո՞ւր իցեն յարկք ամպարըշտաց .
 Նըշանօք նոցա հարցէք , եւ ասացեն ձեզ անցաւորք .
 Յօր կորըստեան իւրոյ ճեպի , յօր բարկութեան վարեսցի չար .
 Ո՞ զճանապարհըս նորա կարողացի սրամել նրմա ,
 Եւ ո՞ հատուցանել որ ինչ գործերն կարացէ .
 Իջցէ ի գերեզման և տըքնեսցի ի տապանի .
 Քաղցրասցին նրմա անդ ի մահիճ խիճք հեղեղատի . (2)
 Երթիցէ զհետ նորա ամբոխ , յառաջընթացք նրմա անթիւք .
 Եւ զի՞ ամփիէք զիս սընտաւօք , զուր ինձ ընդ ձեզ է դադարել :

Գ Լ Ո Ւ Խ Ի Բ

Հաստատե դարձեալ Եղիսիսոգ՝ պատռահաս ՚ի Տեսառնէ հասեալ
 զվիշտս Յորայ , ցոշցանկելով զի Աստուած ոչ փայրասպար տանչէ
 զորք , և յանդգնորիչն համարեալ ղնել այլ ինչ պատճառս այնև
 յաստուածակոյս կողմանէ , զիւտ բերե զմեղապարտորիչն Յո-
 բայ . յորդորե զնա ապա ՚ի խոստովանորիչն աստուածախնամ
 տեսչորեան , և խոստանայ եմա հատուցուլն ՚ի Տեսառնէ ՚ի դառ-
 նալ նորա :

Կրկնեալ անդրէն Եղիփաղու թեմնացւոյ ասէ .

Ո՞չ սպաքէն Տէր է որ սոյ զխնաստութիւն եւ ըզհանձար .
 Եթէ էիր դու անարատ , եթէ ի գնացըս քո ամբիժ ,

(1) Զի եթէ չէր պատրաստեալ ամպարըշտաց կորուստ ՚ի յապայս , թեթև ինչ լինէր նոցա պատուհաս սպառել զաւակի նոցա :

(2) Ի սորս երկրի և ՚ի նկուղս սովորութիւն էր առ նախնիս թաղել խառն ՚ի խուռն զգիակունս , ընդ որ ուղիք և հեղեղք անցանեն :

Զի՛ փոյթ էր Տեառն եւ զի՛նչ օգուտ ի հարկանել ըզքեզ ցաւովք :
 Առ ահի՛ թերեւս ըզքեզ այսպէս խրտուիւ դատեալ խրատէ :
 Ո՞չ ասպաքէն վասըն մեղաց քոց եւ անթիւ չարեաց պատժեալ :
 Զի գրաւ յեղբարց քոց ի կարիս նոցին առեր տարասարաուց, (1)
 Եւ զորքս պարտ էր քեզ ծածկել՝ զերծեր զըզգեստ դու ըզմերկոց :
 Զուր ծարաւեաց ոչ արբուցեր, ըզբաղցելոց հատեր ըզհաց :
 Աին առեր երեսաց առ ի թիւրել ըզգատաստան,
 Զիրաւունս այրւոյն ժըխտեալ, արարեալ զորբըն դատափետ :
 Վասն այնորիկ պաշարեցին ըզքեզ ահա շուրջ որոգայթք,
 Տաղնասպք եւ արհաւիրք հասին յանկարծ ի քո վերայ,
 Մինչդեռ դու ոչ կասկածէիր թէ ծածկեսցէ ըզքեզ խաւար,
 Թէ զբօսանք եւ ալքք զեղցին ըզքեւ հեղեղատեալ :
 Որ ի բարձունսն է մի թէ ո՞չ տեսանիցէ նա զամենայն :
 Նա աւանիկ խոնարհէ զամբարտաւանքս կործանեալ :
 Եւ մի ասիցես թէ զի՛ ծանեաւ հըզօրն ի ստոր,
 Կամ թէ աղօտ իբր ի միգի զառ ի ներքոյս երկնից դիտէ :
 Զի թէպէտ ամպք ծածկոյթ նորին, թէպէտ ընդ ծիր երկնից շըրջի,
 Այլ տեսանէ զամենայն, այլ զամենայն ինչ ճանաչէ :
 Ընդ շաւիղս յաւիտենից գընալ թերեւ զամիցիս : (2)
 Որք կոխեցին զայն ամպարիշտք՝ կորեան յուղից յափըշտակեալ :
 Որք ասէին զի՛ արասցէ մեզ Տէր, կամ զի՛նչ կարիցէ տալ :
 Սակայն նա ինքն ելից բարեօք ըզմուտ եւ զելլս նոցա,
 Եւ ինքեանք ոչ ծանեան ըզնա : այլ քա՛ւ յինէն խորհուրդ նոցա :
 Տեսեալ արդարոց ծիծաղեցան ըզնոքօք :
 Տեսեալ անարատին եւ զամպարիշտն արհամարհեաց :
 Զի յարկ նորա կործան անկեալ, հուր ըզմնացորդ նորին եկեր :
 Բայց աղէ յանձն արասջիր ըզքեզ ի ձեռքս Բարձրելոյն,
 Եւ մի վըխպեսցի ի նա ինքն յոյս քո հաստատեալ :
 Հա՛պա ընկալ եւ ի սըրտի քում ըզպատագամբս նորա դիր :
 Եթէ առ ոտքս նորա անկցիս դարձեալ խոնարհեալ,
 Եւ ի յարկէ քումմէ հեռի ըզչարութիւն մերժեալ ի բաց,
 Լիցիս յամրի եւ իբր ի վէ՛մ նըստցիս ձորոյն Սովփերայ, (3)
 Եւ լիցի ամենակալն ընդ քեզ ընդգէ՛մ թըշնամեաց քոց :

(1) Ոմանք հարցուածոյ պայմանաւ իմանան զբանքս՝ որ արդարեւ ծանուցք են, և դժուարին է թէ ՚ի հաւանութենէ մտաց ասիցէ զայնս Եղիփաղ : որ ՚ի ԳԼ Գ : զհակառակն վկայէր : Այլ մարթ է կարծել ևս, զի ներելովն Աստուծոյ առ ՚ի փորձ արդարոյն՝ զառածանիցի նա վիճարանելով մինչև ՚ի դժնդակ զըպարտու թիւնս յայտասիկ, այնու եւթ վըխպակ դատմամբ՝ զի ոչ տանջիցէ Տէր զանմեղն :
 (2) Ընդ շաւիղս՝ զոր ՚ի սկզբանէ հետէ կալան ամպարիշտք և կորեան : բայց յուղիցն յափըշտակեալ կորնչել նոցա՝ ակնարկէ ըստ ոմանց ՚ի կորուստն Եղիպտացւոց ՚ի ծովն Կարմիր :
 (3) Այսինքն լցցիս օսկւով, զի ՚ի Սովփեր բովք են օսկւոյ ազնուի :

Լըցուսցէ ըզքեզ գանձիւք զեղեալ ոսկւով եւ արծաթով,
 Եւ համարձակ լիցի հայել քեզ ի յերկինս յայնժամ առ Տէր •
 Յայնժամ լուիցէ քեզ յաղաչել քում, հատուսցէ զաղօթքս քո •
 Գարձուսցէ զյարի քո ի քեզ, ծագեսցէ լոյս ի գնացրս քո •
 Զի խոնարհեալ եւ խոստովան լեալ ասացեր թէ հպարտացայ •
 Զի վերկեսցէ Տէր զանմեզն եւ ըզխոնարհն ակրնկորեալ,
 Եւ ասարեսցի սրբբուժեամբ ձեռաց իւրոց այր անարատ :

ԳԼՈՒԽ ԻԳ

Ընկենու Յոր գանձն 'ի ձեռս Աստուծոյ՝ զոյորմուշքիւն ևորս 'ի
 դատաստանի խնդրելով, զպահպանութիւն պատուիրանաց ևորս
 յաղերս ւածեալ • խոստովանի զամենակալ զօրութիւն ևորս, յե-
 րեսաց ևորս առաւել քան 'ի կրելոց վշտացն տագնապեալ :

Կրկնեալ անգրէն Յորայ ասէ •

Դառինք են բանք իմ, ոչ ժրխտեմ, ծանուցք են ողբք իմ եւ բողբք •
 Այլ ծանրագոյն ձեռն որ ցաւովք զիս հարկանէ գառնակրակիծ :
 Ո՛ տայր գտանել ինձ ըզնա, մինչեւ յաթու նորին մատչել, (1)
 Եւ առ ոտրս նորս զաղերս եւ զողբս իմ արկանել •
 Լըսել որ ինչ խօսիցի, իւ իւիք զիս ողբիցէ •
 Եւ խելամուտ գոլ խորհրդոց՝ զորքս նա ինքն ինձ սրտամեացէ :
 Յանկարծ թէ ոչ զօրութեամբ գայր ի վերայ իմ հասաներ,
 Պակուցանել զիս յերեսաց իւրոց ըզսաստ ի կիր արկեալ,
 Այլ յաղերս խոնարհեալ՝ զիրաւունս իմ հանէր ի լոյս :
 Եթէ յելս արեւու երթայց յառաջ ի խընդիր,
 Թէ յեարս կոյս ընդ արեւմուտս, այլ եւ ոչ անդ գրաից ըզնա •
 Թէ գառնայցեմ յաջ թէ յահեակ, այլ ոչ ուրեք գրացի նա ինձ • (2)
 Իսկ ինքն ըզգնացս իմ եւ ըզսիրտ գիտէ՝ փորձեալ զիս իբր ոսկի •
 Ի պատուիրանքս նորս արահետեալ անըստերիւր,
 Չանցի զնոքօք, թագուցի սահեալ ի ծոց իմ զայնոսիկ :
 Ապա թէ ինքն այսպէս գատի, ո՞ գառնայցէ նրմա ընդդէմ •
 Արար որ ինչ եւ կամեցաւ, եղէց իրատու նորին ժուժկալ •
 Երկեայց ի նմանէ, ի միտ ըզսաստ նորին առեալ •
 Զի Տէր շարժեաց ըզսիրտ իմ, նա ինքն զիս տագնապեցոյց •
 Անկեալս ի մէզ վըշտաց՝ ընկլայ արդ ի խաւար յահէ նորին :

(1) Յայտ առնէ զբարեք վկայութիւն խղճի մտաց իւրոց՝ յատենն Տեառն դի-
 մելով 'ի սփոփումն, ուստի խուսելն խնդրէ մեղաւոր :

(2) Այսինքն 'ի հարաւ՝ որ անկանի յաջմէ 'ի հայելն ընդ արեւելս, և հիւսիս 'ի
 ձախմէ :

ԳԼՈՒԽ ԻԳ

Ան 'ի հաստատունը և ևս զի վիշտք և արկածք ոչ միշտ 'ի պատիժ հաստանեն, ցոռցանե ապա Յոր զգաղունի խորհուրդս ևսխախտանորեանն Աստուծոյ 'ի յաւնի զգաղունիս անօրինաց՝ զորոց ևկարագրե զկործանումն :

Իսկ ընդէր 'ի մոռացօնս ամբարհաւաճք արկին ըզՏէր,
Զանդ այլոց գրաւեցին վաղեալ ըստ վէճ՝ եւ ըստ սահման . (1)
Ընդէր ըզհօտ հանդերձ հովուօք յախրչտակեալ անպատուհաս,
Զէշ որբոյն վարեցին, եւ զեզն այրւոյն առին յաւար,
Ըզաբկարն ընկճեցին, զըրկեալ զանկածն 'ի յիրաւանց,
Եւ յերեսաց նոցա հեղք երկրի թագեան մացառաղօլք .
Դիպեցան իբրեւ ըզցիւ վայրի մոլեալ ընդ արտորայս .
Յանդ տըհաս, որ ոչ իւրեանց էր, հինաբար արկին մանդալ .
Եւ զայդի անանկին կըթեալ, հարին յարիւն նորին հընձան .
Ըզմերկն անձորձ նընջեցուցին, զերծին զըզգեսա ծածկոյթ հէքին .
Եւ 'ի ցօղոյ լերանց թացեալ՝ եմուտ անյարկ ինքն ընդ վնաս .
Կորդեցին զորբն 'ի ստենէ, եւ զքաղցեւոց հատին ըզհաց .
Արբեցան 'ի կուծս այգեաց պապակեւոցն 'ի ծարաւոյ .
Եւ որ 'ի տանց իւրեանց զըրկեալք՝ եւ աղաղակ նոցին առ Տէր :
Իսկ նա ընդէր այսոցիկ այցելութիւն ոչ առնիցէ .
Նա աւանիկ խարխափեն 'ի խաւարի, առեան ըզլոյս .
Մորորեալք եւ զճանապարհս արգարութեան ոչ զխտացին .
Ի մահունս եւ 'ի գողօնս յածին ըզցայդ եւ ըզցերեկ .
Եւ շնացեւոյն աչք կըկոցեալ զերեկորին դիտէ զնըսեմ,
Քօղ զերեսօք արկեալ զի ակն ըզնա գէտ մի զականիցէ .
Փորէ իւր տուն 'ի մըթան, խոյս 'ի լուսոյ տըւեալ 'ի առէ . (2)
Եւ նըշոյլք առաւօտին ըստուերք մահու թըւին նըմա .
Յերեսաց նորա ահիւ յուղեալ ծըփի իբրեւ ըզծով,
Իբրեւ ըզփայտ յանտառի 'ի մըրըրկէ հողմակոծեալ :
Այլ յիշեցին մեղք իւր անդէն, տացէ նա վրէժ երագահաս,
Փոխանակ զի զորբոյն յախրչտակեաց զանթանոցիկ .
Բարձցի իսկոյն անօրէն հանդոյն ամուլ ծաւոյ հատեալ,

(1) Ա. յախնքն ընդ կոթողս՝ որ 'ի բաժինս անդոց առ 'ի նշանակ կանգնէին :

(2) Ա. նօրէնք, և մանաւանդ որք պղծութեանց զհետ երթեալք, խնդրեն զխաւար գիշերոյ, և առեան զլոյս տուընջեան, երկուցեալ թէ գուցէ յայտնեացին անօրէնութիւնք իւրեանց :

Ձի ոչ խնայեաց ամուրուոյն, զի այրուոյն ոչ բարերարեաց,
 Ձի ոտընհար եղեւ հիբին, զի հար զանգօրն եւ կործանեաց :
 Բայց թէ եւ ինքն յոտին կայցէ, մի կարծեսցէ զանձն անկործան :
 Որ զներելով հրգօրին արհամարհեալ կայ ի չարիս,
 Թէպէտ եւ յամր՝ հասցէ ապա օրհաս նրմին եւ կորիցէ,
 Իբր ի տօթի բոյս թարշամեալ, որպէս անկեալ հասկ ի ցօղնոյ :
 Իսկ որում սուտ բանք խմ թուիցին, ցրեւ ցրեսցէ զնոսին ճն :

ԳԼՈՒԽ ԻԵ

Յահելոյ մեծոքնեկե Սարտուծոյ և ՚ի չեչիև փանարոքնեկ մարդկան զհետ բերե տառ Բաղդատ, զի ոչ որ առաջի նորա կարասցէ արդարանայ :

Կրկնեալ անդրէն Բաղդատայ սաւքեցւոյ սակ .

Իսկ ընդունայն ինչ իցէ ահ մահկանացուի առ ի նմանէ,
 Որ իշխէն ի բարձունս եւ չիք համար զօրաց նորա .
 Յոյր վերայ հէնք դարանակալք գահու նորա ոչ եկեսցեն .
 Եւ զիարդ արդարասցի մարդ յատենի նորա դատեալ, (1)
 Կամ երեւել առաջի նորա սուրբ այր կանանցածին .
 Ձի լուսնի թէ հրամայէ, եւ լուսին ոչ լուսածագէ,
 Եւ աստեղք լուսափայլք թէ առաջի իւր չիցեն սուրբ, (2)
 Թող թէ մարդ երբ զազիր, եւ որդն անարդ որդի մարդոյ :

ԳԼՈՒԽ ԻԶ

Նկարագրոքիւն ամենակալ զօրոքնեկե Սարտուծոյ, զոր յանդիման անեկե գործք նորա . և զի չե նա կարօտ յաւերք օգևականօքնեկ :

Կրկնեալ անդրէն Յորայ սակ .

Յո՞ մօտիցիս ձեռն տալ, ո՞ւմ ի թիկունքս հասանել .
 Իցէ թէ Տեառն զօրութեանց կարօտ քոյսւմդ իցէ բազուկ ,

(1) Այս ՚ի սատասխանի բանիցն Յորայ, որ ՚ի ԳԼ. ԻԳ. բողոքէրն յատեն ամենակալին :

(2) Իմա զկատարելագոյնս յարարածոց :

Կամ խորոց իմաստութեան խորհրդակից գոլ իշխիցես .
 Իցէ՞ թէ սկայք վերկենցաղեալ ելցեն իւրովքն անդրէն յալեաց : (1)
 Մերկ են դըժոխք յաչըս նորա , եւ չեք ըզգեսա կորըստեան .
 Կախեաց զերկիր զոչընչիւ , կան յոչընչի բեւեռքն ի յեց .
 Ծրարէ ի յամպս ի վեր ըզջուրս , և ոչ հերձուն ամպք ընդ նոքօք .
 Ծածկէ զգահոյս իւր ի վերայ ամպոց , թռուցեալ ըզնովաւ մեզ .
 Սահման եդ ջուրց , եւ ոչ անցցեն ցորչափ ծագէ արեւ յերկիր .
 Ի սաստէ նորին զահի հարեալ կան սիւնք երկնից ի թիւ . (2)
 Զօրութեամբ հանդարտէ զծով , սանձէ զալիս ովկիական .
 Աղիք երկնից սարսեցին բոցաճաճանչ յեռեալ աստեղք ,
 Եւ հրամանաւ իւրով ի վն՛ անդր ըզվիշապն արկ զասլըստամբ : (3)
 Այսոքիկ զօրութեան նորա հանդէպ փոքր ի շատէ .
 Իսկ եթէ շիթ մի ի բանից նորա այսքան է հրաշալի ,
 Ո՞ սպառնալեաց որոտալոյ նորա ի լուր հանդարտեսցէ :

Գ Լ Ո Ւ Խ Ի Է

Դարձեալ հաստատե զանմեղոռքիւն իւր՝ հերքելով զյանդիմաւ
 նոռքիւն բարեկամացն , զվկայոռքիւն խղճի մտացն ՚ի հերքս ա-
 ծեալ . ՚ի պատճառս զգոռչոռքեան ՚ի մեղաց՝ զհանդերձեալ թշուա-
 ւոռքիւն անպարշտաց նկարագրէ :

Դարձեալ յաւելեալ Յորայ յառակի (*) իւրում ասէ .

Երգուեալ ի Տէր կենդանի՝ որ զիս այսպէսըն դատեցաւ ,
 Յամենակալն՝ որ հարուածովքս այսոքիւք հար զիս կարեվէր .
 Յորչափ իցէ շունչ ի յիս , ցորչափ հոգի աստուածեղէն ,
 Մի խօսեսցին շրթութունք իմ սուտ , մի թիւր ինչ սիրտ իմ իմասցի .
 Եւ զրահեղեղ բանից ձերոց մի լիցի ինձ տալ իրաւունս .
 Արդարութեան սրտակառ կացից , ոչ ուրացայց զանմեղութիւն ,
 Զի ոչ գիտեմ գործեալ անձին ինչ անպատեհըս , քա՛ւ լիցի : (4)
 Թըշնամանողք արդարութեան ընդ ամպարիշտըս կորիցեն ,

(1) Ակնարկէ ՚ի ջրհեղեղն՝ յորում կորեան հսկայքն պատուհասեալ ՚ի Տեառնէ
 ընդ որեարն ժամանակակից նոցա և մեղսակից :

(2) Միւնս երկնից իմա զլերինս բարձունս՝ որք իբր այն թէ բառնան զերկինս ՚ի
 վեր , որպէս և յարտաքնոցն քերթողաց ոմանք այլաբանեցին :

(3) Բնականագոյն իմաստ տողիս է իմանալ զվիշապն անդնդային զսատանայ :

(*) Առակ ՚ի բարբառ երբայական նշանակէ տաղ , ոտանաւոր , բան չափաւ :

(4) Եթէ մեղաւոր այլուր զանձն խոստովանի՝ այն զգուզնաքէից տկարութեան
 յանցուածոց է իմանալի , որովք եօթնիցս յաւուրն անկցի արդարն . վասն որոյ
 սպաւինեալ ՚ի վկայութիւն խղճի մտաց իւրոց , դատապարտէ զզրպարտիչս իւր
 ընդ անօրէնս :

Եւ ի վերայ իմ յարուցեալք իբր անօրէնք սատակեացին :
 Իսկ զինչ է յոյս ամպարըշտի իւ խիզախէ թէ ապրեացի ,
 Կամ թէ երկինք ի վերուստ աղերսանաց նորա լուիցեն •
 Թէ հասանէ նրմա տագնապ , ոչ իշխեսցէ կարդալ առ Տէր :
 Արդ սրատմեցից ձեզ ըզխորհուրդրս Բարձրելոյն , ոչ ծածկեցից •
 Այլ աւաղիկ չեն ինչ զանխուլ ի ձէնջ , գիտէք իսկ զայնտիկ •
 Սակայն սնտախ դուք ըզսնտուով պատէք ի զրոյցրս տարապարս •
 Այս է բաժին ամպարըշտի յամենակալ Տեառնէ կրնքեալ •
 Անկցին ի սուր սուտերի որդիք նորա բազմասերունդք •
 Եթէ հասցեն իսկ ի տխր ի մոյր առ դրուհրս շրջեացին ,
 Եւ մնացորդաց նոցա հասցէ տարաժամու կանխեալ օրհաս •
 Եւ մի այրեաց նոցա որ ցականեւոց ողորմեացի :
 Եթէ իցէ մըթերեալ նորա արծաթ իբրեւ ըզհող ,
 Եւ հանգոյն կաւոյ ոսկի թէ գիզագէզ շեղձակուտեալ ,
 Զայն ամենայն արդարք կալցին , այն ճըշմարտից լիցի բաժին • (1)
 Եւ տուն նորա իբր ըզցեցոյ , իբր ըզդիւրեղծ ոստայն սարդի :
 Ոչ ինչ ընդ իւր ոչ ինչ տարցի ճոխն ի քնարան անդրը շիրմին ,
 Եւ ի բանալ զաչս անգանօր՝ ոչ ինչ յիւրոց անտի տեսցէ •
 Պատահեցեն նրմա ցաւք որպէս հեղեղք ջուրց որպէս ուղիւք ,
 Եւ պատեացին ըզնովաւ որպէս մըրբիկ ի գիշերի :
 Աւցեն ըզնա որպէս խորշակ եւ ի կայից իւրոց խլեացեն •
 Հարցէ զնա Տէր , մի խնայեսցէ , չիք յերեսաց նորա փախուսա •
 Եւ որ զնորին տեսցէ զտեղի՝ ծափըզծափի հարցէ զնովաւ ,
 Ու ի սոյլ շրթանց ու ի արուի ոտին նրմա եղերրս կարդասցէ :

ԳԼՈՒԽ ԻԸ

Միւս ևս պատճառ զգոռչոռքեան ՚ի մեղաց՝ ստանալ զձշմա-
 րիտն իմաստոռքիւն , որ պատռուականագոյն է քան զամենայն
 զանձս , և չեն ևորա բովր որպէս ոսկչոյ և արծարոյ , այլ պարզե
 է ևրկեատոռք՝ որ ևրկիշոյիւն ևևր Սատոռծոյ ստացանի :

Զի է տեղի արծաթոյ , ուր գնան երակք զեռեալ նորին •
 Զի է տեղի եւ ոսկւոյ , ուստի կըզկղի հետազօտեալ •
 Երկաթ ի հող ներդոյացեալ , եւ վիմաձեւ տաշի պըղինձ •
 Կարգ էք եւ բնաւք գան գիւտք ի լոյս , հերքեալ խաւար յայնժամ ի
 [բաց

(1) Զի որպէս ցեց կըծեւով զհանգերձս՝ կազմէ իւր անդ բոյն , որ ՚ի թօթափեւ
 հանգերձիցն՝ կորնչի , և որպէս ոստայն սարդի յաւել ամեւ կըծանի , այսպէս և
 տունք անօրինաց են գիւրակործանք :

Իբր ի խրամ հեղեղատի անկեալ գոհար անձեռնմերձ .
Որ ի հունձ հասկահասուն երկիր երբեմն ծածանեալ ,
Բերէ հրահալ ընդ հացի , բերէ քարինըս շափիղայ :
Թըռչնոց խկ ոչ ծանուցեալ , եւ ոչ դիտեաց զայն ակն անգեղ .
Ոչ կոխեցին անդ թանգարաց որդիք , չէանց ընդ այն առիւծ .
Ձըգէ ըզձեռն իւր յապառաժ , քակէ զլերինս ի հիմանէ . (1)
Պատառէ զժայռս բանայ առ ի սլրտոյարս ջուրց ուղի .
Հաս յամենայն ինչ ցանկալի ամենատես ակրն նորա .
Յայանէ ըզխորըս գետոց , ածէ որ ինչ անդ գանձք ի լոյս :
Իսկ ուստի խմաստութիւն գըտաւ , կամ ո՛ւր վայր հանձարոյ .
Ոչ գիտէ զուստ նորին մարդ , եւ ոչ նորա գիւտք ի մարդիկ .
Ետուն անգունդք ձայն ի խորոց եւ ասացին թէ չէ առ իս .
Ձայն եւ ալիք ետուն ծովու , ասաց եւ ծով չէ ընդ ինեւ .
Ոչ գրաւ ընդ այնրր տացի , ոչ կըշուեսցի արծաթ փոխան .
Ոչ ընդ ոսկւոյն Սովկերայ բարձցի ի նժարս այն ի կըշուոց .
Ոչ զուգեսցի ընդ շափիղայ , մի 'նդ եղնգան սլատուականի .
Ոչ ի կըշիւ ընդ նրմա գայցէ ոսկի , ոչ սպակի . (2)
Եւ ոչ ի գինըս նորին բաւեն անօթք անբաւ ոսկեայք :
Կարկեալ առ նովաւ դադարեն խորք , լըռեն բարձունք .
Ձըգի ի խոր քան զանգունդս եւ գեր ի վեր խմաստութիւն .
Ոչ ընդ ոսկի սուրբ բարձցի , ոչ ընդ հընդիկ տըսլաղիոն .
Իսկ ուստի խմաստութիւն գըտաւ , կամ ո՛ւր վայր հանձարոյ :
Ղօղեալ ի մարդիանէ եւ ի թըռչնոց երկնից անտես .
Կորուստ եւ մահ ասացին՝ մէք ըզփառաց նորին լըւաք ,
Իսկ ճանապարհ իւր եւ տեղի՝ ոչ մեղ այլ Տեառն է գիտելի ,
Մխայնում որ զամենայն առ ի ներքոյս երկնից գիտէ ,
Որ զամենայն ինչ ինքն արար , կըշիւ հողմոց , չափ եղեալ ջուրց ,
Օրէնս անձրեւաց եւ սահմանեալ ուս մըրըրկի :
Յայնժամ ետես ինքն ըզնա , յայնժամ սլատմեաց ըզնրմանէ .
Անդրստին տեսող դաղանեաց նորին ասէ յայնժամ ցըմարդ .
Ահա երկիւղ Տեառն , եւ չիք բաց ի նմանէ խմաստութիւն .
Ահա մեկնել ի չարեաց , եւ չիք հանձար բաց ի նմանէ :

(1) Այսինքն զի առ ՚ի հանել զոսկի և զարծաթ յաղթէ մարդ ամենայն դժուարութեանց , մինչև պեղել զանկոխ վայրս հասանել ՚ի խորս ցհիմունս լերանց , և զժայռս պատառել :

(2) Ապակի դժուարագիւտ երբեմն էր և մեծագին յոյժ :

ԳԼՈՒԽ ԻԹ

Յանկայ յառաջին բարեկենդանոչիւն իշր դառնալ, և զայնր ժամանակի բարեգործոչիւնս իշր պատմե՛ առ ՚ի հերքել զանի-
րառ կշտանբանս բարեկամացն :

Դարձեալ յաւելեալ Յորայ յառակի իւրում ասէ .

Ո՞ առնէր զիս ըստ աւուրց՝ որ բարեբաստք անցին զինեւ ,
Յորբս պահէր զիս Տէր եւ ճրագ իւր յորժամ յիս լուսածագէր ,
Յորբս գնայի ես ընդ խաւար զըւարձացեալ ի լոյս նորին ,
Յորժամ այց առնէր ինձ Տէր եւ մեծութեամբ էի զգածեալ ,
Յորժամ որդեակք իմ առ ինեւ եւ շուրջ զինեւ կային ծառայք ,
Յորժամ կողով իւղաթուրմբս ճանապարհք իմ թանային ,
Եւ կաթամբ լերինք եւ բլուրք իմ զեղուին ուռդանեալ :
Յելանեւ իմում այգուն ի հրապարակրս քաղաքին ,
Արկանէր ինձ աթու , արկանէր բեմ գատողական .
Յերեսաց իմոց սարսեալ խուսափէին երիտասարդք ,
Եւ յառնէր ծերակոյտըն յոտըն կայր պատկառանօք .
Դագարէին ի խօսելոյ՝ մասն ի շըրթունրս ճոխք եղեալ ,
Որք լըսէինըն զինէն երանէին ինձ հեռաւորք
Եւ տեսողաց անմըւունչ լեզուք ի քիմբս կըցէին :
Ունին որ լըսէր՝ երանի տայր , ակն որ հայէր՝ խորչէր յինէն .
Փըրկեցի զորբն անօգնական , զորբն եւ զաղքատ ի հըզօրէ .
Օրհնեաց բերան զիս այրւոյն , շուրթն ի կորուստ վըտանգելոյն :
Ըզգեցեալ զարդարութիւն , եւ զիրաւունս արկեալ զինեւ
Հանգոյն ծիրանւոյ , գնայի նոքիմբք գերազարդեալ :
Էի ես հայր տըկարաց , էի կուրաց աչք , ոտք կաղաց .
Ըզգատաստան անձանօթ մանրախուղիւ հարցափորձեալ ,
Եւ վըէժիւրնդիր ըզկըզակս անիրաւաց խորտակէի ,
Ի միջոյ ժանեաց նոցա զառ եւ զասուռ յափըշտակեալ :
Ասէի . թէ ծերացայց , կեցից հանգոյն արմաւենւոյ ,
Արմատս ի ջուր ընդարձակեալ , աճեալ ի ցօղ երկնատեղաց .
Այլ ի դերեւ եւ յոյս իմ , եղեն կարծիք իմ ընդունայն .
Անկաւ աղեղն իմ թուլացաւ , լըքաւ բազուկ իմ կորովի : (1)
Ունկընդիւրք իմ անսային ինձ կարկէին ի խորհըրդեան

(1) Աղեղամբ , որով հինք առաւելապէս մարանչէին , սյլաբանի զօրութիւն որ
պէս և այլ ուրեք ուրեք ՚ի սուրբ գիրս :

Կացեալ յահճիւրս խընդամիտք , ոչ ինչ ի բանս իմ յաւելեալ ,
Իբրեւ զերկիր ծարաւայոյժ՝ որ սպասիցէ անձրեւաց ,
Այսպէս եւ նոքա սպասեալ կային խօսից խնոց .
Ոչ սպասեալ երբէք նոցին ի ծիծաղել խնում նուազէր , (1)
Ոչ ըսթափումն ի խօսել խնում խոժոռ եւ անժըպիտ ,
Իբր ահաւոր թագաւոր բազմեալ ի խումբ զօրականին :

ԳԼՈՒԽ Լ

Ողբայ աղիողորմ գվշտակրոշքիւնս իշր յիշատակաւ առնորցն
անցերոց , զնախատիլն ՚ի սիւնքոր մարդկանէ և զրողոշ լրանել
իշր ՚ի Տեառնէ . և սպա դիմէ առ ևս , և ՚ի ևս դարձեալ յոշտայ
համբերել ՚ի սպառ :

Արդ ծիծաղին զինեւ յետինք , եւ խրատելով զիս արդ խրատեն .
Զորոց ըզհարս անդոսնէի , եւ զորս չէր իմ համարեալ
հաւասար շանց՝ որ հօսից խնոց յարօտս ունէին սպահ .
Որոց չէք ինչ վաստակ և ոչ ի ձեռքս զօրութիւն .
Ոյք առ յոյժ կարօտութեան ծիւրեալ ծընգեալ սովալըլուկ ,
Խոյս ի յերեկըն տային ի յանձրըրգիս յանձկութենէ .
Ոյք խարշափուն բանջարով կերակրէին շըրջապատեալ ,
Եւ ըզփայտից առ սաստիկ սովոյ զարմատաւ կըրծէին :
Արդ ի վերայ իմ յարեան գողք՝ որոց տունք ծակք էին վիմաց ,
Որոց ի մէջ արձագանգաց ի քարանձաւս էր բնակութիւն .
Ոչք ընդ խըռուովք վայրենեօք մացառաղօղք լինէին ,
Որդիք անըզգամաց շիջելափառք եւ անուանարկք .
Արդ քընար եմ ես նոցա , եւ ի լուտանըս զիս ունին .
Գարշեցան յինէն , եւ ոչ թուք յերեսաց խնոց ինայեալ .
Զի եբաց Տէր ըզկասարճ իւր եւ սպառէ ըզնետս ի յիս :
Իբր ամէհոյ երիվարի սանձ երեսաց խնոց էարկ .
Ի բողբոջել խնում ձըգեաց զոտն իւր զինեւ , եղէ կոխան .
Առնթեր շառաւեղաց խնոց արար իւր արահետ ,
Շըփեցան շառաւիղք իմ ընդ շաւիղ իւր ի կորուստ :
Մերկացոյց զիս խոցոտեաց նեախք զիարդ եւ կամեցաւ .
Ազիտիւք եմ վարակեալ , զեղան յիս ցաւք դառնակըսկիծք .
Գընաց յինէն յոյս իբր ըզհողմ , եւ վըրկութիւն իբրեւ ըզմէգ .
Եւ արդ զեղծցի անձն իմ յիս , ունին աւուրք զիս արդ ցաւոց .

(1) Առաքինութիւն կարևոր իշխանաց , ոչ ՚ի զուարճախօսելն վերջանալ ՚ի
ճանրութենէ , և ոչ ՚ի բարկանալն ՚ի քաղցրութենէ :

Խարշին ոսկերք իմ գիշերի, ջիւք իմ լուծեալ եւ գեղանին .
Ձօրութեամբ բազմաւ ըղձեռն իւր արկ զինեւ, շուրջ կարաւ զիս
Ձերդ ժապաւէն սրտմուճանի իմոյ զինեւ շրջապատեալ :
Հանդոյն կաւոյ համարեցայ, բաժին իմ հող է եւ մոխիր :
Առ քեզ աղաղակեմ, եւ ոչ ձայնի խնամ լըսես ,
Եւ ոչ զաչրս քո յիս ի գութ ածեալ դարձուցանես .
Պատահեցար ինձ անողորմ, հըզօր ձեռամբ հարկանես զիս .
Ընկեցեր ի բարձուէ ի խոր անդունդըս զիս վըշտաց :
Գիտեմ այո, գիտեմ զի մահ զիս ի վերջոյ սատակեացէ ,
Ձի բնակութիւն մահկանացուի է հող թէ վաղ թէ անագան .
Այլ ոչ ի սպառնալու երբէք դու զնա կորուսանես :
Լայի ընդ վիշտըս տրկարի, ընդ տառապեալն հեծեծէի .
Եւ աւասիկ սրտահեցին ինձ դառնագոյն աղէտք չարեաց .
Որովայն իմ եւայ, եւ ոչ տայ ինձ դուլ եւ հանդիստ .
Հասին աւուրք ինձ կարեաց, նեղեալ շրջիմ եւ կարօտեալ .
Բողոք ի մէջ եկեղեցւոյ գուժիւ բարձեալ աղաղակեմ,
Կամակար ըզսրբտառուչ շրթունս ինձէն սանձակոծեալ .
Համբարուաց եղէ եղբայր, եղէ ընկեր ես ջայլեմանց . (1)
Սեւացու մորթ իմ ի տապոյ, եղեն ոսկերք իմ տօթակէզ .
Դարձաւ քընար իմ ի սուգ, սիրտ իմ եւ երգ իմ ի լալիւն :

ԳԼՈՒԽ ԼԱ.

Այս ի ցրեղ ՚ի ապառ զբարեկարեացն զբարարտոշիւն, զդատաստանսն Աստուծոյ կոչէ ՚ի վերայ իշր ՚ի վկայութիւն անակորտրեան իշրոյ, և պատմե գառաքիւնութիւնս՝ յորս ՚ի մանկութենէ վարժեալն էր :

Ուստի ընդ աչս իմ եզի, եւ չհայեցան աչք իմ ի կոյս .
Ձի ո՞ր բաժին, ո՞ր հանդիստ ի սիրտ անսուրբ է Բարձրեւոյն .
Ոչ ապաքէն գանձի կորուստ անիրաւաց եւ անարբոց ,
Եւ տարագիր ի նմանէ մերժին ոյց պիղծ են ճանապարհք .
Ոչ ապաքէն դիտէ նա ինքն ըղձանապարհս իմ ի վերուստ ,
Եւ զամենայն թըւեն ըզգնացս իմ աչք նորս ամենատես ,
Գիտէ նա զանմեղութիւն իմ ի կըշիւ արդար կըշուեալ :
Եթէ գնացի ընդ անիրաւս եւ վաղվաղեաց ոտն իմ ի նենդ :

(1) Համբարուաց և ջայլեմանց ասէ նմանեալ ողբովքն, որպէս և Մեքիս ասէ ԳԼ Ա. 8. Արասցէ կոծ իբրև զգաստերաց համբարուաց :

Թէ զարտուղեաց ոտն խմ, թէ սիրտ խմ ի հրասպոյրս աջաց խնոց,
Եւ ի կաշառս եթէ երբէք եղեւ ձեռաց խնոց հըպել,
Ապա ես սերմանեցից եւ այլք զարդիւնարն կերիցեն,
Ապա կորեայց, արմատաքի սպա յերկրէ աստի խլեցայց :
Թէ զհետ կրնոջ առն այլոյ խոտորեալ սիրտ խմ զառածաւ,
Եթէ առ դրուհրս տան նորա եղէ երբէք դարանակալ,
Լիցի սպա հարսն ծոցոյ խնոց այլում ի յաւար,
Անտերունչ սպա մանկունք խմ սիրասունք տառապեսցին :
Զի եղեան է մեծեղեան ըզհարսն այլոյ առեւանկել,
Հուր ի յանդամբս նորա վառեալ մոլի բոցածաւալ,
Այրէ սպառէ զամենայն յոր կոյս եւ շուրջ հասանիցէ :
Թէ արարի երբէք անտես ըզճառայի կամ զաղախնոյ
Մատուցելոյ առ իս յատեան զարդարութիւն եւ զիրաւունս,
Զինչ գործեցից եթէ հարցիորձ ինձ զայնմանէ արասցէ Տէր,
Զինչ նրմա տաց պատասխանի թէ արասցէ այցելութիւն.
Ո՞չ եւ նոքա եղեն այնպէս որպէս եղէ ես յարգանգի,
Ո՞չ հանգունակ խմ եւ նոցա լուծեալ զերկունքս մայրենի :
Ո՞չ որոց պէտք ինչ էին վրձարեցի կարօտելոյ.
Ետն երբէք այլուոյ առ դրուհս խմ կողկողել ցականելոյ.
Եթէ կերայ արդեօք ինձէն ըզպատառիկն խմ միայնակ,
Եւ ո՞չ մասն անտի որբոյ սովեցելոյ կարկառեցի.
Ի սկրզքնաբոյս տիոց անտի եղեւ ինձ գութ սրնրնդակից,
Եւ անգըստին ի յարգանգէ մօր խնոց ել ընդ իս ի լոյս :
Թէ արարի անտես ըզմերկն, եւ ո՞չ զաղքաան ըզպեցուցի.
Ո՞չ օրհնեցին թիկունք նորա զիս՝ ի կրարոց խնոց ջեռեալք :
Թէ յիրաւունս իսկ առի ընդդէմ որբոյն ըզձեռն ի վեր,
Անկցի սպա թափեացի ուս խմ յանրակէ խմէ ի բաց,
Եւ բազուկ խմ ջախջախեալ խորտակեացի յարմըկանէ.
Զի ահ Տեառն կալաւ զիս, եւ ոչ ընդդէմ դարձայ նրմին :
Թէ յուսացայ երբէք յոսկի եւ ի յականքս պատուականս,
Եթէ ի գանձքս մեծութեանց յամբաւքս ձեռն յանձին հարեալ,
Ան ի ճաճանչ արփուոյն արկի կամ ի լուսին լուսասպատար, (1)
Եւ խաբեցաւ սիրտ խմ դրնել աջ ի շըրթունս առ ի համբոյր,
Համարեացի ինձ այն յեղեռն ի թըշնամանքս Բարձրելոյն,
Որ տայն խմաստութիւն, յորմէ է կար եւ զօրութիւն :
Թէ գլորելոյ թըշնամուոյն եղէ երբէք ես ոտնհար,
Եւ ընդ աղէտքս նորին թէ ասացի երբէք վաշ վաշ,

(1) Իմա առ ՚ի պաշտել զարեգակն և զլուսին, որպէս յաճախեալն էր յայնժամ այս ազգ զիցասպաշտութեան առ արեւելեայս, որք երկրպագէին արեւու՝ յիւս նորա, և լուսնի՝ մանաւանդ ՚ի լրանալ նորա, և զեղանակ իսկ պաշտամանն բացաւ արեւու որպէս սովորութիւն է ցարդ արեւելեայց առնել ՚ի մեծարանս :

Լըւիցէ ունին իմ անէծս , եղէց խնոցրս զըզուելի :
 Քաղցր աղախնեայց էի խնոց , բազում անգամ նոցա զինէն՝
 Ո՞ տայր յագել մեզ ի մարմնոց նորա՝ ըզձիւք յեղեղելով : (1)
 Ոչ ազանէր բացօթեադ օտար ի դուրս իմ արտաքոյ ,
 Զի դուռն իմ բաց բողբոջուանց էր եկելոց առ իս հիւրոց •
 Արձակեցի երբէք զոք ունայն գոգով ի դրաց խնոց •
 Թագուցի երբէք ըզմեղս իմ ահամայ թէ մեղուցեալ ,
 Առ ի չպատմել առ ամօթոյ ի բազմախուռն լըսելեաց •
 Ո՞ տայր թէ գրէր ոք զայնոսիկ ինձ ի յետկար արձանակեալ • (2)
 Որպէս սլրսակ զայն ի դուրս եւ իբր օրէն սլատուոյ ի յուս
 Բարձեալ կրէի , առ դատաւորն իմ զայնոսիկ խոստովանեալ :
 Եթէ հեծեաց երկիր վասն իմ , եթէ ահօսք նորա լացին , (3)
 Թէ զզօրութիւնրս նորա կերի երբէք առանց դրնոց ,
 Եւ զաէր երկրին եթէ երբէք զայրացուցեալ տըրամեցուցի ,
 Բուսցի ապա եղի՞՞ ի յանդս իմ փոխանակ ընդ ցորենոյ ,
 Եւ փոխանակ դարւոյ բերցեն ինձ արտորայք իմ մորենի :

ԳԼՈՒԽ ԼԲ

Եւ դադարեաց Յօբ ՚ի խօսից • լուցին և երեքին բարեկամք նորա
 այնուհետև ՚ի խօսելոյ ընդդէմ Յօբայ , քանզի էր Յօբ արդար առաջի
 նոցա : Եւ բարկացաւ Եղիուս (4) Բարաքիելի բուզացի , յազգականու
 թենէ Արամայ՝ աշխարհին աւստացւոց , բարկացաւ Յօբայ յոյժ , զի
 երևեցոյց զանձն արդար առաջի Տեառն : Եւ ՚ի վերայ երեցուն բարե
 կամացն բարկացաւ յոյժ , զի ոչ կարացին տալ պատասխանի ընդդէմ
 Յօբայ • և եգեալ զնա լինել ամպարիշտ : Եւ Եղիուս հանդարտեաց ՚ի

(1) Սովին բացատրէ զսէր աղախնեայց իւրոց ընդ իւր , որպէս և Ոսկերերան
 Հայրապետին զայս այսպէս իմացեալ , և ապա յարէ . Այսպէս և Քրիստոս ևս
 մեզ զմարմին իւր ՚ի կերակուր , հրաւիրելով զմեզ ՚ի սէր իւր :

(2) Այնքան ՚ի վկայութիւն խղճի մտաց իւրոց վստահացեալ , զի ցանկայ թէ
 գրէր ոք ՚ի տոմսակի գյանցուածս իւր՝ յորս չգտանէր ինչ ՚ի ծանունց աներկրայ
 ապէս , որով լինէր նմա այն իբրև պսակ և իբր շիզոյ սլատուոյ՝ ՚ի խոստովանել
 իւրում զայնոսիկ առ դատաւորն ծածկագէտ :

(3) Յանիրաւել ուրուք առ մշակս և ՚ի զրկել զվարձկանս՝ իբր թէ հեծէ երկիր
 բողբոջելով և ահօսք նորա լան :

(4) Սուրբն Հերոնիմոս , ընդ ոմանց ՚ի բարունեացն Հրէից , համարի զԵղիուս
 նոյն ընդ Բաղաամու : Ըստ այսմ զասելն յազգականութենէ Արամայ մարթէ
 իմանալ յազգէ մերմէ , որպէս և զԲաղաամայ կարծէ բազմահմուտ Հայրն Ինձի
 ճեան ՚ի Հնախօսութեան Հայաստանի . Գ . 53 . 54 : Սա ևս որպէս զայլս զօրար
 տէ զՅօբ . և ոչ համօրէն ՚ի վերայ կացեալ բանից նորա , համարի կարծել նմա
 արդարանալ առաջի արդարութեանն Աստուծոյ՝ առ որով ամենայն արդարու
 թիւն արարածոց են որպէս խաւար առ լուսով . ուր և ինքն իսկ Յօբ խոստովանի
 զայս ոչ դուն ուրեք , և մանաւանդ ՚ի ԳԼ . Թ :

տալոյ պատասխանի Յորայ . զի ծերագոյն քան զնա էին աւուրբք : Եւ
ետես Եղիուս եթէ ոչ գոյ պատասխանի 'ի բերան երեցունց արանցն ,
և սրամտեցաւ բարկութիւն նորա :

Ի լուսնոցանկ Յորայ զերեսին բարեկամս իշր , Եղիուս 'ի
նկարս մտանէ պանծացեալ յիմաստոշիւն իշր . և վեր 'ի վերոյ
ողորմեօք չարաչար ևս անբաստանէ զՅոր 'ի նոյն միտս պրե-
ղեալ :

Կրկնեալ անգրէն Եղիուսայ Բարաբիելի բուղացւոյ ասէ .

Մանուկ եմ ես հասակաւ , երկագոյնք էք դուք քան զնա .
Այսր աղագաւ որ ինչ խորհիմնս լուսնի ցարդ ի պատմել ,
Ասացի թէ ծերագոյնք իցեն աւուրբք որ խօսիցին ,
Եւ ուսուցեալ բազմահոլով ամաց նոցա խնաստութիւն :
Այլ ոչ այնպէս , այլ 'ի Տեառնէ անձնիւր մըտաց է զօրութիւն ,
Այլ հոգի աստուածուսոյց նա ի մարդումըս բարբառի .
Ոչ հինաւուրցն է խնաստուն , ոչ ծերունեաց է տալ վըճիւ .
Արդ ունկրն դիք բանից խոց , եւ պատմեցից ձեզ զոր գիտեմ .
Կարկեալ կայի ձեզ լու ի լու մինչեւ յամբոկ վէճդ ելանէր ,
Եւ ահա չէր որ յաղթէր Յորայ եւ տայր պատասխանի .
Մի դուք յաղթել կարծեալ այնու զի զնա Աստուած է որ խրատէ ,
Իչնէք բանիւք այդպիսեօք գոլ ոտընհար առնն միում :

Զարհուրեցան , և ոչ ևս ետուն պատասխանի . Հնացուցին յին-
քեանց զբանս . հանդարտեցին և ոչ խօսեցան , զի կացին և ոչ ետուն
պատասխանի :

Կրկնեալ անգրէն Եղիուսայ ասէ .

Խօսեցայց դարձեալ , զի բունն առնէ եռանդն ինձ խօսելոյ .
Որովայն իմ եռայ իբրեւ ըզտիկ քաղցուոյ կասեալ ,
Իբրեւ ըզփութքս դարբնաց հինինայ փոր իմ ուսուցեալ :
Խօսեցայց զի հանգեայց , արձակեցից ըզբրթունս իմ ,
Ոչ ակն ածեալ երեսաց , ոչ յուսեքէ ամաչեցեալ .
Զի ոչ գիտեմ աչառել , թէ ոչ եւ զիս ցեց կերիցէ :

ԳԼՈՒԽ ԼԳ.

Ողորդէ Եղիտա զՅոր, և ընդդէմ վատանորեան ևորա ՚ի խիղճ մտաց՝ ցոշցանէ զի չէ մարր արդարանայ մարդոյ աշուսի Աստուծոյ . հերքէ զբողոքեղ ևորա յատեան ամենակալին, բացատրէ զևրանակ ևրկնաւոր ազդեցութեան և խրատու, և զբաղցրութիւն Աստուծոյ ՚ի վերայ ապաշխարողաց :

Բայց աղէ լուր դու զբանս իմ Յոր, եւ ունկըն դիր խօսեց խնց .
Բայցի զբերանս իմ, եւ յանկեղծ սրբաէ լեզու իմ բարբառի,
Պարզ եւ վըճիս ի շըրթանց խնց բըղխէ ճըշմարտութիւն :
Հոգի աստուածեղէն ած ի չգոյէ զիս ի գոյ,
Եւ շունչ ամենակալ Տեառն է որ զիս ուսուցանէ :
Եթէ կարող ինչ իցես, աւուր դու ինձ առ այս պատասխանի .
Ճակատ առ ճակատ եկ ընդ իրեարքս մարտիցուք .
Ո՞չ ապաքէն հողեղէն եւ դու հաստեալ ես իբրեւ զիս,
Անդըստին ի նմին կաւոյ եմք ըստեղծեալ երկաքանչիւր .
Մի ապա ահ արկցեն ի քեզ, մի քեզ ծանուցիք բանք իմ թուեսցին :
Դու արդ յականջս իմ խօսեցար, լուայ զշըրթանց քոց ըզբարբառ,
Զի ասէիր թէ ոչ մեղայ, սուրբ եմ եւ չիք իմ յանցուցեալ .
Այլ մեղադրանս յիս եգիտ, համարեցաւ զիս իւր ոստիս,
Եւ եդ Տէր զոանս իմ ի կոճեղ, դէտակն ի դնացս իմ կառուցեալ :
Բայց ոչ արդար խօսիս դու զայդ, զի յոյժ խկ մեծ է քան ըզմարդ
Ընդ ում ի վէճ գալ յանդըգնիս թէ էր ձայնի քում ոչ լըսէ .
Միանգամ եւեթ խօսի Տէր, միւսանգամ ոչ յաւելեալ . (1)
Յանուրջըս գիշերոյ եւ ի նիրհէլ անդ յանկողնի
Արհաւիրք անհընարինք յորժամ ի սիրտ անկանիցին,
Յայնժամ խօսի նա տեսլեամբք եւ երազովք, յայնժամ խրատէ, (2)
Դարձուցանել ըզմարդ, փըրկել ի մահուանէ զոգի նորա,
Խնայել ի նա, մի դնա մատնել ի սայրասուր սայր սուսերոյ :
Դարձեալ ըզնա եւ ի մահիճըս կըշտամբէ հիւանդութեամբ,
Ըզբազմակոյտ ոսկերաց նորա հարեալ դառնակըսկիծ .
Յայնժամ գարշի նա ճաշակել որոց ցանկայր անձըն նորա .

(1) Պատասխանէ այսուիկ բողոքելոյ Յորայ յատեան ամենակալին, և ՚ի զուր ասէ սպասել նմա վերստին բարբառելոյ նորա, ՚ի յայնեւ միանգամ զկամս իւր :

(2) Յուցանէ զկրկին եղանակս յայնեւոյ Տեառն զկամս իւր, այսինքն տեսլեամբք և պատուհասիք :

Մինչեւ մարմին նորա սպառեալ, յայտնին ոսկերք իւր մերկ եւ սոսկ.
 Մահ ի վերայ կացեալ, եւ կեանք իւր ի դժոխիս մերձեանս :
 Սակայն թէ բիւրք բիւրուց հասեալ գայցեն հրեշտակք մահահրա-
 եւ ոչ մի ի բիւրոց անախ հարցէ ըզնա ի մահ, [ւերք,
 Ի դառնալ նորա առ Տէր՝ յիւրոց չարեաց սպաշաւեալ :
 Իբրեւ ըզձեփ որմոց մարմին նորա յայնժամ նորոգեսցի,
 Լիցին ոսկերք իւր ուղղակիք, քընքշեալ մարմին իւր փափկասցի
 Իբր ըզմանկան արղայոց, անդրէն յառոյգ ի տխր դարձեալ :
 Յաղաչել իւրում առ Տէր՝ լիցին աղօթք իւր լըսելի,
 Եւ հաշտ ի նա ակնարկեալ՝ առնէ նրմա Տէր իրաւունս :
 Մեղադիր յայնժամ անձամբ անձին եղեալ ասացէ մարդ,
 Մեղայ եւ չար արարի, մեղայ ծանունս անօրինեալ,
 Եւ ոչ զիս Տէր արժանի որոց մեղայն սրատուհասեաց .
 Կեցոյց նա զիս ի մահուանէ, աչք իմ տեսին անդրէն ըզլոյս :
 Ահա զայս ամենայն գործէ հըզօրն երկցս ընդ մարդ, (1)
 Առ ի փրկել ըզնա եւ տալ աչաց նորա հայել ի լոյս :
 Ունկըն դիր Յօբ եւ լուր ինձ, կարկեաց եւ թոյլ տուր ինձ խօսել .
 Եթէ ունիս ինչ առ այս, ասա ինձ, տուր սրտասխանի .
 Քանզի կամիմ, քանզի ըզձիւք ցանկամ զի դու արդարասցիս :
 Ապա թէ ոչ, լուր դու ինձ, եւ ուսուցից զիմաստութիւն :

ԳԼՈՒԽ ԼԴ

Եղիտա մեղադրե դարձեալ զՅօբ՝ ամպարշտոռքեան զքանս նո-
 յա համարեալ, և ցոռցանէ զարդարոռքիւն դատաստանացն Աս-
 տուծոյ՝ յորմէ ոչ ինչ ծածկի :

Կրկեալ անդրէն Եղիտայ ասէ .

Լուարուք ինձ խնաստու՛նք, եւ ունկըն զիւք ինձ հանձարեղք,
 Զի ունկն ըզբանիս քըննէ, եւ զկերակուր ճաշակեն քիմք :
 Դատեսցուք ի միասին, տեսցուք թէ է՞ իրաւացի,
 Զի ասաց Յօբ, արդար եմ ես, եւ զգատաստան իմ զընկէց Տէր,
 Չարար ինձ իրաւունս, հարան յիս նեաք իւր տարասպարա :
 Ո՞ իբր ըզՅօբ դք ըմպէ զարհամարհանս իբրեւ ըզձուր, (2)

(1) Երկցս ասելով ցուցանէ թիւ և սահման կոչելոյ Տեառն զմեղաւորս յասպաշ-
 խարութիւն, ոչ միանգամ ևեթ զնոսա և ոչ յանթիւ և յանսահման նուազս կո-
 շելով :

(2) Այսինքն արհամարհէ զԱստուած, անիրաւ զնա վասն անպարտակիր վըշ-
 տացն համարելով :

Ամպարը շտեալ հանգոյն նոցին՝ որ բամբասեն ընդ վայր ՂԱտուած,
Զի ի վերայ արդարոյ չիք ի նմանէ այցելութիւն :
Արդ լուարուք ինձ հանձարեղք, մարթ իցէ Տեառն անիրաւէլ .
Քաւ լիցի ամենակալ Տեառն ալմըկէլ զիրաւունս ,
Այլ ըստ գործոց իւրաքանչիւր հատուցանէ նա զհատուցումն .
Համարիցիք ըզնրմանէ թէ գործիցէ ինչ անիրաւ ,
Թէ կարիցէ ամենակալն զիրաւունքս ողորտորէլ .
Ոչ նա արար ըզտիեղերս , ոչ ինքն էլիցս իշխէ բնաւից .
Եթէ հրաման տացէ դաւնալ շնչոյ առ ինքն կենդանւոյ , (1)
Վախճանեացին որ ի վերայ երկրի մարմինք համանդամայն ,
Եւ ամենայն մարմին դարձցի անդրէն ի հող ուստի ստեղծաւ :
Լիւր արդ թէ է խմաստութիւն ի քեզ , անսա բանից խնոց .
Համարիցին դու անիրաւ զայն որ դարչի յանիրաւէն ,
Որ սիրէ զարդարութիւն , որով արդարք յաւիտեան կեան ,
Որ ոչ առնու ակն երեսաց , եւ ըզհրզորն իբր ըզարկար
Եւ զթագաւորն իբր ըզաւմիկ դատասպարտէ առ հասարակ ,
Ընդունայն հեղեալ նոցա ալերս , ընդ վայր արկեալ բողոք .
Զի սրբապէտ ամենեցուն է , չիք զանխուլ ինչ ի նմանէ ,
Եւ յերեսաց նորա տեղի թագըստեան չիք անիրաւաց .
Դիտէ ըզգնացրս նոցա , եւ ի խաւար խոր գիշերոյ
Ան ամենատես տեսալ ըզգործս ամպարը շտաց՝
Կորուսանէ ըզնոսա , զայլս ի տեղի նոցին կանգնեալ .
Տրբէ զխորհուրդս անօրինաց՝ ածեալ մըտաց նոցա ստուերած ,
Որպէս ի մուտս արփւոյն հրաման նորա փոխէ զտիւ ի գիշեր .
Եւ խաւարին շիջելափառ յամենեցունց լեալ մատընցոյց .
Զի խոտորեալ ՂԱտուածոյ եւ զիրաւունս իւր ոչ ծանեան :
Թէ զազաղակ տընանկին եւ ըզբողոք այրւոյն լուեալ ,
Լըսէլ տացէ ողբոց նորա , ո՞ արասցէ զնա դատասպարտ .
Եթէ երեսըս դարձուսցէ , ո՞ տեսանէլ կարասցէ զնա .
Այսպէս ազգաց եւ ազանց , այսպէս բնաւից առնէ մարդկան .
Զայր կեղծաւոր առ ի խրատ նոցա իշխան կացուցանէ : (2)
Խօսեցայ ես , խօսեաց եւ դու այժմիկ ասել ինչ թէ ունիս .
Եթէ վրիպակ ինչ տեսեր վազեալ ընդ շուրթն իմ , ցոյց ինձ զայն .
Թէ անիրաւ ինչ խօսեցայ , ոչ եւս ասել ինչ յաւելից .
Մի թէ ի քէն սրահանջիցէ Տէր ընդ բանից խնոց համար . (3)

(1) Եթէ չէր նա մարդասեր , և ամփոփեր ի մարդկանէ զչունչ կենդանի՝ զոր փչեաց ի նոսա , վախճանէին առ հասարակ :

(2) Ըստ այսմ սպառնաց Ատուած ի ձեռն Եսայեայ . Գ . 4 . Խաբերայք տիրեացեն նոցա :

(3) Ոչ է քեզ պարտ զգարել ընդ բանս , զորոց ոչ ի քէն սրահանջէ Տէր զհամար :

Նախ դու սկըսար խօսել, ոչ ես, յաւել որ ինչ արդ գիտիցես. (1)
 Հանձարեղաց է խօսել, եւ լըւիցէ այր խնաստուն :
 Այլ ոչ բարւոք խօսեցաւ Յոր, եւ բանք նորա չեն հանձարով .
 Սակայն ուսիր Յոր, մի տայես իբր անըզգամ պատասխանի .
 Ձի մի ի մեղըս քո լիցի քեզ յաւելուլ մեղս ի վերայ,
 Եւ բանք բաղումք քեզ ի յեղեուն առ Բարձրելոյն համարեացին :

ԳԼՈՒԽ ԼԵ

Եղիտա սատանօր այլ ընդ այրոյ բանս դեկ'ի բերան Յորայ, իբր
 րե չիցէ փոյր Տեսուն գրարեաց գործոց մարդկան և զչարեաց, և
 հերքե գայն :

Կրկնեալ անդրէն Եղիուսայ ասէ .

Ձինչ իրաւունս համարեցար զայդ, եւ դու ո՞վ ես զի ասես
 Գող առաջի Տեանն անարատ, կամ նրմա զի՞ թէ մեղայ :
 Արդ ես քեզ տաց պատասխանի, բարեկամաց քոց լու ի լու . (2)
 Հայեաց յերկինս ի վեր եւ տես քանի բարձունք են ամսքդ ի քէն .
 Ապաքէն ոչ ինչ նրմա, թէ մեղանչես, հասանէ չար .
 Եւ ի ձեռաց քոց զինչ առցէ, թէ գործիցես զարդարութիւն .
 Ձի նրմանոյ քեզ մարդոյ իցեն բարիք քո եւ չարիք : (3)
 Այլ զըրպարտեալք ի խռանէ եւ ի հըզօր բազկէ ընկճեալք,
 Եթէ բողոք բարձեալ առ նա աղաղակեն, ո՞չ լըւիցէ .
 Թէ ապաշնորհք բարերարին ոչ խընդրիցեն գիտել ըզնա,
 Որ սրահէ զպահ գիշերական շուրջ ըզնոքօք ի յարհաւրաց,
 Որ տայն իշխել մեզ հանձարով չորքոտանեաց եւ թրուչնոց,
 Տարաժամ ապա դիմեալ առ նա լիցին անըսելի,
 Արախտեաց նոցա ի ճահ յայնժամ արկածքն պատահեալ .
 Ձի ոչ այլազգ ինչ հանդուրժէ Տէր տեսանել զանկարգութիւն .
 Ձէ իսկ եւ չէ ամենակալն անկարեկիր մահկանացուաց,
 Աստուածախնամ տեսչութիւն չթողու զչարիս անպատուհաս :
 Դու քեզէն ըզքեզ դատես, եւ խոստովան լինիցիս,
 Ձի չեւ իսկ աստ ի նոցունց խընդրէ նա զվրէժ իւր զամենայն :

(1) Այսինքն արժանի ներելոյ գտանիմ, զի ոչ ես սկսայ խօսել քո իսկ ձայնա-
 տուր լեալ ՚ի վէճ :
 (2) Ձի յանդիմանէր իսկ զնոսա վերագոյն վասն չկարելոյ նոցա տալ պատաս-
 խանի Յորայ :
 (3) Այսինքն զի ոչ ՚ի բարեգործութենէ մարդկան օգուտ ինչ է Աստուծոյ, և
 ոչ ՚ի չարեաց նոցա վնաս, այլ նմանելոյ իւրում մարդ օգտէ նոքօք կամ վնասէ :

Ապա ուրեմբն զուր բանայ Յոր ըզբերան իւր ի բողոք ,
Եւ ընդունայն յաճախէ անդիտութեամբ ըզգանդատանս :

ԳԼՈՒԽ ԼԶ

Հաստատե դարձեալ Եդիոռս զարդարոտքիւն դատաստանացն
Աստուծոյ 'ի հարկանելոյ նորս գմարդիկ առ 'ի խրատ , որպէս զի
գայցնն 'ի զգաստոտքիւն . և զի 'ի դառնայ նոցա՝ զերծուցանե
զնոսս 'ի հարուածոց անտի : Յորդորե սպս զՅոր 'ի խոստովա
նոտքիւն , առաջի դեկոյլ նմա անդրեկն զբարեբաւտոտքիւն :

Կրկնեալ անդրէն Եդիուսայ ասէ .

Մընա ինձ տակաւին , փոքրը միւս եւրս ներեմջիր ,
Եւ ուսուցից անդրատին քեզ ի հեռուստ առեալ ըզճառս .
Զի է դեռ եւս , է ինչ՝ զոր դու անդիտանալ անդիտանաս .
Արդեամբք ցուցից քեզ զիրաւունս , ոչ վայրապար ինչ խօսեցեալ .
Գիտեա զի ոչ ատեայ զհրզորն այն որ եւ ինքն իսկ է հրզոր . (1)
Այլ զամպարիշարն մերժէ , տայ իրաւունքս տրկարին .
Ոչ արկանէ զակն յարդարոյ , այլ թագ ի գլուխ բարձր ի դահոյս
Ընդ թագաւորս ըզնոսս նրատուցանէ փառաւորեալ .
Որ թէ կապեալք ապա տոռամբք տընանկութեան վարակեցին , (2)
Յուցցէ նոցա ըզարիս՝ յոր զօրութեամբն զառածան ,
Եւ խրատեցէ ըզնոսս դառնալ անդրէն ի զգօնութիւն :
Եթէ լուիցեն նրմա , կեցցեն լըցեալ զաւուրս ի բարութեան .
Այլ ոչ եւ զչարրս կեցուցէ , զի չկամեցան գիտել ըզնա ,
Զի խրատեալ եւ անլըսօլք եղեն նրմա հետք ի խրատուց .
Կեղծաւորք սըրտիւք դըրդեալ ըզբարկութիւն աստուածասաստ ,
Եւ անկեալ ի կապանս՝ ոչ ամբարձին զաչս ի յերկինս .
Սատակամահք վանն այնորիկ լիցին հարեալք ի հրեշտակաց ,
Փոխանակ զի բրունացան նեղել զանդորն եւ զասկիար .
Այլ իրաւունս հեղոյ հանցէ , եւ զերծուցէ զքեզ յանդրնդոյ ,
Ոյր տարածումն ի ներքոյ ընդարձակեալ վիճ անյատակ :
Եւ բազմեցիս ի սեղան քո անդրէն լի սլարարտութեամբ .
Մի իրաւունք քո սուղցին . սաստ ի վերայ ամպարըշտաց ,
Որ թիւրեն կաշառակուրծք զարդարութիւն եւ զիրաւունս :

(1) Ի խոնարհել Տեառն յաճախ զհրզորս՝ իբր ոչ եթէ ատեայ զնոսս , այլ անխը
տիր ընդ տկարս դատի զնոսս անաշտապէս :
(2) Ակնարկէ բանիւքս , այլ յանիրաւի , յարկածս Յորայ՝ իբր առ 'ի յորդորել
զնա 'ի դարձ :

Մի գբեղ ի թիւր դատաստան ճղգեսցեն միտք կամակորեալ
Ի հեծել արկարին, ի հըզօրին վաշ վաշ կարգալ.
Մի ի յանդէճըս արխուրս երկայնեսցես քեզ ըզգիշեր,
Թէ այլք յազգաց զն՝ գնայցեն զօրութենէ ի զօրութիւն.
Կասիր ի խորհըրդոց՝ յոր գբեղ արկածք զառանցուցին. (1)
Քանզի հըզօր է Տէր, եւ չիք ոք զօրաւոր իբրեւ ըզնա.
Ո՞քբննեսցէ զգործըս նորա ասել թէ թիւր է զոր գործեաց.
Յիշեա զի գործք նորա անհապք օրհնաբանեալ են յարդարոց,
Եւ համայնից ակներեւ, թէպէտ եւ միտք մարդոց մուայլեալ.
Զօրութիւն նորա սաստիկ է եւ մըտաց գեր ի վերոյ.
Անըսկիզբն, եւ թիւ ամաց նորա անեղը եւ անըսպառ:
Թըւեալ նրմա են շիթք ցօղոյ, թըւեալ նրմա շիթք անձրեւաց.
Իջուցանէ ուղիս ի յամպոյ, գնան ընդ երկիր գետահեռեալ.
Հովանեցոյց զամպս ի վերայ ամբաւ մարդկան, ած մէգ զերկրաւ,
Ժամանակ եդ անանոց, գխտեն զօրէնս եւ զկարգ ճնրնդեան:
Ո՞չ զարմանան միտք քո ընդ այն, ո՞չ սասանի սիրտ քո ի քեզ,
Ընդ մեծամեծըս զոր արար, որոց հասու խակ գոլ չկարես:
Հրաման տայ ձեան ծածկել զերկիր, շնչոյ հալել զայն հարաւոյ,
Եւ ձմերայնոց անձրեւաց ձուլել ի խիստ սառամանի.
Զի ծանիցէ մարդ կընքեալ հաւաստեօք զիւր արկարութիւն:
Տարածանէ խորանաձեւ յորժամ կամի զամպըս զիւրեւ.
Ահ ի վերուստ ընդ շանթիս փայլատակեալ յըղէ ի ստոր.
Պատեն ամպրոտք թըլփայտողք ըզծիր ծովու ծայրածաւալ:
Այսպէս դատի նա զմարդիկ, այսպէս խնամէ զազգ եւ զազինս.
Ծածկէ զարեւ ի ձեռին, հրաման անդրէն տայ ծաղեւոյ.
Եւ զնրմանէ սատմէ արեւ իբր յանմատոց բնակեալ ի լոյս,
Եւ սիրեւեաց իւրոց իբր առնէ ի լոյս անդր հասանել:

ԳԼՈՒԽ ԼԷ

Եղիտա 'ի սրակցի գործոցն Աստուծոյ խնամատարեալ զար-
դարոշրիւն նորա և զանքիսն դատաստանս, զորս համարի ար-
համարիւեալ 'ի Յորայ, յորդորե գնա խոնարհել ընդ հզօր ձեռամբ
նորա:

Վասն այսորիկ սիրտ իմ խռովեալ ի տեղոջէ իւրմէ ծորեաց,
Լուր արդ ըզլուր Բարձրելոյն եւ ըզլըճիւ աստուածասաստ.

(1) Համարի գՅոր անկեալ արկածիւքն 'ի թերահաւատութիւն զաստուածա-
խնամ տեսչութենէ:

Բարբառ ըզհետ նորա սրանայ որոտընդոստ ի գոչիւն, (1)
Ըզհոյլս էից ներգործեալ հրաշակերաից անքըննելեաց •
Հրաման տայ ձեան ծածկել զերկիր, շնչոյ հալել զայն հարաւոյ,
Եւ ձմերայնոյ անձրեւաց ձուլել ի խիստ սառամանի •
Ձի ծանիցէ մարդ կընքեալ հաւաստեօք զիւր արկարութիւն :
Մըտին գաղանք ի դադարս եւ ի խըշախ իւրեանց զօղեալ •
Ի համբարոց երկնից ցօղք, ի հիւսիսոյ ելանէ ցուրտ •
Եւ ի շնչել հըզօրին սրաղեալ ձուլին սառամանիք :
Յեղեղու զջուրս որակէս եւ ուր կամի, եւ ամսք տեղան զանձրեւ •
Պատեն ամսարուք մըուայք զերկին, եւ գնան ուր ինքըն դարձուցէ,
Եթէ ի խրատ, եթէ յերկիւղ, եթէ ի բերս անդաստանաց :
Ունկըն դիր Յօբ, անկ ճն ակն ի հրաշակերտըս Բարձրելոյն •
Գիտիցէս ըզգնացս ամսոց՝ իբր ի մըթան փայլատակեալ
Շանթս ի յերկիր արձակեն յահարկութիւն չարագործաց •
Եւ իբր ի շունչ հարաւոյ ջերմ ի տամուկ ձորձք քո նամեալ : (2)
Ընդ նրմա թերեւս էիր ի հաստատել զերկնից կամարս,
Հաստեալ կայունս ըզնոսս իբր ըզգործած սրղընձաձոյլ •
Այլ աղէ դու ուստ ինձ զինչ սարտ եւ արժան իցէ ասել,
Եւ լըռեալ ի բաղումըս խօսելոյ՝ դադարեցից •
Մի թէ մատեան կամ դըսիր կայցէ առ իս արձանագրել
Ըզհրաշս էից համագոյից ի սրասանձումն ամսարըշտաց •
Ոչ իսկ բնաւից տեսանելի է ըսս, եւ ոչ բոյլք աստեղաց •
Ոչ համհարզիւք իւրովք ընդ ամսըս փայլածուն մօլորական •
Եւ ոչ ամս ոսկեձաձանչ լուսածագեալ ի հիւսիսոյ :
Ոչ ի վերայ այսոցիկ յայանին նորա փառք ակներեւ •
Ո՞ հըզօր իբրեւ ըզնա, ո՞ քան ըզնա արդարագատ •
Յերեսաց նորա ապա երկիցեն աղքէ եւ աղինք,
Ձահի հարցին ի նմանէ եւ որ կարծեալքն են իմաստունք : (3)

(1) Բարբառ արարածոցն Աստուծոյ, որք սրտունն զփառս նորա :
(2) Իմա զբրանել մարդկան ՚ի հարաւաշունչ հողմոյ :
(3) Յորդորէ բանիւքս զՅօբ երկնչել ՚ի Տեառնէ, և երկրապղել արդար դա-
տաստանացն նորա, որոյ գործք ՚ի վեր են քան զմիտս իմաստնագունից իսկ ՚ի
մարդկանէ :

ԳԼՈՒԽ ԼԸ

Ստորաւ ինքնին 'ի վեճ անոր 'ի մեջ մտնալ՝ շեցուցանէ զԵ-
ղիսիազ , և զՅոր յանդիմանէ վասն հետագօտերոյ ևորս զգաղա-
նիս ևսխախնաւնոշրեան իշրոյ , ցուցանելով 'ի գործոց իշրոց
անհասանելի զգօրոշրիւն իշր և զխնատոշրիւն :

Յետ դադարելոյ Եղիսուայ 'ի խօսելոյ , ասէ Տէր ցՅոր 'ի մըրկէ
և յամուոյ .

Ո՞ է դա , որ ըզխորհուրդս իմ յանդըգնի հետադօտել .
Պընդեա ըզմէջ քո իբրեւ այր , հարցից եւ տուր սլատասխանի .
Ո՞ւր էիր յորժամ հիմունա արկանէի ես երկրի ,
Աղէ դու ճն , սլատմեա ինձ՝ թէ խեղամուտ ես հանձարոյ .
Ո՞ եդ ըզչափ դորին , կամ ո՞վ արկ է վերայ դորին լար .
Յէր վերայ աղիք դորին յեցեալ , ո՞ զվէմն անկեան էարկ է դմա .
Յորժամ աստեղք եղեն ցիւք ընդ խորանարդ երկնից սրփուեալ ,
Օրհնեցին զիս մեծաձայն հրեշտակք իմ սլար առեալ զինեւ :
Փակեցի դըրամքք ըզծով զալիս նորս սանձակոծեալ ,
Մինչ հանդոյն իմն է յարդանդէ մօր ելանէր գայր նա է լոյս .
Եդի նրմա զմէգ է հանդերձ եւ զմառախուղ է խանձարուրս ,
Եդի սահմանըս նրմա , եդի փախանս աղիս եւ դըրուես .
Ասացի ցայդ վայր եկեսցես , մի այտի անգր անցանիցես ,
Այլ անդրէն է քեզ ալիք քո ամեհիք խորտակեցին :
Եթէ առ քեւ կարգեցի զլոյս արփիասկիզբն առաւօտին ,
Եւ առ քեւ ինչ արուսեակն ետես ըզուահ իւր երկնաճեմ .
Քեւ ինչ սարսեն բեւեռք երկրի է բաց զանկրօնըս թօթափել .
Կամ թէ քո՞ առեալ ըզկաւ ստեղծեր նովաւ խօսուն ըզմարդ ,
Կամ կարիցես վերըստին մերժել ըզլոյս յամպարըշտաց ,
Եւ ըզբազուկս հետաւելոց ամբարտաւանըս խորտակել :
Հասեալ իցես յակըն ծովու , շըրջեալ ընդ հետս անդընդոց .
Բանայցեն առ ոտըս քո զահի հարեալ դըրուեք մահու .
Սարսիցեն է տեսանեն ըզքեզ սահակք անդընդեհակաք :
Խեղամուտ լայնութեան առ է ներքոյ երկնիցս իցես ,
Աղէ սլատմեա դու ինձ ըզչափ դորին , գողջիր սրչափ իցէ .
Զինչ երկիր իցէ ուր լոյսն ագանիցի , զինչ ուր խաւար .
Տար է սահմանըս զիս նոցին , թէ հմուտ շաւղաց իցես նոցուն .
Գիտիցես իակ թերեւս , հասակակից իցես նոցին ,
Ընդ այն աւուրըս ծընեալ , եւ յոգն աւուրց քոց իցէ թիւ .

Երթեալ իցես ի շտեմարանն ձեան, երթեալ ի գանձ կարկախի,
Ուր համբարեալ կան ինձ ընդդէմ թըշնամեաց յօր պատերազմի:
Ուստի եղեամն ելանէ, ուստի 'նդ երկնաւ սրբոյի հարաւ.
Ո՞ր ըզսաստիկ անձրեւաց տեղատարափըս պատրաստեալ,
Տեղեալ զամպրոսպս ի յերկիր յանմարդաբնակ եւ յանջըրդի,
Արբուցանել զերէզ անկոխ, բուսուցանել ըզդեղ դալար:
Ո՞ է հայր անձրեւի, ո՞ է որ ծնաւ ըզլաղ ցօղոյ.
Յոյր արգանդէ ելանէ սառն, եւ ո՞ երկնեաց զեղեամն յերկինս,
Որ ծորեալ իբրեւ ըզջուր, կարծրասլընդի իբրեւ ըզվէմ:
Խելամուտ իցես կարգի արփիաճեմ բազմաստեղաց.
Քո՞ զպատրուակ հայկին ի վեր առեալ ածեալ զայն ի տեսիլ.
Դո՞ւ զարուսեակրն բանայցես ծագել յուրում ժամանակի,
Դո՞ւ՝ զգիշերավարն ի լոյս նըսեմ երեկորին:
Գիտիցես ըզլըրջանակս երկնից եւ ինչ որ ընդ երկնաւ.
Կոչիցես զամպս, եւ ամպք ահիւ լուիցեն քեզ տալ տեղատարափ.
Արձակիցես շանթս ընդ երկին, եւ յակնարկել քո շանթք գնայցեն,
Եւ ասիցեն ցըքեզ թէ զինչ տաս հրաման, աւասիկ կամք:
Ո՞վ ետ կանանց իմաստութիւն ոստայնանկել նոցա զբեհեզ.
Ո՞վ ետ նոցին հանձար առնել ասղամբ կիտուած նըկարակերս:
Ո՞ թուէ զամպս իմաստութեամբ, յարկէ զերկինն զերկրաւ,
Հեղու փոշի զնովաւ եւ արամ իբրեւ ըզվէմ հաստէ գեալին:
Որսայցես դու առիւծուց ճարակ կորեանցն ի յագեցումն (1)
Ըզկայ ի յորջս առեալ ինքեանց կամ ի մայրիս դարանակալ.
Ազուաւուց սեւաթորմից ո՞ ինամարկեալ տայ կերակուր,
Ի կարգալ ձագուցն առ Տէր շուրջ ի կըրկիս մուրրեւոյ:

ԳԼՈՒԽ ԼԹ.

Յոչցանէ Տէր Յորայ զխնամն տեսչութեան իւրոյ 'ի վերայ այ-
լոց ևս կենդանեաց, առ 'ի նոյն յակնարկանքիւն. որով խոնար-
կեալ խոստովանի Յոր՝ անգիտացեալ և յակնորէն խօսեցեալ:

Գիտիցես ըզժամանակ ծնընդեան յամուրց ի քարանձաւս.
Թուիցես զամիսս ըզսաղմնառիկ եղանց զերկունսն լուծանել.
Խնամարկիցես մանկանց նոցա մինչ ի ստեանց մարցըն քեց եւ մոցք
Գնայցեն յարօտս ի ճարակ, եւ այլ ոչ եւրս դառնայցեն:

(1) Աստանօր և 'ի յանդիմանել անդ սփոփէ Աստուած զՅոր, ցուցանելով
զհայրօրէն խնամն իւր և 'ի վերայ մրգուզ կենդանեաց, զի և ոչ զնոցին անտես
առնէ զպէտս, այլ նոցին իսկ լսէ ձայնի աղաչանացն:

Ո՞ր զցիւ արձակ ի կապանաց եթող շրջել ազատացեալ,
Եղեալ սահման եւեթ նրմա ըզվայր անկոխ եւ անմարդի .
Արհամարհէ նա ծաղր առնէ ըզբազմամբոխ քաղաքաց ,
Եւ հեռի ի ձայնէ հարկահանաց խրնդրէ արօտ ,
Գէտ ընդ հետըս գալարւոյ շուրջ թափառեալ ճարակաւոր :
Առ մըսուր քոյին կալցի՞ յանձին հանգչել միեզերուն ,
Կամ՝ ծառայել քեզ ընդ լըծով , ձրդել զակօս քո ի դաշտի .
Հաւատայցես ի զօրութիւն նորա զարարս եւ զվարուցան .
Հատուցանել ըզսերմանիս քո ամփոփել ըզկալ քոյին :
Քէւ ինչ ջայլեամբն թեւածեալ որպէս զասիգն եւ զՆէեաս , (1)
Յըրուէ ըզձուս իւր ընդ երկիր ջեռուցանել զայն ըզհողով .
Եւ ուր ցըրուեացըն մուսցեալ՝ աներկեւան եւ աներկիւլ
Ի կոխան գազանաց անսպառի թողու զնոսս ,
Ուժացեալ յորդւոյ իւրոյ որպէս թէ ոչ առ ի յիւրմէ .
Զի ոչ արւաւ նրմա հանձար , չետ նրմա Տէր իմաստութիւն .
Սակայն ճախր ընդ օդս առեալ շուրջանակի եկեալ ի հիւ ,
Ծաղր առնէ զերիվարաւ , ծաղր ըզնովաւ եւ զհեծելով :
Դո՞ւ զխրրիսինջ ետուր ձիոյ եւ ագուցեր իւր զօրութիւն ,
Եղիր ահ ի սարանոց նորա , եւ զնացրս սօս ի ճեմ .
Փառքս լանջաց նորա դո՞ւ արկեր ըզխրոխտ յանդըզնութիւն ,
Զի որոտայ ի դաշտի եւ վըրնջելով դափր հասանէ .
Զի ելանէ զօրութեամբ գիմագրաւեալ ի սպտերազմ ,
Անլէհեր ի ճարձատել նեախց , անգարձ ի յերկաթոյ :
Շողան աղեղն եւ սուսեր , շկահէ զնովաւ աէդ ընդ վահան ,
Ինքն անհանգարտ խիզախէ մինչեւ ուրեմն հարկանի փող .
Եւ իբրեւ փող հարկանիցի , վաշ վաշ կարդայ վազս առնելով
Եւ փուրնչելով ի հեռուստ առեալ ըզհոտ սպտերազմի :
Քոյով իմաստութեամբ եկաց բազէ թեւատարած
Դիտել անշարժ ընդ հարաւ առ ի զգէնուլ նորափետուր , (2)
Կամ ի քուսմէ՞ հրամանէ սլանայ արծուի բարձրաթրուիչ ,
Եւ անգլ ի բոյն իւր բարձրաբերձ ըզկայ առեալ գազարիցէ
Ի քարանձաւքս վիմաց եւ յանմատոյց ի քարաժայռս .
Ի հեռուստ անտի դիտեն աչք իւր զաւար կորովաբիբք ,
Հասանէ գիշախանձ , եւ արեամբ ձագք իւր թաթաւին .
Զի ուր գէշ ուրեք իցէ , անդրր դառնին վաղվաղակի :

(1) Մերս թարգման ընդ ջայլեման դնէ Նէեղաս , թերեւ համանշանակ . այլ ստորագրութիւն թռչնոյս՝ ջայլեման է , որպէս ունի և լատինն :

(2) Թռչունքս այսոքիկ , բազէ , արծուի և անգլ , ի ժամանակի փոխելոյ զփե-տուրսն՝ կան թեւատարած ՚ի հարաւ ընդ Շնիկ աստեղը . որպէս զի ՚ի շնչմանէ հա-րաւային հողմոյ վտառք մորթոյն ընդլայնեալ , դիւրաւ զհին փետուրսն թա-փեալ նորափետուր զարգարեացին :

Եւ պատասխանի եւ տէր Աստուած Յորայ և ասէ .

Ո՞ր զգատաստան իմ թիւրեւ, յանդիմանեւ զիս կարիցէ :

Կրկնեալ անգրէն Յորայ ասէ ցՏէր .

Զի՞նչ եւս ասել իցէ ինձ աստուածաստ յանդիմանեալ .
Զի ես ոչինչ եմ եւ ի քէն լըսեմ զըրոյց այդպիսի .
Զի՞նչ տաց առ այդ պատասխանի, բայց եթէ դու ամի ի բերան .
Միանգամ խօսեցայ, եւ այլ ոչ եւրս յաւելից :

ԳԼՈՒԽ Խ

Դարձեալ մերստին յայտ առևե Տէր Յորայ զամենակող զօ-
րոշրիւն իշր, և կարագրելով զձիագետի և զվիշապ կետն Լևիարան
առ ՚ի պատմանն ցորցանել զնա :

Դարձեալ կրկնեալ Տեառն յամպոյն ասէ ցՅոր .

Ոչ այդպէս, այլ արի, պընդեա ըզմէջ քո իբրեւ այր .
Հարցից եւ տուր պատասխանի, մի զգատաստան իմ զընկենուր,
Եւ մի այլազգ ինչ յայանութիւն համարիցիս քեզ արարեալ .
Մի թէ բազուկ առ բազուկ իցէ քո Տեառն զօրութեանց,
Եթէ բարբառ հանգոյն նըմին որոտայցէս ասէզագոչ .
Արդ աղէ ան բարձրութիւն, ան զօրութիւն թէ կարիցես .
Ըզգեցիր փառս եւ պատիւ, հրեշտակք ի սաստ քո երթիցեն
Խոնարհել զամբարտաւանս եւ զյանդըզունս ակընկորել .
Բարձ զամպարիշտս առ հասարակ յերկրէ, ի խորս անկ անդընդոյ,
Եւ զլիշատակըս նոցա ծածկեսցիր, լից անարգանօք .
Յայնժամ ծանեայց զի հըզօր է ի փըրկել աջ քո ըզքեզ :
Ան ի գազանն անկ անհեթեթ որ իբր արջառ ճարակի խոտ .
Զօրութիւն նորա զմիջով իւրով եւ ոյժ իւր ըզպօրաիւ .
Կանգնէ զտըտուն իւր իբր ըզնոճ, ջիւք իւր պատեալ կուս զերերօք .
Ողըն նորա իբրեւ ըզձոյլ երկաթոյ, կողք իւր պըզընձիք :
Հըզօրագոյն ի կենդանիս ըզնա հրամանն արարչական
Կացոյց ի սկիզբն արարածոյ, այլ խաղալիկ է հրեշտակաց .
Նըմա լըրինք մատուցանեն ճարակ, եւ հոյք չորքոտանեաց (1)

(1) Զի երկակենցաղ է ձիագետի, և սիրէ առ գետովք և յեղտիւրս կալ ՚ի հս-
վանուջ, և ախորժէ ըմպել պղտոր, որպէս զի զջուր ականակիտ պղտորել նախ
ոտամբ և ապա ըմպել :

Պար ըզնովաւ առեալ խայտան, նրնջէ նոյ ծառովք ազգի ազգի,
 Բերկրի յեղտիւրս առ սրբառուով առ եղեգամբ եւ առ կնիւնով: (1)
 Հովանի առնեն նրմա ծառք անտառի եւ ձողք հագնոյ:
 Յանձնապատաստան է, չէ ինչ փոյթ նրմա հեղեղ թէ լինիցի,
 Թէ Յորդանան ի վերայ նորա դիմեալ գայ սպառնալից,
 Յակնակապիճս իւր ընկալցի ըզնա ի ճեմ իւր անյողգողգ,
 Սակայն շնորհեալ քեզ ըզնորին ծակել ուրնդունա եւ նրւաճել:
 Կարիցես ըզվիչասն ի վեր առնուլ կարթիւ յալեաց,
 Եւ գնել սախուրց նրմա զցրուով, կապել ի քիթ նորա անուր,
 Եւ ընդ կրզակրս նորա անցուցանել դանգանաւանդ,
 Խօսիցի նա հեզութեամբ ընդ քեզ, եւ գողար ի բարբառ,
 Արկցէ ազերս գնելոյ ընդ քեզ ուխտ ի յաւէրժ ծառայութիւն,
 Խաղայցես դու նովաւ իբրեւ հաւու, եւ կապեսցես
 Ըզնա կապով իբրեւ ըզձադ, իւ կերակրին ազնիք նովաւ,
 Եւ զոր ազգք Փիւնիկեցւոց բաշխեն յիւրեանա առեալ աւար:
 Ոչ զօրեսցէ նաւալուղակ թեփ ի արանոյ նորին բառնալ,
 Եւ ոչ ըզխալամ նորա ի նաւ ձըկնորսական,
 Արկ ձեռն ի բուռն ըզնա ածել, այլ յուշ լիցի քեզ մարան ահեղ,
 Եւ զյանդըգնեալսն թէ տեսեր, ոչ ընդ սրատգամս իմ զարմասցիս:

Գ Լ Ո Ւ Խ Խ Ս

Կատարե զնկարագիր վիշապ ձկանն, և լռեցուցանե զՅովբ:

Զանդխտիցես սպարաատեալ եւ ինձ անտի ճակատամարտ,
 Ո՞վ իցէ որ ինձ ընդդէմ դարձեալ եւ ոչ կորընչիցի,
 Իմ է որ կանս առ ի ներքոյ երկնից, եւ ոչ ինչ ի յէլից,
 Թէսէտ հըզօր, ի հրամանաց իմոց ի բաց ապարթանէ:
 Ո՞ զսպարըւակ նորին մերկեալ՝ մըտցէ ընդ աղխրս սպառնիցն,
 Եւ զերեսաց նորա ո՞ բացցէ ըզգրուեսն փեռեկեալ,
 Շուրջ զատամամբք նորա ահ, փոր իւր վահան սրղընձակուռ,
 Անթափանցք օդոյ զերդ վէմ գայլախաղ յօդք իւր ամբախտը,
 Մի ըզմիոյ կընի կըցեալ կուռ ի միմեանց անմեկնելի:
 Ի փուրնչելոյ իւրմէ ջրացայտ փայլատակունք հատանին: (2)
 Աչք իւր լուսափայլ իւր ըզտեսիլ արուսեկի:

(1) Կէսք 'ի մեկնչաց յարմարեն 'ի փիղ զնկարագրութիւնս զայս, այլ ինչ ինչ 'ի
 սմա անյարմար սպատահեն 'ի փիղ, ևս առաւել տողս այս, և որ զհետ սորին խի-
 գախել ընդդէմ հոսանաց զետոյ:
 (2) Փռնչել կիտի իմա բղիտել ընդ անգունան 'ի վեր ուղիսօրէն ջուր, զոր ամ-
 սրոպաց և փայլատականց և բոցոյ նմանեցուցանէ:

Ի բերանոյ նորա թափին ջահք բորբոքեալք բոցածաւալ,
 Թօթափին անկանին շանթիք հըրոյ ընդոստուցեալ,
 Ծուխ ընդ սընդունըս նորա իբր ի հնոցէ հրոյ ելանէ .
 Շունչ նորա փըքոցուռոյց ըզկայծակունս արծարծանէ,
 Եւ բոց ի շըրթանց նորա իբր ուղիս բըղխէ հրեղէն .
 Այժ ի յուլան նորա բնակէ, սով առաջի իւր ընթանայ :
 Ամրակուռ ընդ իրեարս անգամք մարմնոյ նորա մածեալ,
 Եւ ոչ դըրդուին ի բարկածայթ շանթից ի սաստ ամպահարեալ .
 Զի սիրտ նորա իբրեւ ըզվէմ, իբրեւ ըզսալ դարբնաց անոստ .
 Ի խըրաեւ նորա սարսեն նրհանգք ծովու ահաբեկեալ,
 Գազանք երկրի զահի հարեալ, զարհուրին հոյք չորքոտանեաց :
 Ոչ ըստնանեն նրմա արդունք, ոչ զէնք նիղակք թէ պատահեն .
 Արհամարհէ, համարի յարդ զերկաթ եւ փուռ փայտ ըզպըզինձ .
 Չերգիծանէ ի զբահամորթ նորա աղեղն սըղընձի .
 Համարի խոտ ըզսըմբաքար, եւ եղեգունս հաշուէ զուռունս .
 Ծաղր անէ ըզսուսերօք, մահիճք նրմա տէգք սայրասուրք :
 Խորասուզէ ոսկի ամբաւ ի խորս ալեաց իբրեւ ըզկաւ . (1)
 Խռովէ ըզխորըս ծովու եռացուցեալ իբր ըզկաթսայ .
 Համարի զծով որսէս ոչինչ, որսէս գերի մի զտարտարոս .
 Զանդունդս համատարած համարեցաւ իւր ճեմէլի .
 Չիք ինչ յերկրի նրման նրմա, չիք ի ծովու հանդոյն նրմին .
 Այլ այսբանեաց հրաշից գործօն, իշխող բնաւից էից ընդ ծով,
 Արարեալ է հրեշտակաց խնոց ի դոյզն ինչ խաղալիկ :

ԳԼՈՒԽ ԽԲ

Խոստովանի Յոք գյակեղզնուշիւն բանից իւրոց, զմեղանս յանձն առեալ :

Արկնեալ անդրէն Յոբայ ասէ ցՏէր .

Այո կարես դու զամենայն, եւ տկարանայ ինչ ոչ ի քէն .
 Եւ ո՞ զխորհուրդըս քոյնն ի միտ առցէ հետազօտեալ .
 Խօսեցայ որ ինչ ոչնն գիտէի, բարբառեցայ
 Զորոց չէի խելամուռ . արդ լուր ինձ, Տէր, եւ ուստ զիս :
 Լքսէի զքէն ի լուր ունկան, աչք իմ այժմիկ տեսին ըզքեզ . (2)
 Խոսեցի զանձն եւ հալեցայ, գիտեմ զի հոյ եմ եւ մոխիր :

(1) Այսինքն մըրիկ յարուցեալ ընդ ծով, և ընկղմեալ զնաւս ակաղձունս ոսկւով :

(2) Աստ ուրեմն լուսաւորեալ Յոբ յերկնառատ շնորհաց, ի խորս խոնարհուածեան խնդրէ իւր սփոփանս :

Եւ եղև յեւ խօսելոյ Տեառն զբանս զայստսիկ ընդ Յորայ, ասէ Տէր
 ցեղիփազ թեմնացի • Մեղար դու, և երկոքին բարեկամք քո (1), զի
 ոչ խօսեցարուք առաջի իմ ճշմարիտ, և ոչ ինչ իբրև զճառայ իմ
 զՅոր: Բայց արդ առէք զուարակս եօթն և խոյս եօթն, և երթայք
 առ ծառայ իմ Յոր, և արասցէ ողջակէզս վասն ձեր • և Յոր ծառայ
 իմ արասցէ աղօթս վասն ձեր: Զի թէ ոչ նմա ակն առեալ էր, և
 եթէ ոչ վասն նորա էր, կորուսեալ էր իմ արդեօք զձեզ • զի ոչ խօ-
 սեցարուք ճշմարտութիւն զճառայէ իմմէ զՅորայ: Եւ գնաց Եղիփազ
 թեմնացի և Բաղգատ սաւքեցի և Սովփար մինեցի, և արարին որպէս
 հրամայեաց նոցա Տէր, և ելոյժ զմեզս նոցա վասն Յորայ: Եւ Տէր ա-
 ճեցոյց զՅոր • և յառնել նորա աղօթս ՚ի վերայ բարեկամացն՝ եթող
 զմեզս նոցա: Եւ ետ Տէր կրկին քան որչափ ինչ էրն յառաջագոյն Յո-
 բայ ՚ի յաճախութիւն: Եւ լուան ամենայն եղբարք նորա և քորք նո-
 րա զամենայն անցսն՝ որ անցին ընդ նա, և եկին առ նա, և ամենեքին՝
 ոյք յառաջագոյն գիտէին զնա: Աերան և արբին առ նմա, և մխիթա-
 րեցին զնա, և զարմացան ՚ի վերայ ամենայնի՝ զոր ած ՚ի վերայ նորա
 Տէր • և ետուն նմա իւրաքանչիւր մէն մի որոջ, և չորեքդրամեան մի
 ոսկի անգիր: Եւ Տէր օրհնեաց զվերջինն Յորայ քան զառաջինն • և
 էին խաշինք նորա՝ ոչխարք բիւր և չորեքհազար, ուղտք վեց հազարք,
 լուծք եզանց հազար, էջք մատակք արօտականք հազար: Եւ ծնան
 նմա ուստերք եօթն, և դստերք երեք: Եւ կոչեաց զառաջինն Տիւ (2),
 և զերկրորդն Վասիա, և զերրորդն Ամաղթեղջիւր: Եւ ոչ գտան հա-
 մեմատ դստերացն Յորայ ազնուագոյնք ՚ի ներքոյ երկնից • և ետ նոցա
 ժառանգութիւն ընդ եղբարս իւրեանց: Եւ եկեաց Յոր յեւ հա-
 րուածոցն՝ ամս հարիւր և եօթանասուն • և ամենայն ամք զոր եկեաց՝
 երկերիւր քառասուն և ութ • և ետես Յոր զորդիս իւր, և զորդիս որ
 դուց իւրոց, ազգ չորրորդ: Եւ վախճանեցաւ Յոր ծերացեալ և լցեալ
 աւուրքք • և գրեալ է նմա յառնել ընդ որս Տէր յարուցանէ (3):

Սա թարգմանի յասորի գրոց • բնակէր յերկրին Աւստայ, ՚ի սահ-
 մանս եգովմայեցւոց և արաբացւոց: Յառաջ էր անուն նորա Յորաբ •

(1) Ոչ յանդիմանէ Տէր զԵղիփուս ընդ այլ երեսին բարեկամս Յորայ, թեպէտ և
 ոչինչ ընդհատ ՚ի նոցանէ յանցեալ և նա ՚ի զրպարտել զարդարն: Քանզի Եղիփուս
 կրտսերագոյն քան զնոսա աիովք, և իբր արբանեակ իշխանաւորացն երեցունց,
 համարի և նա յանդիմանեալ ընդ նոսին ՚ի Տեառնէ: Եւ առ Եղիփազ ուղղէ Տէր
 զյանդիմանութիւնն, զի և ՚ի բանից աստի գրոցս յայտ է՝ զի էր նա երիցագոյն
 հասակաւ, իշխանութեամբ և իմաստութեամբ, վասն որոյ և առաւել յանցաւոր:

(2) Զանուանց դստերացն Յորայ ասէ սուրբն Գրիգոր Նիւսացի, իմանալ Տուրն-
 ջեամբն զպարկեշտութիւն և զանմեղութիւն, որպէս առաքեալն որդիս տուրնջեան
 կոչէ զանմեղս և զանարատս վարուք • Աասիայիւ զսրբութիւն, որ հոտ անոյշ
 Քրիստոսի է • և Ամաղթեղջերք զազգս ազգս առաքինութեանց: Ամաղթեղջիւր
 նշանակէ երբայեցերէն եղջիւր ծարրոյ, այսինքն անօթ՝ յորում պահէին կա-
 նայք զանգոյր, շպարել նովաւ • ըստ այսմ՝ նշանակէ անօթ գեղոյ:

(3) Յաւելուածս այս յարութեան, որ ոչ յամենայն թարգմանութիւնս գտանի,
 հաստատէ որ ինչ ՚ի յառաջբանի անդ գրոցս ասացաք, զի յանդգնութիւն է
 կեղծիս ինչ զպատմութիւն և զանձն Յորայ համարել:

և առեալ կին արարացի, ծնաւ որդի՝ որում անուն էր Ննուլ: Եւ էր
հայր նորա Չարեհ, որդի որդւոյն Եսաւայ. և մայր նորա բոսորացի.
որպէս զի լինել նմա հինգերորդ յԱբրահամէ: Եւ այս են թագաւորք,
որ թագաւորեցին յԵգոմ. առաջին Բաղակ Բէովայ, և անուն քա-
ղաքի նորա Գենաբայ. յետ Բաղակայ Յորաբ, որ կոչեցաւ Յոր. յետ
նորա Ասուլմ, որ էր զօրավար յերկրին թեմնացւոց. յետ նորա Ագադ
որդի Բարադայ, որ կոսորեաց զՄադիամ՝ ի դաշտին Մովաբայ. և
անուն քաղաքի նորա Գէթեմ: Եւ որ եկին առ նա բարեկամքն, Եղի-
փաղ՝ յորդւոցն Եսաւայ, արքայ թեմնացւոց, Բաղլասա բնաւոր
սաւքեցւոց, Սովիար արքայ մինեցւոց (1):

(1) Յետինս այս յօդուած ՚ի մերս և ՚ի յոյն և և թ բնագրի գրոցս գտանի յաւե-
լեալ և ՚ի սրբոց Հարց ընկալեալ այլ ոչ ընդ սուրբ զիրս:

« Ազգային գրադարան



NL0243644

